

ԷԶՄԻԱԾԻՆ



1964

ՌՆԺԴ
ԻԱՏԱՐԻ

Օգոստոս - Նոյեմբեր


ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ը-Թ

1964





Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	Էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանին արժույթյան պատիվ շնորհելու մասին	6
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Անթիքի Կաթողիկոսության միջև փոխանակված պաշտոնական գրություններ	8
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Կյանքի և խաղաղության ուխտը	19
Խաղաղության պաշտպանության համաշխարհային համաֆրիստոնենական երկրորդ կոնգրեսը Պրագայում	22
Մ Ա Ց Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ	25
Հ. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ— Հայկական արժարագործության արվեստի զոհարը	28
Կ. ԱՔԳԱՐՅԱՆ— Նորայր Բյուզանդացու անախպ երկերը	35
ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵՆՅԱՆ— Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը	41
Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Ղազար Փարպեցու կենսագրության մի փանի հարցերի շուրջը	47
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՆԵՒՔԻՑ	53
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	56
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Անթիքի Կաթողիկոսության միջև փոխանակված պաշտոնական գրություններ	64


**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱՊՐԻԼՅԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՐՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՈՒՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՒ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ**

ԶՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐԶԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԷԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԶԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ՇՆՈՐՀՐԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ԶԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

**«Ի մահ համարեալ էին,
և մահք իւրեանց՝ անշուշտ կեանք»:
ԵՂԻՇԷ**

Մեր հինաւորց ազգի պատմութիւնը կենդանի յուշարձան մըն է, մարդկային
աշխարհի հորիզոնին վրայ բարձրացող, շաղախուած ու մարմին առած նահատակ-
ներու արիւնով, բարիին ու գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով և սե-
փական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով, այն օրէն մանա-
ւանդ, երբ Աւետարանի լոյսը իջաւ ի Հայաստան աշխարհ: Զրիստոսի Աւետարա-
նով հայ ժողովուրդը հաւատաց կեանքին, հաւատաց լոյսին ու շինարար աշխա-
տանքին, և հաւատաց, թէ «սէր ոչ երբեք անկանի» (Ա. Կորնթ. ԺԳ. 8): Եւ այսպէս
ահա բացաւ ան դռները իր հոգիի ուժերուն, դռները լաւիտենական կեանքին:

Հայոց պատմութեան ազգային դարաշրջանը սկիզբ առաւ հինգերորդ դարուն,
հայ տառերու գիտով և Աւարայրի հերոսամարտով:

Աւարայրը լրումը եղաւ հայ ժողովուրդի ոգեկան ուժերու արգասաւորման ու
պայծառ արտայայտութիւնը ազգային ինքնագիտակցութեան, և միաժամանակ
սկիզբը մեր բուն ազգային պատմութեան, որ իր դրոշմը դրաւ լետագայ բոլոր դա-
րերուն վրայ: Վարդանանց և Ղևոնդեանց նահատակութիւնը դարձաւ մեր ժողո-
վուրդի ճակատագիրը: Եւ այդ օրէն ի վեր, ամբողջ հազար և հինգ հարիւր տարի-
ներ շարունակ, մեր նախնիք նոյն հերոսական մարտը շարունակեցին «վասն Յի-

սուսի, վասն հայրենեաց», նոյն «վի բարձրացի կողմն ճշմարտութեան» ոգիով, միշտ մահը մահով լաղթելու հաւատքով:

Այդ արիւնոտ, բայց ազնիւ փառքի ճամբուն վրայ, հայ ժողովուրդի պատմութիւնը արձանագրեց իր վերջին մեծ նահատակութիւնը, յիսուն տարիներ առաջ:

Այսօր, մեր սրտերը ծով վշտով լեցուն, հոգեկան ծանր ապրումներով կ'ոգեկոչենք յիշատակը այն ահաւոր ողբերգութեան, որ սկիզբ առաւ 1915-ի ապրիլ 24-ին և տևեց ամբողջ հինգ տարի, բնաջինջ ընելով Արևմտեան Հայաստանի համայն հայութիւնը սարսափելի տառապանքներու մէջ, կալամակերպուած ու գործադրուած սուլթանական Թուրքիոյ ցեղասպան կառավարութեան կողմէ: Նահատակութեան մօտ երկու միլիոն հայեր: Հրկիպութեան ու քարութանդ-եղան բազմահարկը շէն քաղաքներ և գիւղեր, եկեղեցիներ ու վանքեր, շատերը պատմական հոյակերտ կոթողներ հայ ճարտարապետական հանճարի: «Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի, և սուրբ քահանայք մեր խողխողեցան ի ձեռաց անօրինաց, գեղեցիկ երիտասարդքն զենան ի սպանումն, և բազում կուսանք վարեցան ի գերութիւն, գիրգ կանայք անկան ի տառապանս այրութեան և բազում որբք կականին դառնապէս», և «շինուածք մեր եղեն գերեզմանք դիականց մերոց, և վաստակք ձեռաց մերոց տապալեցան ի վերայ մեր» (Եղիշէ): Այդ սև օրերուն եկած էր պահ մը, երբ «այս աշխարհի վրայ այլևս անհնար էր հայ ըլլալ»: Ամէն լոյս կորսուած կը թուէր և հայոց պատմութեան գիրքը՝ փակուած ու արեան մէջ թառուած:

Բայց ո՛վ անիմանալի խորհուրդ մահուան և կեանքի, և ո՛վ հրաշագործ ոգի հայոց պատմութեան:

Նահատակուած էր ամբողջ ժողովուրդ մը, այո՛, սակայն հայերը չէին մեռած ի սպառ, վասնզի անոնք զոհուել էին հաւատքով ամուր, թէ «կենանք Բրիտոս է և մեռանել՝ շահ» (Փրկիպ. Ա 21): Անոնք «որպէս սկսան քաջութեամբ, նովին և կատարեցին զհանդէս նահատակութեան, լի երկնաւոր սիրովն, և արտափայլեցին իբրև վարեգակն ի մէջ տիեզերաց, որոց և անուանք նոցա գրեալ են ի դպրութեան կենաց» (Յովհ. Դրասխանակերտցի):

Ինչպէս Վարդանանց հերոսամարտի օրերուն և այնուհետև դարեր շարունակ, մահը լաղթող հայոց պատմութեան ոգին անգամ մը ևս պատմեց վարագոյրը անողորմ ճակատագրին ու կեանքի կոչեց մնացորդացը մեր նահատակուած ազգին: «Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով» աղիացած հայ ժողովուրդը, հապար հինգ հարիւր տարիներ յետոյ, Կարմիր Վարդանին մեծ աւետիս տուաւ՝ Սարդարաբադով:

Եւ ահա քառասուն և աւելի տարիներէ ի վեր, հայ ժողովուրդի մայր պանդուածը, մէկտեղուած իր նախնեաց մայր հողի վրայ, իր հայրենի հարապատ կառավարութեան հովանիին ներքև, եղբայրական ժողովուրդներու կողքին, իր երջանիկ ապագան կը կերտէ՝ ապահովութեան, խաղաղութեան և լաւաջղիմութեան աննախընթաց պայմաններու մէջ: Իսկ ի սփիւռս աշխարհի ցրուած պանդուխտ հայերը, իրենց աչքերը լառած դէպի վերաշինուող ու ծաղկող Մայր Հայրենիքը, լազեցած կեանքի նոր ափնով և ոգեշնչուած ազնիւ հպարտութեամբ ու վառ տեսիլքներով դէպի հայոց ապագան, կ'երազեն օր մը վերադառնալ յաւերժական Արարատին, իրենց հայաստանցի ըլլալուն և եղբայրներուն մօտ, իրենց տընութեան բաժինը ընծայ բերելու ամենայն հայոց Մայր Հայրենիքին:

Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է լաղթութեան բրաբիոնով ու նոր կեանքի լուսաբացով և վերածնած է մեր հինաւորեց երկիրը Հայաստան, իբրև ազգային պետութիւն:

Հայ ժողովուրդի պաւակները, որ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, այսօր, մեծ եղեռնէն յիսուն տարի յետոյ, երկիւղածութեամբ կը խոնարհին բիւրաւոր նահատակներու անյայտ գերեզմաններուն առջև ու կ'աղօթեն անոնց ամմահ հոգիներու խաղաղութեան և երանութեան համար: Եւ կը վերանորոգեն իրենց ուխտը՝ սուրբ պահելու անոնց նուիրական յիշատակը ու մնալու հաւատարիմ անոնց լոյս հաւատքին, անոնց հերոսական ոգիին, հայոց ազգը մէկտեղուած և հայոց ամբողջ երկիրը փրկուած տեսնելու անոնց պայծառ եղաւիս:

«Պանծա՛յք դուք ընդ հայրենասիրութեան ձեր, նորոգեցէք ապա պիշատակս նախնեաց» (Ալիշան):

Այսօր, բոլոր հայերուն համար, ուր որ ալ գտնուին անոնք, աղօթքի օր է նաև մեր ժողովուրդի խաղաղ վարճացման ու բարօրութեան համար, մեր նորա-

կերտ հայրենի երկրի անսասանության ու շինության համար, ապրող ու շնչող և լույսի մէջ աճող Մայր Հայաստանի համար:

Մեր նահատակները մեռան ապրելու լուսով և հայ հայրենիքի վերածնունդի տեսլքով:

Այսօր, բոլորիս համար աղօթքի օր է նաև համայն աշխարհի խաղաղության և ժողովուրդներու իրաւ եղբայրության համար, որպէսզի այլևս երբե՛ք աշխարհի երեսին ոչ մէկ տեղ արիւն չհոսի: և մարդիկ սուր չքաշեն իրենց նմաններուն վրայ: Թող խաղաղութիւն ըլլայ աշխարհի բոլոր սահմաններուն վրայ և բոլոր մարդոց սրտերէն ներս: Թող «ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեցին» (Սաղմ. 27, 14):

Մենք, Հայրապետ Ամենայն Հայոց, մեր ազգի պատմության մեծ ողբերգության լիսնամեայ տարեկիցի սեմին, այսու Մեր կոնդակաւ, կ'առաջադրենք ու կը հրահանգենք՝

ա. որ լառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին և համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի և աղօթքի տարի:

բ. որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ և հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիրաւոր նահատակներու հոգւոց խաղաղության և լուսաւորման համար:

գ. որ բոլոր հայ եկեղեցիներուն մէջ, Ս. Սեդանի մը առջև, պետեղուին մշտապաւ կանթեղներ, նուիրուած հայ նահատակներու յիշատակին: Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մշտապաւ կանթեղ մը պիտի պետեղուի քրիստոնէության առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի սեղանի վերև, ուր և այսուհետև պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին:

դ. որ բոլոր հայ եկեղեցական համայնքներուն և գաղութներուն մէջ, Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքև, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կապմակերպուին համազգային յուշի և յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարուեստական նիստեր հայ և այլազգի հասարակութեանց համար, նուիրուած Ապրիլյան եղեռնին:

ե. որ հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային-հասարակական կապմակերպութիւնները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկութիւնները և հայ մամուլը իրենց սեպուհ պարտքը համարեն խօսքով ու գործով ոգեկոչելու նուիրական յիշատակը մեծ եղեռնի տարիներուն մարտիրոսացած հայ ժողովուրդին, հայ հոգևորականներուն և գրական-հասարակական մեծանուն գործիչներուն, հրապարակելով հայ և այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը և գրական-գեղարուեստական գործերը:

Թող բարեգութն Աստուած, լաւերծական փառքի մէջ, հանգիստ և խաղաղութիւն պարգևէ մեր ազգի նահատակ վաւակներու մաքուր և անմեղ հոգիներուն և իր պահապան Աջը տարածեալ պահէ հայ ժողովուրդի և հայրենիքի վրայ, որպէսզի անոնք լաւերծ ապրին ու աճին և միշտ բարձրանան, աշխարհին ընծայաբերած իրենց արդար վաստակով:

Թող ապրի լաւետ հայ ազգը համայն, որպէսզի շատնայ լոյսը աշխարհի:

«Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեցին: Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեցին» (Մատթ. Ե 4, 6):

Արա Գևորգի

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-17-ն օգոստոսի

1964 Փրկչական ամի.

և ի տումարիս Հայոց ՌՆԺԴ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՊԱՏՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՊԱՏԵԱՆ,
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ,
ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ՀԱՐԱՋԱՏԻ, ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐԶԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Աստուծոյ օրհնութեամբ, մեր սուրբ հաւատքի հինաւորց ամրոցը, Հայաստանեայց Եկեղեցին, այսօր ալ կանգուն է, այսօր ալ ամրակուռ և լուսաշող, և Ս. Հոգւոյ առաջնորդութեամբ իր նուիրական առաքելութիւնը կը շարունակէ հայ հաւատաւոր ժողովուրդի կեանքին մէջ, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Հայ Եկեղեցին իր այս առաքելութիւնը կը կատարէ և պիտի շարունակէ կատարել, ինչքան ատեն որ հայ ժողովուրդը արժանի մնայ աստուածային ողորմութեան, և ինչքան ատեն որ Տէրը մեր Եկեղեցիին ու ապօրին պարգևէ իրենց կոչումին հաւատարիմ ու նուիրեալ սպասաւորներ:

Թէև մեր օրերուն «հունձք բազում են և մշակք սակաւ», սակայն ունինք նաև մշակներ՝ ճշմարտապէս արի և «առանց ամօթոյ», որոնք սուրբ զգացումներով ներշնչուած, իրենց կենդանի խօսքով ու իրենց կենդանի գործերով վառ կը պահեն հաւատքի լոյսը մեր ժողովուրդի հոգիներուն մէջ, օր աւուր առաւել շէնցնելով և պայծառ դարձնելով մեր Ս. Եկեղեցին:

Դուք, սիրելի՛ Բաբգեն սրբապան, մեր օրերու հայ հոգևորականության ընտրեալներէն մին էք, մտքով ու հոգիով արթուն և Ձեր գործերով փայլուն: Երկար տարիներ Երուսաղէմայ Սրբոց Յակոբեանց Առաքելական Ս. Աթոռին ծառայելէ յետոյ՝ Կինուրեալի հոգիով և անդու աշխատանքով, ահա բազմաթիւ տարիներէ ի վեր Ձեր գործունեութեամբ կ'ուրախացնէք Մեզ, իբրև հայրապետական պատուիրակ Հարաւային Ամերիկայի հայոց: Գիտենք, թէ Դուք կը սիրէք Ձեր ժողովուրդը, գիտենք, թէ Ձեր ժողովուրդն ալ զՁեզ կը սիրէ: Ձեր սէրը և Ձեր ժողովուրդի սէրը միատեղ կ'աճին, միասին կը փառաւորուին: Այո, Ձեր ոգեկան իրաւ յաղթանակն է, սիրելի՛ սրբապան: Այդպէս է, որ Դուք յաջողութենէ յաջողութիւն կը բարձրանաք մեր եկեղեցական կեանքին մէջ ահա քսանհինգ տարիներէ ի վեր: Կը շնորհաւորենք Ձեզ և Ձեր պայծառ ճակատին կը դրոշմենք Մեր հայրական սիրոյ համբոյրը: Թող Աստուած Ձեզ պահպանէ քաջառողջ, և միշտ լուսաւորէ Ձեր ճամբան: Նոյն հաւատքով, նոյն իմաստութեամբ, նոյն նուիրումով դէպի հայ ժողովուրդը և Հայ եկեղեցին, և նոյն հաւատարմութեամբ դէպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, աղօթեցէ՛ք և Վորացէ՛ք, աշխատեցէ՛ք և բարձրացէ՛ք, բաշխուեցէ՛ք և հարստացէ՛ք:

Ի գնահատումն Ձեր քսանհինգամեայ հոգևոր նուիրեալ ծառայութեան և Ձեր առաջնորդական յոյժ գովելի գործունէութեան ի Հարաւային Ամերիկայ, Մենք սոյն հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք արքութեան պատիւ, մաղթելով, որ Տէրը Ձեզի շնորհէ կենաց երկար տարիներ, որպէսզի Դուք շարունակէք Ձեր նուիրական առաքելութիւնը մինչև խոր ծերութիւն:

«Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան՝ և սիրոյ՝ և զգաստութեան» (Բ Տիմ. Ա 6—8):

Ս. Էջմիածնէն և Մեր սրտէն Ձեզի սիրոյ ողջո՛յն և օրհնութիւն:

Ս. Էջմիածնէն և Մեր սրտէն սիրոյ ողջո՛յն և օրհնութիւն նաև Ձեր հաւատացեալ ժողովուրդին, Մեր հարազատ վաւականներուն որ ի Արժանտին, Բրազիլիա, Ուրուգուայ, Զիլի և Վենեսուելա:

Թող Աստուած զՁեզ բոլորդ պահէ, պահպանէ ի խաղաղութիւն իր սուրբ հովանիին ներքև, այժմ և յաւիտեան:

Ամէն:

Կապույտ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 27-ն յունիսի

1964 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:





ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մեր բովանդակ ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, անհուն երախտագիտությամբ, սրտագին զոհունակությամբ և սիրով ողջունեցին Երուսաղեմի երջանիկ հանդիպումը անցյալ հոկտեմբերի 26-ին:

Երուսաղեմի ողջագուրումը բացառիկ և կարևոր իրադարձություն էր Հայ Եկեղեցու կյանքում, մեր ազգային-եկեղեցական համերաշխության ոգին և համագործակցության բնական, կանոնական ընթացքը վերականգնելու տեսակետից:

Սակայն Երուսաղեմի եկեղեցաշեն ողջագուրումի ոգու կենսագործման ճանապարհի վրա երևան եկան մի շարք դժվարություններ, որոնք ոչ ցանկալի և ոչ էլ սպասելի էին:

Ստեղծված այդ դժվարությունները հարթելու համար, ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վերջին մի քանի ամիսների ընթացքում, Մեծի Տանն Կիլիկիո Հոռնակարդ Նորեն Ա Կաթողիկոսին ուղղած իր մի շարք նամակներով, աշխատում է վերացնել ստեղծված այդ դժվարություններն ու թյուրիմացությունները, ի պահպանումն հոկտեմբեր 26-ի հաշտության և միասնության ոգու:

Ստորև հրապարակում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Անթիլիասի Կաթողիկոսության միջև փոխանակված նամակները այն հաստատ համոզմամբ, որ դրանց բովանդակությունը հանրության սեփականությունը դարձնելով և լուսաբանելով մեր ժողովրդին, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունն էլ մի բանով նպաստած կլինի

միասնության և համերաշխության գործին, համրապնդումն Երուսաղեմի ողջագուրման ոգու:

Խմբագրությունս, իր հերթին, ելնելով մեր Եկեղեցու և ազգի հիմնական և տևական շահերից, խորապես գիտակցում է, որ Երուսաղեմի ողջագուրումը ճիշտ էր, անհրաժեշտ էր և տեղին, իբրև իսկապես եկեղեցաշեն գործ:

Ոչ մի դեպքում չպետք է զղջալ ողջագուրման համար: Եվ այդ իսկ պատճառով, պետք է ամեն միջոց փորձել և պայքարել, որպեսզի պահպանվի այդ շինարար, փրկարար ոգին, սակայն ոչ միայն խոսքով, այլ մանավանդ կենդանի գործով:

Մենք հոգևին հավատում ենք ազգիս Վեհափառ Հայրապետի Կահիրեում, 1963 թվականի նոյեմբերի 13-ի շատ հատկանշական հայտարարության: Նորին Ս. Օծությունը, խոսելով հոկտեմբեր 26-ի ողջագուրման ոգին սրբությամբ և աչքի լույսի պես անաղարտ և ամբողջ պահելու անհրաժեշտության մասին, շեշտում էր արդարորեն. «Եվ Մենք կխորհինք, որ եթե պատահի նույնիսկ, որ մենք՝ հոգևորականներս տկարանանք պահ մը, մեր ժողովուրդը պիտի պարտադրե մեզի իր կամքը և պիտի չլուրջատրե, որ մենք իրարմե բաժնվինք»:

Ահա այս ոգով էլ առաջնորդված, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը հրապարակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի Աթոռի միջև վերջին ամիսներին փոխանակված գրությունները, ի պահմանություն և համրապնդումն Երուսաղեմի ողջագուրման ոգու:

Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Շնորհապարդ Եղբայր.

Անցյալ փետրվար 21-ին, անսպասելի կերպով ստացանք բողոք-հեռագիրը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսայի առաջնորդ Տ. Մերովբե արքեպիսկոպոսի, որով Մեզի կհաղորդվեր, թե մոտալուտ է Մարսիլիա ժամանումը Ձեր Աթոռի միաբան Տ. Արտավազդ եպիսկոպոսի, առաջնորդի հանձնաժողով: Սույն անօրինական պարագան նստուգելու և կանխելու մտածումով, Մենք նույն ժամ, փետրվար 21-ին, հեռագրեցինք Ձերդ Սրբության, սպասելով Ձեր պատասխանին:

Փետրվար 22-ին բողոքի հեռագիր ստացանք, նաև Մարսիլիո հայ եկեղեցական իշխանությանց կողմն, որով կհաստատվեր Տ. Արտավազդ եպիսկոպոսի ժամանումը Մարսիլիա: Տ. Մերովբե արքեպիսկոպոսն ստացանք նույնիմաստ հեռագիր մը ևս 28 փետրվարին, իսկ երկու օր առաջ՝ մանրամասն լեկուցագիր մը, 4 ժամարտ թվակիր:

Ձեզի ուղղած Մեր հեռագրին պատասխանը ստացանք, սակայն փետրվար 26-ին Մեզի հասավ Ձեր 12 փետրվար 1964 թվակիր գրությունը, որով կհայտնեք Մեզի ի գիտություն, թե 11 փետրվարին Մարսիլիա ճանապարհած եք Տ. Արտավազդ եպիսկոպոս Թրթռյանը իբրև թեմավար առաջնորդ, զՄեզ դնելով պարզապես կատարված իրողության մը առջև:

Ի տես այս անսպասելի կացության, Մեր առաջին պգացումը եղավ վարմանք և հիասթափություն: Որոշեցինք Ձեզի անմիջապես գրել, հայտնելու Ձեզի Մեր վիշտը, և կոչ ընելու Ձեզի, որ հեղինակավոր վճիռով մը սրբագրեք կատարված սխալը, արգիլեք նոր ոտնձգությունը և առաջըն առնեք նոր պառակտումի մը: Սակայն չկրցանք գրել: Ի՞նչ գրեինք Ձերդ Սրբության: Գրեի՞նք, թե Տ. Արտավազդ եպիսկոպոս առաքումը Մարսիլիա հակակառնական է և խախտում նվիրապետական Աթոռներու իրավասությանց սահմաններուն, թե ո՛չ Մենք, ո՛չ Տ. Մերովբե արքեպիսկոպոս որևէ համաձայնություն չենք տված և տեղյակ իսկ չենք եղած այդ մասին: Գրեի՞նք, թե Ձեր այս որոշումը գլուխ գլխի կկտրվի Երուսաղեմի մեր ողջագուրումի ոգիին հետ, և նման գործելակերպ նոր իրաւ կբանալ եկեղեցականությանց և ներքին խռովությանց Ֆրանսահայ և առհասարակ սփյուռքահայ կյանքի մեջ: Գրեի՞նք, թե այս չէ այն, ինչ կսպասեք հայ ժողովուրդը հոկտեմբեր 26-էն հետո:

Բայց հարկ կա՞ր որ Մենք այս բոլորի մասին գրեինք Ձեզի, քանի որ Ձերդ Սրբությունը քաջ գիտե այդ ամենը:

Էջմիածնական թեմի մը նկատմամբ Ձեր վերջին այս որոշումով Դուք զՄեզ կդնեք կացության մը առջև, զոր Մենք բնավ չէինք սպասեք:

Մենք անկեղծորեն հավատացինք, թե Մեր ողջագուրումով վերջ գտած պետք է ըլլային նման երևույթներ և գործելակերպեր: Ժիշտ է, որ Երուսաղեմի մեր ողջագուրումը առանց պայմանի եղավ, սակայն պարզ է, որ այդ ողջագուրումը կոչված էր ինք պայման հանդիսանալու մեր եկեղեցական կյանքի միասնության և խաղաղության, և Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի միջև օրինական եղբայրական հարաբերություններու վերականգնման, այսինքն իրական հաշտության: Եթե պիտի չհարգվին մեր եկեղեցական դադավոր կանոնները նվիրապետական Աթոռներու իրավասությանց վերաբերյալ, եթե պիտի շարունակվին ոտնձգությունները Ս. Էջմիածնի թեմերեն ներս, եթե պիտի շարունակվին մեր եկեղեցական համայնքները երկփեղկելու աշխատանքները և պիտի ստեղծվին խռովությանց ու ներքին պայքարներու նոր առիթներ, այլևս ինչպե՞ս կրնանք խոսիլ միության, եղբայրության և հաշտության մասին:

Ողջագուրումի հաջորդ օրը, Երուսաղեմի մեջ, Մենք Ձերդ Սրբության շատ հստակ և մասնավոր կարևորությամբ խոսեցանք այն մասին, թե հանուն մեր եկեղեցիի ու ազգի գերագույն և տևական շահերուն, պետք է վերջ գտնե սփյուռքի հայ եկեղեցիները և թեմերը Ս. Էջմիածնեն բաժանելու ծրագիրը, և ավելցուցինք, թե հակառակ պարագային, Մայր Աթոռը պարտավորված կըլլա ինքնապաշտպանության դիմելու, որովհետև անհնար բան է, որ Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոս մը կամովին հրաժարին իրենց պատմական առաքելութենեն և իրենց գոյության իմաստեն: Եվ տակավին ըսինք Մենք Ձեզի, որ եթե նման կացություն ստեղծվի ողջագուրումն հետո և նոր պայքար պարտադրվի Մայր Աթոռիս, Մենք, Մեր գիտակցության և հոգեկան ուժերու բովանդակ թափով, Մեր պարտքը պիտի կատարենք և պիտի պաշտպանենք Հայ եկեղեցվո և ժողովուրդի միության և անբաժանելիության սկզբունքը, պիտի պաշտպանենք հավերժական Ս. Էջմիածնի հավերժական շահերը, և վստահ եղեք, թե այդ պարագային Մեր կողքին պիտի գտնվի համայն հայ ժողովուրդը անխտիր:

Դուք լարված ուշադրությամբ լսեցիք Մեզ և Մեր խոսքերը նոթագրեցիք Ձեր կարմիր մելանով: Եվ Մենք կատակով ըսինք Ձեզի՝ «խորեն Եղբայր, լավ է, որ գրի առիք այս ըսածներս»:

Դուք այս հարցի վերաբերյալ Մեզի պատասխանեցիք. «Այդպիսի ծրագիր չէ եղած և չկա. այսուհետև ամեն բան խաղաղությամբ կկարգադրվի և առկախ մնացած հարցերը նստակցությամբ հետզհետե կլուծենք: Վստահություն ունեցեք իմ վրա»: Մենք Մեր գոհունակությունը

հայտնեցինք և այս հարցի վերաբերյալ Մեր խրատակությունը փակվեցավ:

Այսօր, Մարտիկո մեջ կատարված ոտնձգությունը Մեր առաջ կոչն նույն հարցը՝ Ս. Էջմիածնի Սփյուռքի հայ եկեղեցիները բաժանելու ծրագիրը և անոր գործադրությունը Կիլիկյան Ս. Աթոռի միջոցով: Եվ կրկին Մեր խնդիրն է և Աթոռի միջոցով: Եվ կրկին Մեր խնդիրն է և Մեր ջերմագին մաղթանքը, որ այդ եկեղեցաբանդ և ազգավնաս մտածումը վերջ գտնե: Մեղք է մեր եկեղեցիին, արտասահմանի մեր տառապյալ ազգին, մեր հավատացյալ ու հայրենասեր ժողովուրդին: Հայ եկեղեցին Ս. Էջմիածնով է վավերական Առաքելական եկեղեցի, Սփյուռքի հայությունը Մայր Հայրենիքով է ազդություն: Կիլիկյան Ձեր Աթոռը ինքը ծնունդն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և իր իսկությունը և իր պատմական կոչումը պիտի կարողանա պահպանել Ս. Էջմիածնով, Փրկչի՝ Իջման տեղեն բաշխվող աստվածային շնորհներով և օրհնություններով:

Հեռուն նայեցեք, ժամանակի լայն հորիզոնին վրա: Մի՛ մտածեք միայն այսօրվան մասին:

Պատմության դժբախտ բերումով ցիրուցան եղած է մեր ժողովուրդը և այսօր մեր առջև դրված մեծ հարցն է՝ Սփյուռքի հայության ամբողջ ու կենդանի պահպանումը, որով և կենսական է դարձած միացյալ ուժերով և համերաշխությամբ մտածելու և գործելու անհրաժեշտությունը: Մեր ողջագուրումը նոր հորիզոն կրնա բանալ ոչ միայն Էջմիածին—Անթիլիաս պատմական սիրալիրությունը և համագործակցությունը վերականգնելու տեսակետեն, այլ նաև հայապահպանման նվիրական աշխատանքը առավել արդյունավետությամբ կազմակերպելու և պարզացնելու տեսակետեն, ներքին միասնության և խաղաղության պայմաններու ստեղծումով արտասահմանի հայ գաղութներուն մեջ:

Մենք քաջ գիտենք, որ արտասահման ապրող հայության մեջ գաղափարական-կուսակցական հակամարտություններ կան, բռնք մեր ժողովուրդը կբաժնեն խմբավորումներու և հատվածներու: Մենք, հոգևորականներս, լավ հասկնալով այս իրադրության անխուսափելիությունը, և այդ իսկ պատճառով, մեր առավելագույնը պետք է ընենք, որպեսզի եկեղեցական-կրթական-մշակութային կյանքի չեզոք գետնի վրա պահպանվի մեր ժողովուրդի զավակներու միասնությունը և գործակցությունը:

Առանց հակադրվելու ոչ մեկ կուսակցության, առանց բաղաբանական որևէ վերաբերմունք որդեգրելու մեկին կամ մյուսին հանդեպ, մենք պետք է գիտնանք ուրույն կեցվածք ունենալ և ճանապարհ մը բանալ հոգևոր-ազգային մտահոգություններով առաջնորդված, ապահովելով բոլոր կենդանի ուժերու մեկտեղումը և զույակցությունը եկեղեցիին հովանիին ներքև և անոր շուրջ: Մենք կգիտակցինք, թե այս Մեր մտա-

ծումը մեկ անգամեն դժվար է հաջողցնել, սակայն եթե մենք հետևողական մնանք և վճռական ու իմաստուն կերպով վարենք մեր գործը, ժողովուրդը շուտով մեզ կհասկնա և լավ կհասկնա: Եթե ուղիղ և հանգիստ դատենք, իրող, ինչու հնարավոր չըլլա իրականացնել այս վիճակը: Ստույգ է, թե արտերկրի մեր ամբողջ ժողովուրդը անխտիր այս իղձը ունի այսօր ավելի քան երբեք: Մենք այդ պահինք բացահայտ կերպով մանավանդ Եգիպտոսի մեջ, երբ այցելեցինք կուսակցական հոսանքներու հավաքավայրերը: Ամեն հարկի տակ նույն հայ ժողովուրդն էր նույն հոգիով, նույն իղձերով, եկեղեցիի, ազգի և Մայր Հայրենիքի նույն սիրով տոգորված, և բոլորը, բոլորն անխտիր, նույն հավատքով և կամեցողությամբ տոգորված էին, որ սրբությամբ պահպանվի Երուսաղեմի Մեր ողջագուրումի ոգին, որ սրբությամբ պահպանվի և հաստատվի բոլոր հայերու մեջ եղբայրությունը, միասնությունը և եկեղեցական-ազգային կյանքի խաղաղությունը:

Եթե այս է ամեն տեղ մեր ժողովուրդի ճշմարիտ հոգեվիճակը, եթե այս է մեր ժողովուրդի ամենաջերմ իղձը, եթե այն կպահանջե Սփյուռքի հայության պահպանման մեր նվիրական նպատակը, եթե այս է մեր օրերու եկեղեցիի ու ազգի փրկության ուղին, ո՞վ պիտի կամենար ու կարողանար հակառակը մտածել, հակառակը գործել: Անգամ մը ևս կկրկնենք Մեր համոզումը, որ եթե մենք իմաստությամբ, անկեղծությամբ, հետևողականությամբ և վճռականությամբ կարողանանք պահպանել ու պորացնել ողջագուրումի ոգին ու կենսագործել վայն, մեր ամբողջ ժողովուրդի սիրույն և երախտագիտության կարժանանանք:

Մեր նվիրապետական Աթոռներու սիրալիր, սերտ գործակցությամբ, մեր դարավոր կանոններու և ավանդություններու պահպանումով, մեր իմաստուն և կազմակերպված, համերաշխ աշխատանքով, Հայաստանյայց եկեղեցին պիտի ղենք իր պատմական առաքելության ուղիղ ճանապարհին վրա:

Մենք ունինք շատ ավելի ծանրակշիռ հարցեր, այժմեական, այրող մտահոգություններ, սեպուհ պարտականություններ, մեր ժողովուրդի եկեղեցական-ազգային կյանքի ներկայի և ապագայի նկատմամբ: Մենք ամեն բան չենք կրնար ընել, սակայն շատ բան կրնանք, եթե կողք-կողքի մնանք, իրար հասկնանք և միասին մտածենք ու գործենք:

Եվ քանի որ մեր սիրտը բացինք Ձեր առաջ, հայտնենք նաև Մեր հուսալիաբությունը անցյալ դեկտեմբերին «Ամերիկայի ծայն»-ին Ձեր կատարած հայտարարության առնչությամբ, որուն մասին Մենք հուսովարի վերջերուն տեղեկացանք արտասահմանյան մամուլեն: Ձեր այդ հայտարարությունները Մեզ տխրեցուցին իրող:

Ձերո Սրբության հայտարարությանց որոշ մասերը, ինչպես և Ձեր պաշտոնաթերթը «Հասկ»-ի հոկտեմբեր—դեկտեմբեր 1963 միացյալ թիվի մեջ լույս տեսած Բ. Եղիայանի ստորագրությամբ հոդվածը եկան պարզապես ընդգծելու, թե վերջին լոթ տարիներու տազնապի պատասխանատուն իբր թե Մայր Աթոռն է եղած, և թե Վազգեն Կաթողիկոս ողջագուրումով այդ սխալը սրբագրած է: Եվ տակավին ի՞նչ տարօրինակ մտածումներ և դատումներ այդ հոդվածին մեջ: Եվ այդ բոլորը «Հասկ»-ի այն նույն հատորին մեջ, որ նվիրված է Երուսաղեմի Մեր ողջագուրումին: Կարդալով Ձեր հայտարարությունները և «Հասկ»-ի վերոհիշյալ հոդվածը, հավատացեք, կարծեք Մեր սիրտը պաղ երկաթի մը հիսումը պզգաց, և պահ մը բարոյական սարսուռի ալիք մը անցավ Մեր հոգիին մեջեն: Ուրեմն ողջագուրումն հետո, և ողջագուրումին նվիրված Ձեր պաշտոնաթերթին մեջ կխոսվի անցյալի Մեր «սխալներ»-ուն մասին, կմատնանշվին արդարացողներ և մեղադրյալներ, շահողներ և կորսնցողներ, հաղթողներ և պարտվածներ: Ձեզավ, չեզավ, սիրելի՛ Եղբայր: Մենք կկարծենք, թե ամենևին հարմար չէին նման դատումներ և արտահայտություններ, որոնք եկան հին վերքերը բորբոքելու և առիթ ստեղծելու նոր գայթակղությանց և վիճաբանությանց, հապիվ խաղաղած մեր ժողովուրդի ծոցին մեջ: Ինչո՞ւ ըլլային այս արտահայտությունները, քանի որ մեր ողջագուրումը հիմնված էր՝ նոր ոգիի մը վրա, անցյալը մոռնալու, արդար-մեղավոր, հաղթվող-պարտվող չփնտռելու գիտակցությամբ:

Մենք չենք կամենար այլևս անդրադառնալ անցյալին, ոչ որովհետև ըսելիք չունինք, այլ որովհետև այդ պիտի վնասեր Մեր ողջագուրումով ստեղծված բարի մթնոլորտին:

Այսօր, եթե իրոք ըսվելու արժանի բան մը կա, այդ միակ ըսվելիքն է՝ մոռնալ անցյալը և նայիլ դեպի ապագան փոխադարձ սիրով, վստահությամբ և լավատեսությամբ:

Հին դատումներու և փաստարկումներու ձեռքը, կամ անոնց հետքերը պահել և նոր արդարացումներ փնտռել հոկտեմբեր 26-ի ողջագուրումն հետո, կկարծենք, թե պարզապես ժամանակի կորուստ է, կվնասե ողջագուրումի ոգիի ամրապնդմանը և դուռ կբանա նոր վեճերու և կիրքերու հրահրման: Ուրախ ենք հաստատելու, թե խստագույն չափով Մենք հավատարիմ մնացինք ողջագուրումի ոգիին, թե Եգիպտոսի ու Հնդկաստանի մեջ և թե՛ Ս. Էջմիածնն Մեր բոլոր հայտարարությանց, քարոզներու և ճառերու մեջ: Ոչ մեկ շեղում թույլ տվինք Մեզի և Մեր շուրջիններուն: Երբ 13 հունվար 1964 թվականի նամակին մեջ հանգուցյալ Զարեհ Կաթողիկոսի տարելիցը նշելու կապակցությամբ, ի միջի այլոց կգրեիք Մեզի. «Կվստահենք Ձեզ, որ

Ձեր այս գրությունը ոչ միայն սփոփիչ դեր պիտի ունենա Մեր կսկծալից սրտին վրա, այլև օգտակար ազդեցություն պիտի ունենա սիրո ոգիին կորացման և անոր գործնականացումին մեր հավատացյալներու կյանքին մեջ»: Մենք ամբողջապես համաձայն գտնվեցանք Ձեզի հետ և նույն այդ գիտակցությամբ Ձեզի ուղղեցինք Մեր կոնդակը նվիրված հանգուցյալ Մեր Եղբոր բարի հիշատակին: Սակայն թույլ տվեք այժմ ըսելու Ձեզի, թե Ձերո Սրբության հայտարարությունները «Ամերիկայի ծայն»-ին և Ձեր պաշտոնաթերթին մեջ տպված վերոհիշյալ հոդվածը բնավ «օգտակար ազդեցություն» չունեցան «սիրո կորացման և անոր գործնականացումին մեր հավատացյալներու կյանքին մեջ»:

Եվ հետո, «Հասկ»-ի նույն հոկտեմբեր—դեկտեմբեր 1963 միացյալ թիվին մեջ Մեր ուշադրությունը գրավեցին Ձեր երկու կոնդակները, որոնց մեջ կհիշվի Ձեր անունը՝ իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց Կիլիկիո, տիտղոս մը, որ չէ պատկանած երբեք որևէ Կիլիկյան Կաթողիկոսի: Ի՞նչ կնշանակե այս «նորությունը», մեր ողջագուրումն անմիջապես հետո:

Բայց ահա այսօր ալ Մենք անշարժ կմնանք Երուսաղեմի մեր ողջագուրումի ոգիի վեմին վրա: Սիրելի՛ Եղբայր, վերադարձե՛ք այդ ոգիին, մի՛ հեռանաք Մեզմե, մի՛ բաժնվիք Ս. Էջմիածնեն: Երես մի՛ դարձնեք Մայր Հայրենիքին: Մենք Ձեր հարապատ Եղբայրն ենք, Ս. Էջմիածինը Ձեր ալ Տունն է, Հայաստանը Ձեր ալ երկիրն է: Մենք կսիրենք Ձեզ և կգնահատենք Ձեր Աթոռի առաքելությունը, որովհետև կսիրենք մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը: Դուք Մեր մրցակիցը չեք: Ձեր Աթոռը Ս. Էջմիածնի հակաթոռը չէ: Մեր և Ձեր հավատացյալները տարբեր ժողովուրդներ չեն: Մենք մեկ ազգ ենք, մեկ Եկեղեցի: Մենք մեկ պատմություն ունինք, մեկ հայրենիք, մեկ լեզու և մեկ մշակույթ: Մենք նույն ապագան ունինք և նույն աշխատանքը կտանինք նույն երազներով:

Մեր այս տողերը մի՛ նկատեք պաշտոնագիր և ոչ իսկ նամակ, այլ միայն Ձեզի ուղղված մտերիմ խոսք, ուր կարտահայտվին Մեր մտահոգությունները, Մեր հույսերն ու հույզերը: Մենք Ձեզի գրեցինք ճիշտ այնպես, ինչպես պիտի խոսեինք Ձեզի հետ մտերմաբար ու եղբայրաբար, բանալով Ձեր առջև Մեր սիրտը ամբողջ, առանց ոչինչ ծածկելու: Մեր մտածումին և խոսքին մեջ մի՛ փնտռեք դիվանագիտություն բառին ընթացիկ իմաստով: Լավագույն դիվանագիտությունը կնկատենք անկեղծությունը, գոնե հոգևորականի մը համար: Մենք այդ անկեղծությամբ առաջնորդվեցանք թե՛ Երուսաղեմի Մեր հանդիպումներու օրերուն, թե՛ Եգիպտոսի մեջ և այնուհետև, և թե՛ այս պահուս, երբ այս տողերը կհանձնենք այս բարի թուղթին:

Դառնանք վերստին Երուսաղեմի ոսկի օրե-

րուն, երբ Դուք և Մենք նույն տեսիլքներով ու ապրումներով ոգեշնչված, գրեթե նույն բառերով բազմաթիվ առիթներով հայտարարեցինք, ա. թե Մեր երկուրի ողջագուրումով վերջ գտավ այն անիմաստ ու վնասաբեր տագնապշ, որ բույն դրած էր մեր Եկեղեցիին ներս:

բ. թե վերահաստատվեցան միասնությունը և խաղաղությունը սփյուռքահայ եկեղեցական-ազգային կյանքին մեջ և նոր ճամբա բացվեցավ եղբայրական գործակցության մեր նվիրապետական Աթոռներուն միջև:

գ. թե անցյալը պիտի մոռնանք և մեր նոր կյանքի ճանապարհի վրա պիտի չփնտռենք շահող և կորսնցնող, մեղադրվող և արդարացող, հաղթող և պարտվող, որովհետև և՛ շահողը, և՛ հաղթողը մեր Ս. Եկեղեցին և մեր հարապատ ժողովուրդը եղան:

դ. թե Մենք, երկու Գահակալներս, փոխադարձ հասկացողությամբ եղբայրաբար տակավ պիտի լուծենք Մեր առաջ դրված հարցերը մեր եկեղեցական կանոններու և մեր ազգի շահերու լույսին տակ:

ե. թե ամեն ճիգ ի գործ պիտի դնենք, ամեն մեկս իր պայմաններուն մեջ, նպաստելու համար սփյուռքահայ կյանքի ընդհանուր համերաշխության և շինարար գործակցության, այդ ոգին տարածելով նաև բոլոր այն լուծերուն վրա, որոնք ՎՄԵԿ կըրջապատեն և որոնց հետ կոչված ենք աշխատակցելու Դուք և Մենք, ամեն մեկս Մեր կյանքի հատուկ պայմաններուն բերումով: Այս իմաստով Դուք մասնավոր կերպով խոսեցաք Մեզի Ձեր պարագայի մասին և հատուկ խոստումներ կատարեցիք այս ոգիով Ձեր ընկերի մասին:

զ. Վերջապես Մարսիլիո հարցի կապակցությամբ Ձերո՞ր Սրբությունը Եղիշե պատրիարքի միջոցով երկու անգամ խոստացավ Մեզի ոչ ոք ուղարկել այնտեղ Կիլիկյան միաբաններեն:

Արդ, Մենք կապանք Ձեզմե, որ այս բոլոր բարի տրամադրությունները և ցանկությունները, որոնք կընորոշեն Երուսաղեմի Մեր ողջագուրումի ոգին, անպայման հարթվին ու գործնապես կենսագործվին: Մարսիլիո պարագան տեսակ մը փորձաքար կհանդիսանա Մայր Աթոռիս և հանրային կարծիքի առաջ:

Կհաստատենք Մայր Աթոռիս դիվանի 9 մարտ թվակիր հայտարարությունը այդ մասին և կխնդրենք Ձերո՞ր Սրբությունեն, որ անհապաղ կերպով հարմարագույն ձևը գտնեք ուրիշ աշխատանքի կոչելու Տ. Արտավազդ եպիսկոպոսը, Կիլիկյան Աթոռի իրավասության սահմաններեն ներս:

Կրկին ու կրկին Ձերո՞ր Սրբության կուղղենք Մեր եղբայրական կոչը, հավատարիմ մնալու ամեն կերպով, բանիվ և գործով, Երուսաղեմի մեռ ողջագուրումի ոգիին: Ահա վերջին պահուն կուշենք Երուսաղեմեն վերադարձեն հետո Ձեր

արտասանած քարոզները և պատգամները Անթիլիասի Մայր Տաճարին մեջ և հետո Կիպրոսի մեջ: Ի՛նչ սքանչելի խոսած էիք և ինչքա՛ն հարապատ ողջագուրումի ոգիին: Սիրելի՛ և շնորհապարհ Եղբայր Մեր, եկե՛ք աչքի լույսի պես պահպանենք այդ հրաշագործ ոգին: Թույլ չտանք, որ Աստուծո այդ շնորհը հեռանա մեզմե և մեր Եկեղեցիին: Այլապես մեր բոլոր հույսերը կրնան շիջիլ, թողլով ՎՄԵԿ և արտերկրի հայ ժողովուրդը խավարի և կույր կիրքերու ալեկոծումներու մեջ: Երբե՛ք, երբե՛ք պիտի չկամենանք Մենք վերադարձը նման տխուր օրերու և ամուլ պայթարներու: Լոկ մտածումն իսկ Մեզի սարսուռ ու վարհուրանք կպատճառե:

Կույենք ՎՄԵԿ վստահեցնել, թե ինչ որ ալ ըլլա Ձեր պատասխանը, Մենք երբեք պիտի չողջանք Երուսաղեմի Մեր ողջագուրումին հանրա՛ր: Ձեր ժխտական պատասխանի պարագային խորապես պիտի վշտանանք միայն, որ կթաղեք Մեր ողջագուրումի ոգին և կստիպեք Մեզի համապատասխան վերաբերմունք ճշտել՝ ի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դարավոր իրավունքներուն և հայ հավատացյալ ժողովուրդի նվիրական իղձերուն և արդար կամքին:

Մենք հույս ունինք, թե Մարսիլիո հարցը շուտով կլուծեն Ձեր բարձր հեղինակությամբ, առանց որ Մենք կրկին ստիպված ըլլանք անդրադառնալու:

Նկատենք այդ վերջին փորձություն մը, Վոր Դուք և Մենք կարողացանք հաղթահարել ու բարձր և սուրբ պահել Երուսաղեմի Մեր ողջագուրումի փրկարար ու կենարար ոգին:

Ճշմարտապես ու եղբայրաբար սիրենք Վիրար, հարգենք Վիրար, օգնենք իրարու փոխադարձ վստահությամբ և լավատեսությամբ, «**զի մեք ոչ եթէ երկմտութեամբ ենք ի կորուստ, այլ հաւատովք ի փրկութիւն հոգւոց**» (Եբր. Ժ 39):

Վերջին պահուն ստացանք Ձեր փետրվար 24 թվակիր նամակը: Անկախ միջեկեղեցական հարցերեն, Մենք վերստին կկրկնենք Մեր 13 և 25 հունվար 1964-ի հրավերը և ջերմորեն կսպասենք, որ հառաջիկա մայիսին կամ հունիսին Ս. Էջմիածին ուղարկեք Ձեր կողմն նշանակված հատուկ պատվիրակություն մը:

«**Եւ ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս: Տէր ընդ ամենեմի ընդ ձեզ**» (Բ Թես. Գ 16—17):

Մենք խաղաղ հոգով կսպասենք Ձեր շուտափույթ պատասխանին:

Մնամք Ձերո՞ր Ս. Օծության աղոթակից Եղբայր՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

14 մարտ 1964

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

Վեհափառ Եղբայր ի Բրիստոս.

Այսու գրով կուպեհեք տեղեկացնել Ձերդ Վեհափառության, որ ընդառաջելով Հարավային Ֆրանսայի ազգային-կրոնական իշխանությանց կողմե քանիցս կատարված պաշտոնական դիմումներուն և կրկնված թախանձագին խնդրանքներուն, երեկ, Մեր արտոնությամբ, Մարսելյ մեկնեցավ Ս. Աթոռիս միաբաններեն գերաշնորհ Տ. Արտավազդ սրբապան եպիսկոպոս Թրթռյան, որ անցյալ տարվո սեպտեմբեր 7-ին առաջնորդ ընտրված էր Հարավային Ֆրանսայի հայոց թեմին:

Առաջնորդված Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո հոգևոր ու ազգային գերագույն շահերեն, հանձն առինք, ի զին մեծամեծ պոհողություններու, մեր միաբանության ամենեն կարևոր ուժերեն մեկը ուղարկել Մարսելյ, ուր մեր պատվական ու անվական հայ ժողովուրդը բազմաթիվ տարիներ ի վեր կարոտը և կարիքը կկգար նվիրյալ ու վարճացած, ժրագլուխ և գործունյա ֆրանսագետ երիտասարդ առաջնորդի մը:

Գերաշնորհ Տ. Արտավազդ սրբապան եպիսկոպոս իր աստվածաբանական բարձրագույն ուսումը ըրած է Institut catholique de Paris-ի մեջ: Բաջատեղյակ է ֆրանսերեն լեզվին, շատ մոտեն կճանչնա ֆրանսաֆայությունը և սիրված դեմք մըն է ամբողջ գաղութին կողմն: Վստահ ենք ու կհավատանք, որ անհաշվելի բարիքներ պիտի ծնին իր առաջնորդութենեն ի հոգևոր շինություն և ի բարգավաճումն Ֆրանսայի Հայ Եկեղեցվո և հայ գաղութին:

Արդարև, Վեհափառ Եղբայր, Կիլիկիո Կաթողիկոսության ու մանավանդ անոր դպրեվանքին համար մեծ պոհողություն մը եղավ Տ. Արտավազդ սրբապանին առաքումը ի Մարսելյ: Նորին սրբապետությունը մեր դպրեվանքեն ներս կավանդեր գրաբար լեզվի և հայ մատենագրության

նման կարևոր նյութեր: Բայց քանի որ Հայ Եկեղեցվո խնամքին ու հոգածության հանձնված մեր ժողովուրդը Ֆրանսայի մեջ անհրաժեշտորեն պետքը ուներ իր ծառայութեան, խղճի դեմ պիտի ըլլար չընդառաջել այն թախանձագին աղաչանքներուն ու խնդրանքներուն, որոնք Մեզի կհասնեին ձուլման և ապավայնացման ծանր սպառնալիքին ներքև հեծող ու տառապող մեր վավակներու հոգիներեն:

Լիահույս ենք, որ գերաշնորհ Տ. Արտավազդ սրբապան առատ արդյունավորությամբ պիտի շենցնե ու ծաղկեցնե Հարավային Ֆրանսայի հայոց թեմը ու իր սրտանվեր ծառայություններով մեծապես պիտի սատարե դեպի օտարացում գացող մեր երիտասարդ նորահաս սերունդին հայապահպանման անհետաձգելի ու նվիրական գործին, որ ամենեն կենսական պարտականությունն է մեր Եկեղեցիին, սփյուռքահայ ներկա խիստ դժվարին պայմաններու մեջ:

Մեր ի բոլոր սրտե աղոթքն է ու մաղթանքը միևնույն ժամանակ, որ Հարավային Ֆրանսայի մեր սիրեցյալ ժողովուրդը, իր պաշտոնական ժողովներովն ու ժողովականությամբը, պորավիզ կանգնի իր ջանասեր ու նորընտիր առաջնորդին, և ան լծվի շինարար ու խաղաղ աշխատանքի, ի պայծառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և ի բարօրություն ազգիս հայոց:

Թող բարձրալն Աստված պահե ու պահպանե մեր մի և անբաժան Ս. Եկեղեցին և հավատացյալ հայ ժողովուրդը ի խնամա մարդասիրության յուրո:

Մնամ եղբայրական սիրո ողջունիվ, աղօթակից՝

ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ
12 փետրվար 1964

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Վեհափառ Եղբայր ի Բրիստոս.

Շնորհակալությամբ ստացանք Ձերդ Սրբության 14 մարտ 1964 թվակիր ընդարձակ նամակը, որով Ձեր վրդովումը կհայտնեք Մեծի

Տանն Կիլիկիո Ս. Աթոռիս միաբան գերաշնորհ Տ. Արտավազդ սրբապան եպիսկոպոսի որպես առաջնորդ Հարավային Ֆրանսա առաքման համար:

Առաջին հերթին կուպեինք հայտնել Մեր պարմանքն ու սրտազգած ցավը այն ոգիին ու ձևին համար, որով մեկնաբանված տեսանք Մարսիլիո թեմը նոր առաջնորդով մը օժտվելու բարեբաստիկ պարագան: Մեր հասկացողությամբ և ակնկալությամբ, ուրախության առիթ մը պետք էր ըլլար բոլորիս համար հավասարապես Տ. Արտավազդ սրբազան եպիսկոպոսին ընտրությունը հառաջնորդություն Մարսիլիո թեմին:

Արդարև, Չերդ Վեհափառությունը քաջատեղյակ է այն անտիրական և լքված կացության, որուն մեջ կգտնվեր Հարավային Ֆրանսայի մեր հավատացյալ հայ ժողովուրդը բազում տարիներէ ի վեր: Ազգային-եկեղեցական կյանքի անկապակեցումը ու հետպահման կազմալուծվող ընթացքը ոչ միայն անշուք վիճակի էր մատնած մեր դարավոր ու պանծալի եկեղեցին, այլ նաև սպառնալից վտանգ էր մեր ժողովուրդի ազգապահպանության նվիրական ու հրամայական գործին համար: Մեր ժողովուրդը ենթակա էր ոչ միայն օտարացումի չարաղետ վտանգին, այլ նաև առարկա էր դարձած օտար եկեղեցիներու քարոզչական հրապույրներուն և փորձությանը: Մենք Մեր 12 փետրվար 1964 թվակիր նամակին մեջ արդեն ակնարկներ էինք այս կացության և բացատրեր, թե ի՞նչ մտածումներէ թելադրված արտոնած էինք Տ. Արտավազդ սրբազանի մեկնումը:

Մեր արդար և անկեղծ ակնկալությունն էր, որ ի սեր Հայաստանյայց Ս. Եկեղեցվո պայծառության և հայ ժողովուրդի օգտին, Մեր կատարած կոհողությունը ընթանալէ և գնահատվել ի, հարապատ ոգիին և նկարագրին մեջ, այսինքն որպէս անշահախնդիր ծառայություն Աստուծո և հայ ազգին, և տակալին, որպէս եղբայրական աջակցություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, որուն սերը երբեք չի կրնար մարիլ կամ տկարանալ Մեր հոգւովն մեջ: Ոչ մեկ վարկյան Մեր մտքն անցավ Մարսիլիո թեմը Կիլիկիո Կաթողիկոսության իրավասության տակ նկատելու գաղափարը: Մարսիլիո թեմին համար Ս. Էջմիածնէ անջատումի և Կիլիկիո Կաթողիկոսության կցումի պարագա երբեք գոյություն չունի: Արդեն, Մարսիլիո թեմի ազգային-եկեղեցական իշխանությունը իր 5 մարտ 1964 թվակիր պաշտոնական գրությամբ, ուղղված Չերդ Սրբության, Չեզ լիովին կհավաստիացնէ թեմի հավատարմության մասին հանդէպ Ս. Էջմիածնի: Ուստի, Մենք արդար չենք նկատեր այն եղանակը, որով կմեկնաբանվի կատարված առաջնորդական ընտրությունն ու Մեր ընդառաջումը Մեզի եղած թախանձագին խնդրանքներու ու կրկնակի դիմումներուն: Ոչինչով խախտված կըլլա այս ձևով Երուսաղեմի մեջ Մեր եղբայրական ողջագործման ոգին. ընդհակառակը, ավելի ևս ամրացած կըլլա անիկա. որովհետև, Մեր հասկա-

ցողությամբ, այս ողջագործումը հետպահման պետք է ծառայէ մեր եկեղեցվո բարգավաճումին և մեր ժողովուրդի ազգապահպանումին: Երկու Կաթողիկոսական Ս. Աթոռներու աջակցությունը դրական և գործնական այն ուժն է, որ պիտի նպաստէ մեր եկեղեցվո վերակենսավորումին. և զորացումին: Ուստի, սիրելի՛ Վեհափառ Եղբայր, շատ պիտի խնդրենք Չեզմէ, որ այս բարի համոզումներով Մեր կատարած ծառայություններն ու կոհողությունները չմեկնաբանվեն որպէս «տոնձգություն», ինչ որ խոր վիշտ և մեծ ցավ կպատճառէ Մեր սրտին:

Սիրելի՛ Վեհափառ Եղբայր ի Զրիստոս, ջերմորեն պիտի խնդրենք Չեզմէ; որ, ինչպէս խոսեցանք Երուսաղեմի մեջ, որնէ թուրիմացության կամ տարակարծության պարագային, թղթակցությամբ հարթենք հարցերը մեր միջև և նորանոր դժվարություններ չստեղծվեն իպուր տեղ սփյուռքահայ մեր կյանքն ներս: Խոր ցավ պացինք և վարմացանք, երբ տեսանք, որ Մարսիլիո խնդրին առնչությամբ Չեր Վեհափառ Եղբայրության կողմէ առաքված հեռագիրներով և մանավանդ մամուլին ղրկված հաղորդագրություններով հրապարակային այնպիսի շփոթ մտայնություն մը առաջացավ, որ կրնար վնասել ստեղծված խաղաղության՝ գոյավիճակի պահպանումին և ամրացումին մեր եկեղեցվո և ժողովուրդի կյանքն ներս: Պահ մը տարվեցանք մտածելու, որ Մենք ևս հաղորդագրություն մը հրատարակենք ի լուսաբանություն մտաց և հանդորդություն սրտից: Բայց հրաժարեցանք այդ մտքն, նոր և դիտումնավոր մեկնաբանություններու դուռ չբանալու համար, և երկրորդ, չխախտելու համար Ս. Երուսաղեմի մեջ ողջագործմամբ ստեղծված խաղաղ և համերաշխ կացությունը մեր եկեղեցական կյանքին մեջ:

Լիաճպս ենք և վստահ, որ Մեր այս գրությունը լիովին կլուսաբանէ Չեզ և կփարատէ այն անհիմն մտավախությունները, զորս ոմանք ստեղծած են Չեր մոտ՝ իրականության անհամապատասխան տեղեկություններ և բացատրություններ փոխանակելով Չեզի:

Արդարորեն կակնկալենք և անկեղծորեն կսպասենք, որ հայրապետական հատուկ թելադրությամբ հանդարտություն, ի սեր և ի գործակցություն հրավիրեք բոլոր անոնք, որոնք Հարավային Ֆրանսայի թեմին մեջ տակալին կհամահին զորավիգ չկանգնի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Արտավազդ սրբազան եպիսկոպոսին: Մենք կվստահեցնենք Չեր Եղբայրությունը, որ պիտի վերակենդանանա Հարավային Ֆրանսայի թեմը նորընտիր առաջնորդին անձնվեր գործունեությամբ ու թեմական իշխանության և ժողովուրդի անվերապահ գործակցությամբ և ապագային պիտի դառնա Չեզի համար աղբյուր ուրախության և գոհունակության:

Կողջուններ Ձեզ քրիստոսավանդ սուրբ սիրտով, և ջերմեռանդ սրտով կաղոթենք առ բարձրության Աստված, որ պարզևե Ձեզի անսահման ծառայության և համբերություն և երջանկալից երկար ապրելու և արդյունավետ բեղուն գահակալություն:

Ի բոլոր սրտե կմաղթենք, որ Աստված հարցն ձերոց պահե ու պահպանե Ս. Էջմիածինը և

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Շնորհապարզ Եղբայր.

Ի պատասխան Մեր 14 մարտ 1964 թվակիր թղթության, մայիս 6-ին ստացանք Ձեր 14 ապրիլ 1964 թվակիր նամակը, զոր հաճեր էիք փոստին հանձնել 20 ապրիլին: Ձեր նամակը թեև չէր նախդրադառնար Մեր ներկայացուցած կարևոր հարցերուն, այնուամենայնիվ Մենք հետաքրքրություն կարդացինք վայն, միշտ հուսալից, թե Ձերոյ Սրբությունը ևս կըլծա պահպանել Մեր և Մեր Աթոռներու միջև եղբայրական փոխադարձ այն բարի կամեցողությունը և գործակցությունը, զոր միասին որոշեցինք ամրապնդել, Երուսաղեմի Մեր ողջագուրումով, անընդլից հոկտեմբերին:

Ուրախ ենք, որ Դուք ևս կհավատաք, թե մեր բոլոր հարցերը կրնանք լուծել փոխադարձ հասկացողությամբ և համաձայնությամբ, կամ Ձեր ջանքերով՝ «ջերմորեն պիտի խնդրենք Ձեզմե, որ, ինչպես խոսեցանք Երուսաղեմի մեջ, որևէ թշուրիմացության կամ տարակարծության պատճառով, թղթակցությամբ հարթենք հարցերը Մեր միջև և նորանոր-դժվարություններ չստեղծվեն ի վուր տեղ սփյուռքահայ մեր կյանքն ներս»:

Հետևաբար Մեր սույն գրով Ձեզի պիտի ներկայացնենք Մայր Աթոռիս և Ձեր Աթոռին փոխադարձությունը հետ կապված բոլոր այն հարցերը, որոնք կկարոտին պարզաբանման և լուծման՝ մեր Ս. Եկեղեցվո կանոններու, նվիրապետական կարգի, պատմական ավանդությանց և հավատացյալ ժողովուրդի հիմնական շահերու ուսման ներքև:

Հիրավի, անկախաբար Մեր 14 մարտ և Ձեր 14 ապրիլ թվակիր նամակներեն, Մենք արդեն պետք է գրենք սույն գիրը, ինչպես հայտնեցինք Ձերոյ Սրբության Երուսաղեմի մեջ Մեր անձնական տեսակցության վերջավորության, որովհետև ըլլալով, որ այդ առթիվ Մենք չէինք յոյցեր գործնական լուծումներ գտնել՝ ի դարմանումն այդ կացությանց, որոնք առաջացեր էին լիբերալ յոյժ տարիներու ընթացքին, ստեղծելով մեր եկեղեցական կյանքին մեջ տագնապալի վիճակ:

անոր իմաստուն Գահակալը, և մի ու անբաժան Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցին:

Մնամ եղբայրական ջերմ սիրով և ողջագուրանք, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

14 ապրիլ 1964

ԱՆԹԻԼԻԱՍ

Այժմ արդեն ժամանակը հասած կնկատենք, որպեսզի ընթացք տանք Մեր խոստումին և Ձեզի ներկայացնենք բոլոր այն հարցերը, զորս Մենք անհրաժեշտ կնկատենք հստակված և լուծված տեսնել:

ա. Առաջին հարցը, որ կկարոտի ճշտումի, Մեր Աթոռներուն դիրքի և համապատասխան տիտղոսներու պարագան է: Մայր Աթոռը և Մենք, իբրև Ընդհանրական Հայրապետ Ամենայն Հայոց, անտարբեր չենք կրնար ըլլալ այս հարցի նկատմամբ և չենք կրնար համաձայնիլ, որ անտեսվին մեր Եկեղեցվո դարավոր կանոնները և հասկացողությունները: Զաջ հայտնի է Ձերոյ վեհափառության, թե Հայաստանայց Եկեղեցին մեկ ու անբաժան Եկեղեցի է՝ Ս. Էջմիածնի Մայր Աթոռով, որ Աթոռն է Հայոց Ընդհանրական Հայրապետության, և Ընդհանրական Հայրապետի տիտղոսն է «Ժայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց», և կամ «Կաթողիկոս Ամենայն Հայոց»: Հայ Եկեղեցին ունի սակայն նվիրապետական մասնավոր կամ տեղական երեք Աթոռներ ևս, պատմականորեն նվիրագործված իրենց իշխանության հատուկ սահմաններով, որոնք են՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Առաքելական Ս. Աթոռը և Պոլսո Հայոց Պատրիարքական Աթոռը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի Գահակալի տիտղոսն է «Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո»:

Կանոնական չեն, պատմական չեն, հետևաբար ընդունելի չեն վերջերս Ձեր Աթոռն ներս օգտագործվող տիտղոսները՝ «Կաթողիկոս Ամենայն Հայոց Ս. Էջմիածնի» և «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո», ինչպես ընդունելի չէ Մայր Աթոռիս և Ձեր Կիլիկյան Աթոռի հավասարապետ Աթոռներ ըլլալու նորելուկ տեսությունը:

Մեր Եկեղեցվո կանոնական մեկության սկզբունքը, պատմական ավանդությունները, մեր ժողովուրդի կրոնական-ազգային դարավոր ըմբռնումները և վերջապես մտածելու և գործե-

լու լրջությունը կիրավիրեն մեզ, որ նման խախտումներ չկատարվին և նոր թյուրիմացություններ և բաղդություններ չստեղծվին մեր եկեղեցական կյանքին ներս:

Խիստ ցանկալի է, որ այս հարցին նկատմամբ հաճե՞ք հայտնել Ձեր հստակ մտածումը և անհրաժեշտ տնօրինել՝ ի պահպանումն մեր եկեղեցական կանոններու, նվիրապետական կարգի և պատմական-ազգային ավանդություններու:

7. Անհրաժեշտ կնկատենք, որ հաստատակամորձ հարգվին մեր նվիրապետական Աթոռներու իրավասությանց և իշխանությանց սահմանները: Հետևաբար պետք է վերջ գտնե՞ն Սփյուռքի հայոց թեմերը և եկեղեցական համայնքները Մայր Աթոռն բաժանելու և Անթիլիասի Աթոռին միացնելու գործելակերպը: Կենսական անհրաժեշտություն է, որ Ամենայն Հայոց Հայրապետությունը և անոր աստվածակառույց կեդրոնը Ս. Էջմիածին շարունակեն իրենց պատմական, եկեղեցական ու ազգային առաքելությունը, ապահովելու համար Հայ Եկեղեցվո կրոնական մեկ-ուկույն և հայ հավատացյալ ժողովուրդի ազգային-բարոյական միասնությունը: Մեր եկեղեցական կանոններու և նվիրապետական Աթոռներու իրավասությանց սահմաններու խախտումով ոչ միայն կծխտվի Հայ Եկեղեցվո մեկության սկզբունքը, ոչ միայն կտկարանան մեր նվիրապետական Աթոռներու միջև սիրո և եղբայրության և փոխադարձ վստահությամբ գործակցելու ոգին, այլ նաև կպառակտվի ու իր կյանքի խաղաղությունը կկորսնցնեն սփյուռքահայ մեր հավատացյալ ժողովուրդը, ինչ որ թե՛ եկեղեցական, թե՛ ազգային տեսակետով աղետի մը համալոր կդառնա: Մեր օրերուն, երբ աշխարհը ամբողջ փոթորկահույզ վիճակի մեջ կգտնվի և բազում վտանգներու առջև, երբ արտասահմանի պայմաններու մեջ մեր ժողովուրդի սեպուհ խնդիրն է ազգապահպանումը կազմակերպել միացյալ ուժերով և նպատակասլաց կերպով, արդյոք հնարավո՞ր է որ մենք, հոգևորականներս անտարբեր մնանք և չապահովենք ու չամրապնդենք մեր ժողովուրդի միասնությունը և խաղաղ գործակցությունը, գեթ մեր եկեղեցական կյանքն ենք:

Հետևաբար, սիրելի՛ Եղբայր, մնանք հավատարիմ մեր Եկեղեցվո պատմական ավանդություններուն, կարգ ու կանոնին և արտասահմանի մեր ցիրուցան ժողովուրդի ազգային-եկեղեցական միասնության փրկարար սկզբունքին:

Սույն խնդիրը, որ Ձեզի կներկայացնենք, անձնական հեղինակության և ոչ իսկ լոկ մեր Աթոռներու հեղինակության հարցն է, այլ մեր Ս. Եկեղեցին և ի սփյուռս աշխարհի ցրված մեր հավատացյալ ժողովուրդը՝ մեկ ու անբաժան և անոնց կյանքը՝ խաղաղ ու անդորր պահելու նվիրական խնդիրը: Կսիրենք հուսալ, թե Ձերդ Սրբությունը, Իր հստակ ու վճռական

մեկ պատասխանով, պիտի գա փարատելու այս հարցի առնչությամբ Մեր ծանր ապրումները և մտահոգությունները:

գ. Անդրադառնալով Մարսիլիո պարագային, Մենք վերստին կհիշեցնենք այն բոլորը, որ գրեթե Ձերդ Սրբության Մեր 14 մարտ 1964 թվակիր գրությամբ, հույս ունենալով, որ պիտի հաճիք այլ աշխատանքի հրավիրել գերաշնորհ Ս. Արտավազդ եպիսկոպոսը, տրված ըլլալով՝

1. որ գերաշնորհ Ս. Արտավազդ եպիսկոպոսը Մարսիլիա հրավիրող մարմինը, համաձայն Մեր ձեռքի տակ եղող ճշգրիտ և օրինական տվյալներու, կանոնական իրավասությունը չունենան որոշում կայացնելու: Ինչպես բաջ հայտնի է Ձեզի, համաձայն մեր Եկեղեցվո սահմանադրական կանոններուն, միայն ժողովուրդի կողմեն ընտրված թեմական պատգամավորներու ժողով մը այդ իրավասությունը կրնար ունենալ:

2. որ նույնիսկ եթե Արտավազդ սրբապանը իբրև առաջնորդ պիտի ուզվեր, այդ դիմումը նախ պետք է Ս. Էջմիածին գար, քանի որ Մարսիլիո շրջանը Ս. Էջմիածնի ենթակա է, և Մենք է, որ Ձեզի հետ խորհրդակցելով վերջնական կարգադրություն պիտի կարողանայինք ընել Արտավազդ սրբապանի թեկնածության մասին, քանի որ Մենք սկզբունքով Ձեր միաբան սրբապանի անձին մասին առարկություն չենք ունենար: Այդ պարագային է միայն, որ օրինականությունը հարգված կըլլար և կկարողանայինք Մարսիլիո մեջ միասնության ոգին պահպանել:

3. որ այժմ Մեր և հայրապետական պատվիրակ գերաշնորհ Ս. Սերովքե արքեպիսկոպոսի կամքեն անկախ, Մարսիլիո մեջ ստեղծված է պառակտյալ վիճակ ու հավատացյալ ժողովուրդի երկփեղկում: Զաղաքի Մայր Եկեղեցին, իր վարչությամբ ու հավատացյալ ժողովուրդով, չընդունիր Արտավազդ սրբապանը իբր առաջնորդ, իսկ արվարձանի քանի մը փոքր եկեղեցիներ իրենց վարչություններով չեն ենթարկվիր Ֆրանսայի հայրապետական պատվիրակին: Ուրեմն բարվոք է, որ բարեհաճիք հարմար ու պատվաբեր ձև մը գտնել Արտավազդ սրբապան հրավիրելու այլ պաշտոնի, և որոշ ժամանակ հետո, երբ երկու կողմերու բոլորքցյալ զգացումները և հույումները խաղաղին, եկեղեցական վարչություններու և Մարսիլիո հավատացյալ ժողովուրդի կամքով, կողմերու փոխադարձ համաձայնությամբ, Մենք, միասնության ու եղբայրական ոգիով, վստահաբար կկաշտդանանք բոլոր դժվարությունները հաղթահարել և Մարսիլիան օժտել թեմակալ առաջնորդով մը, որ ընդունելի ըլլա բոլորի համար, ի հարկին Ձեր Աթոռի միաբանի մը ընտրությամբ:

Այս հարցը կրկին Ձեր շատ լուրջ ուշադրության կհանձնենք և կսպասենք Ձեր կարգադրությանց:

դ. Հունաստանի թեմը, Մեր կարծիքով, հնարավոր է որ շուտով վերագտնեն իր կազմակերպչական օրինական դրությունը, Մայր Աթոռի հոգևոր իշխանության ներքև: Այդ ցանկությունը հետզհետե բացահայտ կերպով կդրսևորվի համայն հունահայ հավատացյալ ժողովուրդի և նույնիսկ բաժանված կողմերու ղեկավարներու մեջ: Կխորհինք, թե անհապաղ կերպով կարելի է կողմերու միջև բանակցություններ սկսիլ և գործնական ծրագիր մը մշակել, կազմելու համար չեզոք ազգայիններե բաղկացած ժամանակավոր կեդրոնական մարմին մը, որ վերամիավորե թեմը և հավատացյալ ժողովուրդը Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև, և հետագային նոր ընտրություններ կազմակերպելով, օժտե հունահայ թեմը օրինավոր թեմական խորհուրդով մը: Եթե ժամանակավոր կեդրոնական մարմինը և ժողովուրդը փափագին պահել իբրև առաջնորդ Ձեր միաբան գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Մենք որևէ առարկություն չենք ունենար իհարկե, քանի որ Նորին Սրբապետությունը հավատարմորեն պիտի պաշտոնավարե իբրև Ս. Էջմիածնի իրավասության ներքև գտնվող թեմի մը հոգևոր առաջնորդը: Որով կխնդրենք, որ այս ոգիով հարկ եղած թելադրանքները կատարեիք Սահակ արքեպիսկոպոս Այվապյանին, որ ձեռնարկե օրինական և գործնական միջոցառումներու, վերոհիշյալ ոգիով և եղանակով, տեղյակ պահելով նաև Մեզ, այդ ուղղությամբ կատարած իր աշխատանքներուն և արդյունքներուն մասին:

ե. Պարսկահայ երեք թեմերը ևս ցանկալի է որ վերագտնեն իրենց օրինական և բնականոն գոյավիճակը, վերահաստատելով իրենց կանոնական պատմական կապը Ամենայն Հայոց Հայրապետության հետ, որու իշխանության և օրինության ներքև կազմավորված ու ապրած են իրենց եկեղեցիներով և համայն հավատացյալ ժողովուրդով դարերե ի վեր անխափան:

Մեր առաջարկն է, որ իբրև առաջին քայլ հաճեիք հրահանգել՝ Պարսկաստանի մեջ իբրև թեմակալ առաջնորդներ պաշտոնավարող Ձեր միաբաններուն, որ կանոնավոր հարաբերությանց մեջ մտնեն Մայր Աթոռի հետ թղթակցությամբ և Ս. Էջմիածնի այցելությամբ, որպեսզի փոխադարձ հասկացողությամբ կազմվի ծրագիր մը, որու հիման վրա, մեկ-երկու տարիներու ընթացքին՝ Թեհրանի, Ատրպատականի և Նոր-Ջուղայի թեմերը վերագտնեն իրենց պատմական-օրինական-կազմակերպչական գոյավիճակը Ս. Էջմիածնի հոգևոր իրավասության ներքև: Այստեղ ևս հարկ կհամարենք ընդգծել, թե Մենք որևէ առարկություն պիտի չունենանք, որ Ձեր միաբանները շարունակեն պաշտոնավարել, իբրև թեմակալ առաջնորդներ պարսկահայ էջմիածնական թեմերու մեջ, Մեր օրհնությամբ և Մեր իշխանության ներքև:

զ. Ամերիկայի Միացյալ Նահանգաց մեջ ստեղծված կացությունը, որ ավելի քան երեսուն տարիներու շատ տխուր պատմություն մը ունի, անհրաժեշտ է, որ նույնպես իր օրինական և բնական գոյավիճակը վերագտնե, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իշխանության և օրհնության ներքև: Մենք կհավատանք, թե հետզհետե ամրապնդումովը Երուսաղեմի ողջագուրումի ոգիին, կուգա այն ուրախ օրը, երբ Ձերդ Սրբությունը և Մենք ժամանակը հասած պիտի նկատենք վերամիավորելու մեր ամերիկահայ եկեղեցիները և հավատացյալ ժողովուրդը, Ս. Էջմիածնի հոգևոր ղեկավարության տակ:

է. Շատ կարևոր պարագա մը, զոր կփափագինք Ձեր ուշադրության հանձնել, Հայաստանյայց Եկեղեցիին՝ միջեկեղեցական հանդիպումներու և ժողովներու մասնակցության հարցն է: Կխորհինք, թե Դուք ևս համաձայն պիտի ըլլաք Մեզի հետ, որ Հայաստանյայց Եկեղեցվո մեկ ու անբաժան ըլլալու կանոնական սկզբունքն կբխի նաև օրինական անհրաժեշտությունը, որ ամեն նման առիթներով Հայ Եկեղեցին ներկայանա մեկ պատվիրակությամբ, նշանակված կամ զիջավորված Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի կողմն, որպես Գերագույն Պետ և Գլուխ մեկ և անբաժան Հայ Առաքելական Ս. Եկեղեցիին: Իհարկե, նման պարագաներու առթիվ, Մենք բնական և օգտակար պիտի նկատենք դիմել նաև Ձերդ Սրբության, որպեսզի Ձեր մեկ ներկայացուցիչը կամ ներկայացուցիչները առաջադրենք Մեզի, և Մենք ի նկատի ունենանք անոնց թեկնածությունները ևս, Հայ Եկեղեցվո պատվիրակությունը կազմելու առթիվ:

Մանավանդ նման պարագաներու ներքև է, որ առավել պիտի բացահայտվի ու ամրապնդվի Հայ Եկեղեցվո մեկ-ության և մեր նվիրապետական Աթոռներու միասնության նվիրական սկզբունքը հաշտ բուրյ եկեղեցիներու և համայն քրիստոնյա աշխարհի:

Սիրելի՛ և շնորհապարդ Եղբայր Մեր, ահա այն կարևոր հարցերը և պարագաները, զորս կներկայացնենք Ձեր ամենալուրջ ուշադրության և կսպասենք, որ մոտ օրեն Մեզի փութացնեք Ձեր հստակ և ճշգրիտ պատասխանները վերահիշյալ յոթը հարցերուն վերաբերյալ կետ առ կետ, որոնք մեր Եկեղեցիին և համայն մեր հավատացյալ ժողովուրդին համար ունին կանոնական-սկզբունքային նկարագիր և եկեղեցական ու ազգային գործնական կենսական նշանակություն:

Վերջացնելե առաջ Մեր գիրը, իբրև բաղձանք ու առաջարկ, վերստին կհայտնենք Մեր ջերմագին ցանկությունը Ձերդ Սրբության հետ ողջագուրվելու բազմադարյան Ս. Էջմիածնի կամարներու տակ և միասին աղոթելու Փրկչի Ս. Սեղանի առաջ, վասն միության և անշարժության մեր Ս. Եկեղեցվո, վասն բարօրության մեր ժո-



ղովուրդի և վասն խաղաղության համայն աշխարհի: Հետևաբար թույլ տվեք, որ եղբայրական անկեղծ զգացումներով գոտեպնդված, ներկայացնենք Ձերդ Ս. Օծության Մեր սիրո հրավերը, ուխտի գալու համար Մայր Աթոռ և հայրենի երկիր պատկառելի ջրախմբով մը, կապմոված Ձեր կողմն նշանակված բարձրաստիճան հոգևորականներն և աշխարհական հարգարժան ազգայիններն: Ձերդ Վեհափառությունը և Ձեր ջրախմբի անդամները պիտի ըլլաք Մեր և Մայր Հայրենիքի հավատավոր ժողովուրդի թանկագին Հյուրը: Ձեր այցելությունը Մայր Աթոռ Մենք կնախատեսենք հառաջիկա տարվո ընթացքին, Ձեզի համար հարմար թվականի մը, որ կբարեհաճիք ճշտել և անհապաղ հաղորդել Մեզի ի գիտություն: Ինչքան նշանակալից և ինչքան

մխիթարական պիտի ըլլա համայն հայ ժողովուրդի համար, եթե Մենք և Դուք, հառաջիկա տարի, 1965-ի ապրիլին, կարողանանք միատեղ աղոթել ամենայն հայոց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի սեղաններու առաջ, մեր ազգի բյուրավոր նահատակներու անմահ հոգիներու խաղաղության, համար:

«Նաղաղութիւն ընդ Ձեզ»:

Սրտագին բարեմաղթություններով և եղբայրական սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

5 հունիս 1964





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒՆՏԸ

«Ուխտն իմ որ ընդ նմա՝

կենաց և խաղաղութան»:

(ՄԱՂԱՔԻԱ Բ 5) .

Աստվածաշնչական այս պատգամի լուսի տակ, հունիսի 28-ից մինչև հուլիսի 3-ը, Պրագայում գումարվեց խաղաղութան պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին բազում երկրների քրիստոնեական տարբեր եկեղեցիների և դավանությունների ավելի քան 1200 պատգամավորներ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բերհաճ կարգադրությամբ, Պրագայի խաղաղության երկրորդ համաժողովում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր հատուկ մի պատգամավորություն, Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարզև եպիսկոպոս Գևորգյանի գլխավորությամբ:

Վերջին տասնամյակում աշխարհի բոլոր մասերում կազմակերպվում է խաղաղության պաշտպանության համաժողովրդական շարժումը:

Քրիստոնեական բազում եկեղեցիներ, այդ թվում նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որպես խաղաղության, սիրո վրա հիմնված աստվածաճիմն հաստատություն, խաղաղության պաշտպանության համաժողովրդական շարժման գործուն և անմիջական մասնակցություն են բերում:

«Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին (Մատթ. Ե 9):

Խաղաղության ձգտումը անվերապահ տենչանքն է աշխարհի բոլոր ժողովուրդների:

Աստված Հիսուս Քրիստոսով խաղաղություն հաստատեց իր և բովանդակ մարդկության միջև: Միաժամանակ Նա խաղաղության և սիրո կապը ամրապնդեց բոլոր մարդկանց և ազգերի միջև:

Աստված աշխարհը իր հետ հաշտեցրեց և Հիսուս Քրիստոսով կանչեց իր ժողովրդին հաշտության սպասավորության:

Աստված ողորմաճաբար իր արդարությունը, համբերատարությունը, երկայնամտությունը բաշխեց աշխարհին և մարդկանց՝ Հիսուս Քրիստոսի հայտնությամբ:

Քրիստոնեական եկեղեցին չի կարող լսել կամ փոխանցել խաղաղության, սիրո, համբերատարության այս ուրախալի պատգամը, առանց ցույց տալու բոլոր մարդկանց և ազգերին իրար հասկանալու գործնական եղանակներն ու հնարավորությունները, առանց մասնակցելու միջազգային հարաբերությունների մեջ բարի, աստվածահաճո օրենքների, կանոնների մշակմանը, առանց գործելու զանազան կերպերով հասնելու այն նպատակին, որ մարդիկ համբերատար լինեն իրար նկատմամբ, որ մարդիկ հա-

բառերեն փնտռեն միմյանց հասկանալու ճանապարհները և պատրաստ լինեն փոխադարձ զոհողությանը:

Ահա այս է այսօր Զրիստոնեական Եկեղեցու հիմնական, գործնական առաքելությունը աշխարհում:

Ազգիս Վեհափառ Հայրապետը Պրագայի խաղաղության պաշտպանության համաշխարհային համաքրիստոնեական երկրորդ կոնգրեսի նախագահությանն ուղղած 20 հունիս թվակիր ողջույնի իր խոսքում գրում էր վերոհիշյալ գաղափարների և մտածումների լույսի տակ.

«Հայ Եկեղեցու անունով ողջունում ենք Պրագայի համաշխարհային երկրորդ համագումարը, ուր հավաքված էք, քրիստոնյաներ՝ ամբողջ աշխարհի, ձեր վճռական խոսքն ասելու ի պաշտպանություն խաղաղության և ժողովուրդներու բարեկամության սրբապան դատի:

Ձեր մարդասիրական վսեմ այս առաջադրանքի համար Մենք շնորհավորում ենք ձեզ և հավատում ենք, թե մեր օրերին չկա ավելի աստվածահաճո գործ քան ապահովումը ազգերի խաղաղ գոյակցության և սինարափումը պետությունների:

Մեր օրերի պայմաններին պատշաճեցնելով Պողոս առաքյալի մտածումը, Մենք պիտի ասեինք՝ «Եթե մենք քրիստոնյաներս չպիտի հաշտվենք պաշտպանել խաղաղության դատը, ապա իսկուր պիտի լինի մեր կրոնական հավատը և իսկուր մեր քարոզությունը»:

Ով որ պատերազմ կկամենա, ով որ պատերազմի դեմ չի ծառանա բանիվ և գործով, նա արժանի չէ քրիստոնյա կոչվելու»:

Արդարև, պատերազմը ոճիր է Աստուծո դեմ, երկնքի դեմ, մարդկության վեհ ու նվիրական իդեալների դեմ:

Ահա թե ինչո՞ւ Պրագայի խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային երկրորդ համաժողովում հավաքված բոլոր մարդկանց սրբապան խոհերն ու զգացմունքները թևածում էին երկրի վրա կայուն խաղաղության և մարդկանց միջև համերաշխության վսեմ և աստվածահաճո գաղափարների շուրջ, որովհետև քրիստոնեությունը խաղաղության կրոն է, Աստուծո և մարդու միջև սրբապան դաշինք է, կյանքի և խաղաղության ուխտ է:

Խաղաղությունը կյանք է, լույս, երջանկություն, առաջադիմություն և բոլոր բարիքներ, մինչ պատերազմը մահ է, աղետ, քանդում, թե՛ մեծ և թե՛ փոքր ժողովուրդների, ազգերի, կրոնների և եկեղեցիների համար:

Ո՞ր մի ժամանակ աշխարհը չի տեսել այնքան արյուն, արցունք, վիշտ ու տառապանք, որքան համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին:

Իսկ է՛լ ավելի կործանարար, ահավոր ու բնաջնջող կլինի ատոմական մեր դարաշրջանում համաշխարհային երրորդ պատերազմը, եթե հնարավոր չլինի այն կասեցնել բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց վճռական, համարձակ և հետևողական պայքարով:

«Կայէ՛ն, ո՛ր է Հաբել եղբայր քո» (Ծննդ. Դ 9):

Քիչ է խաղաղություն քարոզելը, խաղաղության համար աղոթելը:

Խաղաղությունը պետք է նվաճել միահամուռ կամքով, քրիստոնեական արիությամբ, ստեղծագործ և շինարար աշխատանքով: «Բռնուք յափրջտակեսցեն զնա» (Մատթ. ԺԱ 12):

Զրիստոնեական Եկեղեցին, այս օրերին մանավանդ, սառը պատերազմի հրահրման, երկյուղի և անստուգության մեջ խաղաղության համար պարտի ցույց տալ խաղաղության ճանապարհը, այն փրկարար ուղին, այն պայծառ ապագան, երբ «Եղիցի արդարություն և խաղաղություն» (Եսայի ԼԾ 8) և երկրի վրա «արդարություն և խաղաղություն համբուրեսցին» (Սաղմ. ԶԴ 11):

Համայն մարդկությունը, բոլոր կրոնները, Զրիստոնեական Եկեղեցին խորը բերկրանքով և գոհունակությամբ ողջունեցին մի տարի առաջ, 1963 թվականի օգոստոսի 5-ին, Կրեմլի մեծ պալատում, ՍՄՌՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից ստորագրված Մոսկվայի պայմանագիրը մոնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումների արգելման մասին:

Մարդկությունը հավատում է, որ կայուն խաղաղություն, մարդկության, կրոնների վերջնական նպատակին հասնելու մեծ գործի և կարելիության հաստատուն սկիզբն է դրվել:

Ազգերը կարոտ են խաղաղության, այդ թվում նաև մեր ժողովուրդը:

Արդարև, պատմության մեջ ո՛չ մի ժողովուրդ, ո՛չ մի եկեղեցի շարունակաբար չի կրել այնքան դարավոր վրկանք, անիրավություն և անարդարություն, որքան հայ ժողովուրդը, եթե չհաշվենք վերջին մոտ չորս և կես տասնամյակը:

Պրագայում, խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային առաջին մեծ համաժողովում, հուլիսով և լավ տեսությամբ հնչում էր ազգիս Վեհափառ Հայրապետի սրտառու խոսքը խաղաղության աստվածահաճո և մարդասիրական գործին ի նպաստ.

«Իբրև Եկեղեցի և իբրև փոքր ժողովուրդ, որ անցյալում ահավոր կերպով տուժել ենք մեծերի պատերազմների ընթացքում, ինչպես, օրինակ, առաջին համաշխարհային պատերազմին, երբ Արևմտյան Հայաստանում նահատակվեցին մեր Հրկու միլիոն հայ քրիստոնյաները, իրենց իսկ պատմական հայրենիքի հողի վրա, այսօր Մենք մի սրբապան իդժ ունենք, այն է՝ տեսնել աշխար-

հում խաղաղ գոյավիճակ, ժողովուրդների միջև բարի կամեցողություն և պետությունների միջև շինարար գործակցություն»:

Այս է Աստուծո կամքն ու պատգամը: Այս է ժողովուրդների և կրոնների պահանջը:

Ներդաշնակորեն կառուցված այս հրաշալի աշխարհում, որը հարուստ է աստվածային բարիքներով և շնորհներով, միանգամ ընդմիշտ պետք է վերանան պատերազմի մահաբեր ամպերը և հավերժորեն շողա խաղաղության պայծառ երկնակամարը:

Պրագայի խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային երկրորդ համաժողովն իր ռոշումներով, բանաձևերով, դիմումներով և պատգամներով մեծ ավանդ մուծեց խաղաղության պաշտպանության հետ կապված խնդիրների լուծման ճանապարհին:

Պրագայի երկրորդ համաժողովի միահամուռ կոչերը, բանաձևերն ու պատգամները կհանդի-

սանան բարոյական մի նոր խթան ժողովուրդների աչնիվ, նվիրական պայքարի ճանապարհին, հանուն եղբայրության, սիրո, արդարության և միջազգային խաղաղության:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մեր խաղաղասեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփյուռս, հավատարիմ իրենց դարավոր կրոնաբարոյական իդեալներին և հայրենասիրական ավանդություններին, հավատում են, որ կգա ժամանակը, երբ պատերազմական սրերը կվերափոխվեն խոփերի, սվինները՝ մանգաղների, և ոչ մի ժողովուրդ էլ չի բարձրացնի այլ ժողովրդի վրա և կմոռացվի պատերազմական արհեստը:

Թո՛ղ ամենաբարի Աստուծո օրհնությունը, գթությունը, սերը և հովանին ընդմիշտ լինեն երկրագնդի խաղաղասեր բոլոր ժողովուրդների վրա, որպեսզի աշխարհի վրա ընդմիշտ հաղթանակեն արդարության, խաղաղության, իրավունքի և մարդասիրության վեհ գաղափարները:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Հունիսի 26-ից մինչև հուլիսի 3-ը, Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայում, գումարվեց խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային երկրորդ կոնգրեսը, որին մասնակցելու հրավիրվել էր նաև Հայոց եկեղեցին:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Հայ եկեղեցու պատգամավորության կազմում էին Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարզե եպիսկոպոս Գևորգյանը (պատգամավորության ղեկավար), Այրարատյան թեմի հայրապետական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանը, Մայր Տաճարի լուսարար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը և «էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուր Հատիտյանը:

Ռումինական եկեղեցու պատգամավորության կազմում էր նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիրոսյանը:

Պատգամավորությունը առաջնորդվում է «Ինտերնացիոնալ» հյուրանոցը, ուր արդեն ժամանել էին այլ եկեղեցական պատվիրակություններ:

Հունիսի 28-ին, կիրակի, առավոտյան ժամը 8-ին, Պրագայի բողոքականների Բեթլեհեմ ժողովասրահում, եկեղեցական մասնավոր արարողությամբ, կատարվում է կոնգրեսի բացումը:

Բացման ընթացքում սաղմոսերգությունից (Սաղմ. ՃԳ) և սուրբգրական ընթերցումից հետո (Մատթ. Ե 13—16), ժողովարանի նախագահ դուկտ. Մ. Նյումեյլերը քարոզում է գերմաներեն լեզվով:

Այնուհետև արտասանվում են ողջույնի և բարի գալստյան ճառեր:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Արևելքի միաբնակ ուղղափառ եկեղեցիների (Ղպտի, Ասորի, Հաբեշ և Մալաբար), ողջույնի խոսք է ասում Հայ Եկեղեցու պատգամավորության ղեկավար գերաշնորհ Տ. Պարզե եպիսկոպոս Գևորգյանը՝ ռուսերեն.

«Թույլ տվեք ինձ, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա Գերագույն Պետ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի, ինչպես նաև Արևելքի հնագույն միաբնակ քույր եկեղեցիների անունից, սրտանց ողջունել Ձեզ, եկեղեցիների ներկայացուցիչներին, որ հավաքվել եք այստեղ, քննարկելու մեր ժամանակների ամենահրատապ հարցերից մեկը՝ աշխարհում մնալուն խաղաղության պաշտպանության գործը:

Քրիստոս իր աստվածային հայտնությամբ նպատակ ունի մարդկային խղճի և կամքի դաստիարակությամբ, մարդու հոգու մեջ ներդնել համամարդկային եղբայրության, սիրո, ազգերի համերաշխության նվիրական գաղափարները:

Քրիստոնեական սույն պատգամները ի մի են համախմբում աշխարհի բոլոր քրիստոնյաներին:

Մեր ժամանակներում, երբ ամրապնդվում է ժողովուրդների բարեկամությունը, Քրիստոնեական Եկեղեցին, որը հիմնված է խաղաղության, սիրո և հաճության վրա, չի կարող ձեռնպահ մնալ այդ նվիրական, աստվածահաճո սուրբ նպատակադրումից: Ահա թե ինչու մեր եղբայրների՝ քրիստոնեական տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներին

ներկայությունը այստեղ ուրախացնում, ոգևորում է մեզ և հաստատ հույս է ներշնչում, որ այն գործը, որի համար հավաքվել ենք այստեղ, պսակվելու է հաջողությամբ:

Նվա մի անգամ ողջունում եմ Ձեզ և մաղթում հաջողություն կոնգրեսի աշխատանքներին:

Ճաշից հետո, ժամը 4-ին, Պրագայում, նշանավոր երաժիշտ Սմետանայի անվան համերգային մեծ դահլիճում, հանդիսավոր իրադրության մեջ, տեղի է ունենում խաղաղության պաշտպանության Պրագայի երկրորդ կոնգրեսի պաշտոնական բացումը: Կոնգրեսին մասնակցում են ավելի քան 60 երկրների տարբեր եկեղեցիների և կրոնական համայնքների շուրջ 1300 ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծ թվով հյուրեր, դիտորդներ, թղթակիցներ:

Բեմի խորքում, բաց-կապույտ թավապառ վարագույրի ֆոնի վրա, սպիտակ հսկա խաչերի թևերի տակ, երկրազնդի քարտեզն է, վրան թևատարած խաղաղության աղավինին, իսկ շրջանակի վրա ուսներեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով ոսկետառ գրված է «Կյանքի և խաղաղության ուխտը» մարգարեական նշանաբանը:

Կոնգրեսի հանդիսավոր բացումը կատարում է զլխավոր քարտուղար դոկտ. Յ. Ն. Օնդրան, որը ներկայացնում է Պրագայի առաջին կոնգրեսից մինչև երկրորդ կոնգրեսը ընկած ժամանակաշրջանի գործունեությունը և կոնգրեսի հաստատման է ներկայացնում ժողովի օրակարգը:

Այնուհետև ընթերցվում են նախագահության հասցեին ուղղված ողջունի բաղմաթիվ հեռագրեր:

Ռուս Պրավոսլավ եկեղեցու պատգամաբարության ղեկավար Տ. Նիկողիմ արքեպիսկոպոսը կարգում է Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի ողջունի խոսքը, որն ընդունվում է ջերմորեն:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջունի հետևյալ խոսքի ուսերեն թարգմանությունը, հատենի կոնգրեսի, ընթերցում է հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը:

«Հայ եկեղեցու անունով ողջունում եմ Պրագայի համաշխարհային երկրորդ համագումարը, ուր հավաքված եմ, քրիստոնյաներ ամբողջ աշխարհի, ձեր վնասված խոսքն ասելու ի պաշտպանություն խաղաղության և ժողովուրդների բարեկամության սրբազան դատի:

Ձեր մարդասիրական վսեմ այս առաքարանքի համար Մենք շնորհավորում եմ ձեզ և հավատում եմ, քե մեր օրերին չկա ավելի աստվածաճանաչ գործ, քան ապահովումը ազ-

գերի խաղաղ գոյակցության և զինաթափումը պետությունների:

Մեր օրերի պայմաններին պատշանեցնելով Պաղոս առաքյալի մտածումը, Մենք պիտի ասենք՝ «Նքե մենք քրիստոնյաներս չպիտի հաշտվենք պաշտպանել խաղաղության դատը, ապա իզուր պիտի լինի մեր կրոնական հավատը և իզուր մեր քաղաքությունը»:

Ով որ պատերազմ կկամենա, ով որ պատերազմի դեմ չի ծառանա բանիվ և գործով, եա արժանի չէ քրիստոնյա կոչվելու»:

Ողջունի խոսքերով հանդես են գալիս նաև կոնգրեսին ներկա եղող այլ բարձրաստիճան եկեղեցական պետեր, այդ թվում Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը, միտրոպոլիտ Իլյան հանուն Անտիոքի Պատրիարքության, միտրոպոլիտ Նիկողիմը (Բուլղարիա), միտրոպոլիտ Ժուստինը (Ռումինիա), Անդրեյ եպիսկոպոսը (Յուգոսլավիա) և ուրիշներ:

Կոնգրեսում հրապարակվում են նաև ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Ու Տանի և Պրագայի ու Ֆլորենցիայի քաղաքագույնների ողջունի հեռագրերը:

Հանուն Չեխոսլովակիայի խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի, կոնգրեսը ողջունում է նաև ակադեմիկոս պրոֆեսոր Մուկար Ժովսկին:

Այնուհետև կոնգրեսի բացման պաշտոնական և ընդարձակ ճառով հանդես է գալիս դոկտ. Ժ. Լ. Հրոմատկան՝ «Համագոյակցության ճանապարհի վրա» թեմայով:

Հունիսի 29-ին, երկուշաբթի առավոտ, ժամը 9-ին, համերգային նույն դահլիճում, կոնգրեսը շարունակում է իր աշխատանքները:

Աղոթելից և սուրբգրական թեմայի ընթերցումից և սերտումից հետո, կոնգրեսի առավոտյան նիստում մեծ զեկուցումով հանդես է գալիս Ուրուգվայի պատգամավոր էմիլիո Կաստրոն՝ «Մով և տնտեսական անկախություն, ըստ լատինա-ամերիկյան հասկացողության» թեմայով:

Ճաշից հետո, ժամը 3.30-ին, կոնգրեսում լավում են հարակից երկու զեկուցումներ՝ ամերիկացի պրոֆ. Հարվեյ Կոքսի «Տեխնիկական աշխարհում քրիստոնյայի պատասխանատվության մասին» և Մատակասկարի ավետարանական համայնքի հովիվ Ռիչարդ Անդրիամանջատեի՝ «Ազատություն և միություն» թեմայի շուրջ:

Երեկոյան այս պլենար նիստում ընթերցվում են նաև Չեխոսլովակյան Ժողովրդագիտության հանրապետության ժողովրդագիտության նախագահ Անտոնին Նովոդոնուն, ՍՍՄՄ Միխայիլ Կոնստանտինովի նախագահ Ն. Ս. Խրուշչովին, ԱՄՆ-ի նախագահ Լինտոն Ջոնսոնին և Անգ-

լիայի պրեմիեր մինիստր Դուգլաս Հյումին ուղղված ողջույնի հեռագրերը, որոնք ընդունվում են հարգելի ծափահարությամբ և շնորհակալությամբ:

Հունիսի 30-ին կոնգրեսի բոլոր անդամները բաժանվում են 10 առանձին ենթախմբերի՝ օրակարգում դրված հարցերը ուսումնասիրելու, քննելու, վիճելու և ընդհանուր ժողովին բերելու եզրակացություններ ու բանաձևեր:

Ենթաժողովներում քննության էին դրված հետևյալ հարցերը.

1. հաղաղություն և արգարություն.
2. հաղաղություն և ազատություն.
3. հաղաղություն և սառը պատերազմ.
4. հաղաղություն և նոր պետություններ.
5. հաղաղություն և զերմանական հարց.
6. հաղաղություն և քրիստոնեության սխալ հասկացողություն.
7. հաղաղություն և զինաթափում.
8. հաղաղություն և երիտասարդություն.
9. հաղաղություն և էկոմենիզմ.
10. հաղաղություն և կաթոլիցիզմ:

Հայ Եկեղեցու պատվիրակության բոլոր անդամները ենթաժողովներում գրավոր և բանավոր ելույթներ են ունենում օրակարգի իրենց ընտրած թեմայի շուրջ:

Հուլիսի 2-ին խմբակներում ավարտվում են բոլոր աշխատանքները և յուրաքանչյուր խմբակ գրավոր կոնգրեսի ընդհանուր նիստին է բերում իր եզրակացություններն ու բանաձևերը:

Հուլիսի 3-ին, ուրբաթ, կայանում է կոնգրեսի վերջին և եզրափակիչ նիստը, որ բացվում է առավոտյան ժամը 9-ին:

Նիստի բացումից անմիջապես հետո, կոնգրեսի նախագահությունը պաշտոնապես հրապարակում է ՍՍՌՄ Մինիստրների սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովի ողջույնի հեռագիրը, որն ընդունվում է ջերմ ծափերով:

Այնուհետև հրապարակվում են Պրագայի խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի երկու բանաձև-պատգամները, որպես պատմական կարևոր փաստաթղթեր:

Կոնգրեսի առաջին բանաձև-պատգամն ուղղված է աշխարհի բոլոր եկեղեցիներին և քրիստոնյաներին, ուր ասվում է, թե կոնգրեսը ողջունում է ողջ աշխարհում բոլոր քրիստոնեական եկեղեցիներին և քրիստոնյաներին կոնգրեսի հիմնական նշանաբանով, որ է՝ «Կյանքի և խաղաղության ուխտը» և կոչ է

անում մեր քրիստոնեական հավատի և համոզմունքների համաձայն, դատապարտել պատերազմը, պաշտպանել քրիստոսավանդ խաղաղությունը և համատեղ աշխատանքով հարթել մնացած խաղաղության աստվածահաճո ճանապարհը, որովհետև քրիստոնեական կրոնը «Կյանքի և խաղաղության ուխտ» է նախ Աստուծո և ապա մարդկության հետ:

Կոնգրեսի երկրորդ բանաձև-պատգամը մի սրտագին կոչ է ուղղված բոլոր կառավարություններին, պառլամենտներին և աշխարհի հեղինակավոր անձնավորությանը, որ վերջ տրվի սպառազինությունների մրցավազքին, սառը պատերազմի հրահրմանը, նոր զաղութատիրության բոլոր ձևերին, որ միջազգային վերահսկողություն սահմանվի լրիվ, ամբողջական զինաթափմամբ և ազգերի միջև հաստատվի փոխադարձ վստահություն, շինարար համագործակցություն և խաղաղություն, չեզոքության, խաղաղ համագոյակցության սկզբունքների վրա հիմնված, միջազգային դաշինքների ստեղծումով, տնտեսական, քաղաքական, մշակութային տարբեր սիստեմների և ավանդությունների մեջ ապրող բոլոր պետությունների միջև:

Եզրափակիչ նիստի վերջավորութեան տեղի են ունենում խաղաղության քրիստոնեական կոնգրեսի նախագահի, ընդհանուր քարտուղարի, գործադիր և խորհրդակցական կոմիտեների ընտրությունները:

Միաձայնությամբ նախագահ է ընտրվում դոկտ. Ժ. Լ. Հրոմատկան, ընդհանուր քարտուղար՝ Ժ. Ն. Օնդրան: Հաստատվում է նաև գործադիր և խորհրդակցական կոմիտեների ներկայացված կազմը:


Կոնգրեսի խորհրդակցական կոմիտեի կազմում ընտրվում է նաև Տ. Պարզե եպիսկոպոս Գևորգյանը, հանուն Հայ Եկեղեցու:

Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական համաշխարհային Պրագայի երկրորդ կոնգրեսը իր աշխատանքներն ավարտում է հուլիսի 3-ին, ուրբաթ, գիշերվա ժամը 8-ին, նորընտիր նախագահ դոկտ. Լ. Հրոմատկայի եզրափակիչ ճառով և գահաբանական աղոթքով:

Հուլիսի 4-ին մեկնում են պատգամավորական որոշ խմբեր:

Հուլիսի 5-ին, կիրակի, Մոսկվա է մեկնում Հայ Եկեղեցու պատգամավորությունը և հուլիսի 7-ին ժամանում Ս. Էջմիածին:









ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, վերջերս համալրվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը, գրականագետ Գրիգոր Հակոբյանին հրավիրելով իբրև մնայուն անդամ: Հուլիսի 2-ին պր. Գրիգոր Հակոբյանը մասնակցեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստին:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, հատենի ժողովո, պր. Գրիգոր Հակոբյանի ներկայությունը և մասնակցությունը նիստին ջերմորեն ողջունեցին Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ զերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյանը և ճարտարապետ Միքայել Մաղմանյանը:

Վեհափառ Հայրապետը, ցանկանալով նաև «Էջմիածին» ամսագրի աշխատանքներին ներգրավել մտավորական նոր ուժեր, մնայուն հանգամանքով որպես Խորհրդատու և գործակից գլխավոր խմբագրին, հանձնարարեց կազմել խմբագրական մարմին:

Վեհափառ Հայրապետի թելադրությամբ կազմվեց «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը հետևյալ կազմով:

1. Պրոֆ. Առաքել Առաքելյան, անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի և դասախոս Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի:

2. Սարգիս Մելիքսեբյան, դիրեկտոր Երևանի գրականության և արվեստի թանգարանի:

3. Արթուր Հատիտյան, ամսագրի գլխավոր խմբագիր և դասախոս Հոգևոր Ճեմարանի:

4. Վահան ծայրագույն վարդապետ Տերյան, Այրարատյան թեմի հայրապետական փոխանորդ, միաբան Մայր Աթոռի:

5. Արսեն վարդապետ Բերբերյան, միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և գավազանակիր Վեհափառ Հայրապետի:

6. Սուրեն Քոլանջյան, ավագ գիտաշխատող Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարանի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը իր լրիվ կազմով հուլիսի 15-ին ներկա եղավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստին:

Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ զերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և ճարտարապետ Միքայել Մաղմանյանը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, ջերմորեն ողջունեցին խմբագրական մարմնի կազմությունը և նրա ներկայությունը նիստին հաջողության, շնորհավորության սրտագին բարեմաղթություններով:

Գլխավոր խմբագիր Ա. Հատիտյանը և խմբագրական մարմնի անդամ Ս. Մելիքսեբյանը, հանուն խմբագրական մարմնի, շնորհակալության պատասխան խոսք ասացին:

* *

Հուլիսի 5-ին, կիրակի, Վարդավառ, «Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մայր Տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Ծւայլակերպս եղև առաջի նոցա» ֆրիլի պայծառակերպության մեծ դեպքին նվիրված խորհրդածություններով: Վուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հուլիսի 6-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը: Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»:

* *

Հուլիսի 6-ին, երկուշաբթի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին Պարսկաստանում նորվեգիայի դեսպանը իր հարգելի տիկնոջ և աղջկա հետ, ինչպես նաև հայտնի վիրաբույժ պրոֆ. դոկտ. Բարակովսկին:

* *

Հուլիսի 12-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Ս. Եկեղեցի, ով վկայուհի Ս. Սանդուխտ շարականի խոսքերով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հուլիսի 12-ին, կիրակի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեց Մոսկվայում Կուբայի դեսպան Կարլոս Օլիվարես-Սանչեսը իր հարգելի տիկնոջ և դստեր հետ:

* *

Հուլիսի 15-ին, չորեքշաբթի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող հայ առաջադիմական միության նախագահ պր. Վահան Ղազարյանը ԱՄՆ-ից և Լիբանանի «Սփյուռք» շաբաթաթերթի արտոնատեր պր. Նշան Խոշաֆյանը:

Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, հյուրերը ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

Նորին Ս. Օծությունը զրույց ունեցավ և՛ պր. Վահան Ղազարյանի և՛ պր. Նշան Խոշաֆյանի հետ Սփյուռքի աղգային-եկեղեցական հարցերի շուրջ:

* *

Հուլիսի 15-ին, չորեքշաբթի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին Լեհաստանի տուրիզմի նախագահը իր հարգելի տիկնոջ հետ, ինչպես նաև Մոսկվայում սովորող մի խումբ լիբանանցի ուսանողներ, սովետական զբաղանդության արարքների թարգմանիչ տեր և տիկին Թավիլի գլխավորությամբ:

Վերջիններս ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

* *

Հուլիսի 15-ին, չորեքշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգե եպիսկոպոս Գևորգյանը:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Պարգե սրբազանը մեկնեց հովվական այցելության դեպի Հյուսիսային Կովկաս՝ Օրջոնիկիձե, Արմավիր, Ղզլար, Պրիկովսկ, Ռոստով, Մեծ Սալա և Զալդր:

Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ և Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը կուղեկցի Պարգե սրբազանին իր հովվական այցելության ժամանակ:

* *

Հուլիսի 16-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին, մոտիկից դիտելու եկեղեցուց ներս կատարվող նկարազարդումների (ֆրեսկոյի) աշխատանքները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, ճարտարապետներ Միքայել Մաղմանյանը, Վարդգես Հարությունյանը, Դաֆֆի Իսրայելյանը, Կոնստանդին Հովհաննիսյանը, Բաղդուկ Արզումանյանը, Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը:

Վեհափառ Հայրապետը, նկարիչ Մարտիրոս Սարյանը և Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը տեղում դիտելուց հետո նկարչական բարեհաջող աշխատանքները, արեցին մի շարք դիտողություններ և թելադրություններ:

* *

Հուլիսի 16-ին, հինգշաբթի, երեկոյան Մայր Տաճար այցելեց լեհ կինոդերասանների մի խումբ: Հարգելի հյուրերը ընդունվեցին նաև Վեհափառ Հայրապետի կողմից:

* *

Հուլիսի 17-ին, ուրբաթ, Հոգևոր ճեմարանի ուսանողները միօրյա զրոսարշավի գնացին դեպի Արագած և Ամբերդ:

* *

Հուլիսի 18-ին, շաբաթ, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն արժանապատիվ Տ. Հայկազուն ավագ-քահանա Ոսկերչյանի մահվան տարելիցի առթիվ:

Հոգեհանգստյան արարողության նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Խոսեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, վեր հանելով հանգուցյալի հոգևոր, կրթական և ազգային գործունեությունը:

* *

Հուլիսի 19-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *


Հուլիսի 20-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 8-ին, դեպի Կիսլովոդսկ մեկնեց Վեհափառ Հայրապետը, մի ամսով հանգստանալու համար:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը:

* *

Հուլիսի 26-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս պարտ է բարձրանալ Որդոյ Մարդոյ» բնաբանով:





Հ. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԱԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՀԱՐԸ

ԺԳ դարը հայկական արծաթագործական արվեստի ոսկեդարն է, իսկ նույն դարի վերջավորության պատրաստված «Խոտակերաց Ս. Նշան»-ի մասնատուփը կամ պահարանը՝ նույն արվեստի գոհարը:

Տվյալ ժամանակաշրջանում իր գոյության ամենաբեղուն տարիներն էր բոլորում Գլաձորի համալսարանը, որտեղ աճել և աճում էր մատենագիրների և մանրանկարիչների մի ամբողջ սերունդ և ուր գալիս էին սովորելու Հայաստանի հեռավոր անկյուններից ու Կիլիկիայից: Գլաձորի համալսարանի սաներից են մանրանկարիչներ Մովսիկը և Թորոս Տարոնացին, որոնք ունեցել են իրենց հետևորդներ և կազմել նկարչական մի ուրույն դպրոց¹: Պոռչանների տիրապետության տակ զարգացող և նրանց նյութական ու բարոյական աջակցությունը վայելող այս համալսարանը, որն իր շուրջ էր բոլորում ժամանակի հայ մտավորականության զգալի մասը, ազդել է տվյալ ժամանակաշրջանի մի շարք արվեստների զարգացման ընթացքի վրա:


Կարծում ենք, որ վերոհիշյալ մտավոր կենտրոնի ազդեցության ոլորտներում է զար-

գացել նաև նույն դարի հայկական արծաթագործական արվեստը: Դժբախտաբար տվյալ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանից մեզ հասել է միայն մի աշխատանք, սակայն այնպիսին, որն իր բարձր մակարդակով վկայում է բոլոր կորածների թե՛ քանակի և թե՛ որակի մասին: Խոտակերաց Ս. Նշանի մասնատուփի նման բարձրարվեստ մի աշխատանք կարող էր գոյություն ունենալ միայն այնտեղ, ուր կային տարիների ժրջան աշխատանքով լի ավանդություններ և բարձրորակ նկարչություն և քանդակագործություն:


ԺԳ—ԺԳ դարերի կիլիկյան հայկական արծաթագործական արվեստից մեզ են հասել երեք բարձրորակ աշխատանքներ: Վերոհիշյալ «Խոտակերաց Ս. Նշան»-ի և կիլիկյան երեք դրվագումների ոճերի միջև կա որոշ կապ, օրինակ մագերի, աչքերի և դարդանկարների գծագրման և ներքին դասավորման բնագավառներում: Սակայն հակառակ Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի արծաթագործական արվեստների միջև գոյություն ունեցող ոճային կապերի, ակներև է, որ սույն աշխատանքը չի կրում ժամանակի կիլիկյան ճաշակի և հասկացողությունների ազդեցությունը:

«Խոտակերաց Ս. Նշան»-ը 42×26×5 սմ. չափերով, միջին ծավալի մի մասնատուփ է,

¹ Ա. Ավետիսյան, «Էջմիածին», 1956, № 8—9, էջ 102:



Նկար 1




Նկար 4

որը զրկագլած է 0,5 միլիմետր հաստությամբ արծաթ թերթերի վրա, իսկ ավարտվելուց հետո ոսկեզրված, հավանաբար սնդիկի միջոցով, որն այն ժամանակ որևէ մետաղ ոսկու շերտով պատելու միակ միջոցն էր:

Փակ վիճակում (նկար 1) մասնատուփի վրա երևում են տասը մարդկային կերպարանքներ, զրկագլած համապատասխան իրենց կարգին և տեղին: Ամենավերջը, կենտրոնում, Հիսուս բազմած է չորեքկերպյան ավետարանիչների միջև (նկար 2): Հեղինակը արտահայտում է այն միտքը, որ չորս ավետարանիչների միջոցով է, որ մեզ հասնում է Քրիստոսի Ավետարանը: Քրիստոսի գլխի և դեմքի մազերի հարդարումը արևելյան² է, իսկ գլխի շուրջ ունի խաչանիշ մի լուսապսակ, տիպիկ հայկական խաչազուխներով: Ինչպես հայտնի է, լուսապսակի մեջ նկարված խաչը վերաբերում է միայն Քրիստոսին² և խորհրդանշում է փրկության խաչի միջոցով: Ձախ ձեռքում կա Ավետարան, իսկ աջով խաղաղություն է տալիս: Կոնստինթինոսը զրկագլած է այնպիսի ներուժյամբ, որ դիտողի վրա թողնում է մետաքսի տպավորություն, որը շատ հազվադեպ է ստացվում արծաթի վրա: Ամբողջությունը շրջանակված է մի մեղալիոնի մեջ, որի ընդհանուր ձևը հաճախ կրկնվում է հայկական արծաթագործական արվեստի մեջ, մինչև ԺԺ դարի Վասպուրականի և Սյունիքի դարձյալներում: Ներսիսում, Հիսուսի գլխի երկու կողմերին, կա ար-

ձանագրություն՝ ՅՍ ՔՍ: Մեղալիոնի ձախ և աջ կողմերին կան երկու երկարածիգ հրեշտակներ, որոնք ձեռքներին ունեն երկարավիզ խաչազուխ մականներ, թեթևած դեպի Փրկիչը: Միջնադարյան արվեստների մեջ մականը իշխանություն և հեղինակության նշան է և այն ընդհանրապես արվում է իշխաններին և մասնավորաբար Գաբրիել հրեշտակին: Սույն հարդարման մեջ հրեշտակները անվանակոչված չեն և կարծում ենք, որ նրանց մականները խորհրդանշում են կենտրոնի Քրիստոսի իշխանությունը և օգտագործված են փոխաբերական իմաստով, թելադրված հարդարման ձևից: Նրանց ներքնաշապկի և վերնաշապկի քանդակումներն էլ նախորդի նման կատարված են վարպետության բարձր մակարդակով, իսկ նրանց դեմքերի և վզների թեթևածությունը դեպի կենտրոնական կերպարը, նրանց տալիս է հարգանքի ուժեղ և համոզիչ արտահայտություն: Հրեշտակների թևերի վերևի, ուսերի մոտի մասերը զրկագլած են տիպիկ հայկական վե-



Նկար 2

րագրյալ զարդերով, որոնք հետագա դարերին հաճախ օգտագործվում են հայկական արծաթագործության և ընդհանրապես զարդարված մեջ: Նրանց ոտքների կոշիկների ձևերը ցույց են տալիս, որ ԺԳ դարում Հայաստանում գոյություն են ունեցել ցածրակրունկ շատ նուրբ կոշիկներ, որոնց դիտում մեզ համոզում է նրանց ճկունության և փափկության մասին:

Վերահիշյալ երեք կերպարանքների ներքևի կամարի տակ սկսում են երկու զոնակներ, որոնց շուրջի զարդաքանդակները սերտորեն կապվում են զոնակներից այն կողմ գտնվող զարդաքանդակների հետ: Սրանք լարային, ձիգ զարդաքանդակներ են, որոնց զծագրությունը կատարված է վարպետության և նյութի (արծաթի) զգացողության բարձր մակարդակով: Դոնակների վրա, երկարածիգ և ամբողջ հասակով, քանդակված են ձախից (դիտողի կողմից)՝ Գրիգոր Լուսավորիչը, իսկ աջից Հովհաննես Մկրտիչը: Գր. Լուսավորչի զգեստավորումը պարզ է՝ շապիկ, շուրջառ և եմփորան: Նրա հողաթափերը նրբաձև են ու ոտները սովորականից փոքր, շեշտելու համար նրա ձիգ հասակը: Ձախ ձեռքի փոքրիկ Ավետարան է բռնած, իսկ աջով խաղաղություն է տալիս: Գլխավերևի լուսապսակը երկված է զիգզագ շարանով, որի նմանը կանաև ներքևի եմփորոնի եղբրին, սակայն սույն եմփորոնի դիտումը մեզ թելադրում է, իր կատարմամբ, ավելի շատ մարգարտաշար քան զիգզագ, թեև որոշ տեղերում այն կտր հատիկներ չունի: Մարգարտաշար ուլունքներ հաճախ են օգտագործվել հայ եկեղեցական զգեստների մեջ, որոնց մասին ունենք վկայություն ոչ միայն ներկայի իրեղեն ապացույցներով, այլ նաև անցյալի մասին վկայություններով, որոնցից կարելի է հիշել

² G. Fergusson, "Signs and symbols in Christian art", New-York, 1961, p. 145.

վ. Լանգլուայի վկայությունը Կիլիկիայի ԺԳ դարի մարգարտադարձ հմիփորոնի մասին³։ Գլխից վերև, մեղալիոնի մեջ կա փակագիր արձանագրություն՝ «Սբ. Գրիգոր»։ Նա գլխաբաց է։ Նույն ժամանակաշրջանում մեծ բանակով էր մղվում հայ և լատին եկեղեցիների միջև պատարագի զգեստավորման հարցում և լատինները պաշտպանում էին գլխափակ զգեստավորումը։ Այստեղ Գրիգոր Լուսավորչի գլխաբաց վիճակը ցույց է տալիս, որ տեղի (Սյունիքի) հայ եկեղեցիներում այդպիսի օտար ազդեցություններ չեն ներգործել։

Ինչպես գիտենք, Սսի 1342 թվականի ժողովը, պատասխանելով լատինների ամբաստանության, թե ի Հայս ռոմանք պատարագեն հասարակաց զգեստաբ և ոմանք զգենուն զսրբազան հանդերձս», ասում է, թե «Մեք ի փոքր Հայաստան... յորժամ պատարագեմք զգենումք զսրբազան հանդերձս», ուր վերին Հայք, ասում է, հակառակն են անում և մենք մեր կարողության չափով նրանց խրատում ենք։ Կային նույնպես պատարագի զգեստավորման դեմ բացահայտ ըմբոստացողներ, որոնցից Մխիթար Սասնեցին, հենվելով առաքելական վկայության վրա, բավական է համարում «... զինքնանս զարդարել սրբութեամբ և մարբրութեամբ հոգույ... և թէ ոք ասիցէ անմաքուր և զազրատեսակ զգեստիւ ոչ է արժան մատչել ի սպասաւորութիւն ահաւոր խորհրդոյն, ասեմք եթէ զի՞նչ արդեօք այլ ինչ իցէ զազրագոյն և ի պղծութիւն համարեալ քան զներկուածս մետաքսից և կերպասուց»⁴։ Մեկնաբանություններն ավելորդ

են։ Արևելյան Հայաստանում գլխաբաց զգեստավորումը տոհմիկ ավանդությունների պահպանման լավագույն արտահայտություններից մեկն է։

Գր. Լուսավորչի դիմահարդարումը նման է վերևի։ Քրիստոսի դիմահարդարման, սակայն ավելի թալ մօրուքով։ Ուշագրավ է աչ դռնակի վրայի Հովհաննես Մկրտչի երկարածիգ և հաղթանազամ պատկերաբանակը։ Նրա գլխավերևի մեղալիոնի մեջի փակագիր արձանագրությունը՝ «Ս. Յվնէս» ոչինչ չի ավելացնում դիտողի ընկալման և ճանաչողության համար։ Հագուստների ձևերը, իրենց մեղ և կյան ընկած վիճակով, սրունքների ներկուկության և ձեռների շարժումները համոզիչ կերպով ցույց են տալիս մի մարդկային կերպարանք, որը գտնվում է ջրի ափին։ Նրա ոտները իրենց բորբիկությամբ և մեծությամբ հակադրվում են ձախ կողմի Գրիգոր Լուսավորչի նուրբ ոտների հետ։ Նրանում է, որ դրվագողը ցանկացել է այստեղ ցույց տալ մի անձնավորություն, որը սովոր է ջրի ափին ֆիզիկական աշխատանք կատարելու։ Նա, դիտումնավոր կերպով, մի քիչ ավելի հաղթանազամ է քանդակված, քան Գրիգոր Լուսավորիչը, նկատի ունենալով, որ Հովհաննես Մկրտչը այստեղ ներկայանում է որպես քրիստոնեության մեծագույն տարածողը ամբողջ աշխարհում, իսկ Գրիգոր Լուսավորիչը՝ այն Հայաստանում տարածողը։ Նմանօրինակ զուգակցության մենք հանդիպում ենք խոտակերաց Ս. Նշանից յոթ տարի առաջ (1293 թ.) պատրաստված Սիկևայի մասնատուփի վրա, ուր երկու դռնակների վրա դրվագված են Գրիգոր Լուսավորչի և Թադեոս առաքյալի նույնպես երկարածիգ կերպարանքները, որպես Հայաստանում քրիստոնեությունը հիմնողի (Ս. Թադեոս) և տարածողի (Ս. Գրիգոր Լուսավորիչ), ինչպես նաև ավելի ներքև Ս. Սարատիոսի՝ որպես քրիստոնեության պաշտպանի ընդհանրապես և Ս. Վարդանի, որպես Հայաստանում քրիստոնեության պաշտպանի։ Այսօրինակ թեմատիկ բաղդատություններ առանձնահատուկ են ընդհանրապես երկփեղկ մասնատուփերի, որոնց շարժականությունը թույլ է տալիս այսպիսի վերաբերմունք։

Դռնակներից դուրս, ձախ և աջ երիզների վրա, քանդակված են Մարիամ Աստվածածնի (ձախից) և Հովհաննես ավետարանչի կերպարանքները, կանգնած վիճակում։ Նրանց ներկայությունը սույն մասնատուփի վրա, փակ վիճակում, չի բացատրվում։ Սակայն եթե նկատի ունենանք, որ նրանք դրվագված են այն նույն արժաթ թերթի շարունակության վրա, որի կենտրոնում կա ներսի խաչը, այն դառնում է հասկանալի և կազ-



Նկար 3

³ V. Langlois, «Voyage dans la Cilicie...», Paris, 1862.

⁴ 2. Վ. Հաջունի, «Պատմություն հին հայ տարազին», Վենետիկ, 1928, էջ 319—320.

վում է խաչելության բնական պատկերը՝ Աստվածածին, խաչ կամ խաչելություն և Հովհաննես Մկրտիչ:

Ներքևի երկդի վրա, զոնակներից ցած, քանդակված են երեք մարդկային կերպարանքներ, որոնցից կենտրոնինը սույն մասնատուփի նվիրատու իշխան էաչի Պոռշյանի կիսանդրին է (նկար 3), իսկ երկու կողմերին՝ Ս. Պետրոս և Ս. Պողոս առաքյալներին:

էաչի Պոռշյանի կիսանդրին պերճախոս կերպով վկայում է այն մասին, որ թեև Հայ ճեղհեցուց ներս տարազների հարցում քիչ են օտար ազդեցությունները, սակայն այլ է վիճակը աշխարհիկ տարազների, ուր ակներև են օտարամուտ ազդեցությունները: Ինչպես նաև հայտնի է, նույն դարի կեսերին, 1251 թվականին, Սմբատ Օրբելյանը այցելեց Մանգուխանին, տանելով նրան իբրև նվեր մեծագին մի գոհար, որ տվել էր իրեն Ռուսուգանի որդին՝ Սվանեթի Դավիթ թագավորը: Մանգուխանի մոտ երեք տարի մնալուց հետո, Ս. Օրբելյանը վերադարձավ Ղարադոլումից հայրենիք 1253 թվականին, մեծ խաչի (Մանգուխի) կողմից ճանաչվելով իբրև ինչու (սենչու), այսինքն՝ իբրև ինքնուրույն իշխան⁵: Դրա շնորհիվ հավաքված հարկերի մեծ մասը մնաց Սյունիքի ներսում, սակայն, անկախ իրենց առաջ բերած տնտեսական բարիքներից, այսպիսի այցելություններ, ավելացած առանց այն էլ գոյություն ունեցող մոնղոլական տիրապետության, կարող էին վնասել աղզային տարազների պահպանմանը⁶, ինչպես երևում է էաչի Պոռշյանի կիսանդրուց: Սույն քանդակի վրա իշխանը (էաչին) կրում է բոլորակ եզրերով գլխարկ: Այս մասին Գ. վարդապետ Հովսեփյանը գրում է. «Իշխանի գլխարկը նման է Բուրթելի և Ամիր Հասանի գլխարկներին, բոլորակ եզրերով և կենտրոնում զմբեթանման բարձրությամբ: Բուրթելի գլխարկը զմբեթի զազաթին ունի սրածայր վերջավորություն: Տարաբախտաբար Ամիր-Հասանի գլխարկի ծայրը փշացած է և միջոց չունենք համեմատելու, ընդհանուր էր այդ մասը իշխանական գլխարկներին, թե ոչ: Համեմայն զեպս էաչին չունի: Սարգիս Պիծակի նկարած մի պարիկ (մարդկային գլխով թռչուն) ԺԴ դարում զմբեթավոր թագ ունի գլխին: Կարող ենք ասել, թե թաթարական շրջանի իշխաններին հատուկ էր այդ ձևի գլխարկը⁷: Նրա հագուստները հարթ են, զարդանկարներով, ա-

ռանց զոտու, սակայն ձախ ուսից աչի թևատակը ձգվում է մի կամար, որը հավանաբար մետաղակերտ է: Դիմային արդուզարդը հատուկ է նույն շրջանին՝ մորուսավոր, կախ ընկած բեղերով, թաթար ուղմիկների նման:

Ինչպես մեզ հայտնի է, նույն դարի հայ իշխաններից շատերը, որոնցից նաև էաչի Պոռշյանը, մասնակցել են թաթարների հետ համատեղ ուղմական արշավանքների և այս մի առիթ էր, որ բարբերի և ճաշակների բնագավառում տեղի ունենալին փոխադարձ ազդեցություններ, հաճախ ի վնաս հայկականի:



Նկար 4

էաչի Պոռշյանի սույն կիսանդրին, վերև հիշված Քրիստոսի քանդակի նման, տիպիկ հայկական շրջագծով, մեղալիոնի մեջ է և էաչու ձեռամբարձ արտահայտությունը նրան սերտորեն կապում է երկու անկյուններում քանդակված Պետրոս (ձախ) և Պողոս (աջ) առաքյալների կիսանդրիների հետ, որոնք իշխանին են մասնացույց անում: Այստեղ երկու առաքյալների ձեռքերին կան Ավետարաններ և նրանց կերպարների վրա չկան այն ստորգծվածները, որոնք ընդհանրապես բնորոշում են նրանց, օրինակ, Պետրոս առաքյալի բանալին և այլն:

Կենտրոնի կիսանդրու երկու կողմերին կա արձանագրություն, կիսված իշխանի կերպարով, ուր դրվագված է հետևյալը. «Սբ. Նշան


⁵ Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Գ, Երևան, 1952, էջ 253:

⁶ Հ. Վ. Հացունի, նշված աշխատությունը, էջ 217:

⁷ Գ. վարդապետ Հովսեփյան, «Սոսականերաց Ս. Նշան», «Երեզարվեստ» հանդես, Թիֆլիս, 1912, էջ 6:

տէրունական, դու էաշու լեր օգնական, թվ. 2նթ (1300)»:

Դռնակները բացելիս պարզվում է գեղատեսիլ մի խաչ (նկար 4), որը պատրաստված է անասնին արծաթ թերթի վրա և դարձադրված է զուգաթել պարաններով և ակներով: Խաչի կենտրոնում և 4 թևերի վրա կան 19 ակներ, որոնցից՝ 1 սպիտակ, 2 բաց կապույտ (արվեստական), 8 նոնաքար (իսկական): Մնացածները այժմ պակասում են: Կենտրոնի և նրանից վերև և ներքև գտնվող ակների շրջանակների շուրջ կան մանր մարգարտաշարաններ, իսկ ակները եզերող շրջանակներին միմյանցից բաժանում են զուգաթել պարաններից պատրաստված մեջքնդմեջ զույգ օղակներ, որոնց ներսիները ուղղված են դեպի կենտրոնի մեծ ակը: Խաչերի թևերի ծայրամասերը շրջանակված են այն շրջազարդ պարանով, որը գոյություն ունի Մատենադարանի № 7690 ձեռագրի կաղմի արձանագրության շուրջ: Այս խաչին ֆոն է կազմում շատ գեղեցիկ բուսական և կենդանական զարդանկարների մի կոմպլեքս, որի ստորոտում կան երկու եղնիկներ (նկար 5): Այստեղ զարդա-



Նկար 5

նկարները թեև մի քիչ գրաֆիկական են հնչում, սակայն նկատի ունենալով, որ նրանք ծածկում են մի դատարկ տարածություն, չեն կատարում ֆունկցիոնալ դեր և զրկագված են թեթև գծային և կետային տեխնիկայով, ազդեցիկ և հուզական են իրենց պարզությամբ: Իսկ բացված դռնակների ներսում, երկարաձիգ, կանգնած վիճակում՝ Միքայել (ձախից) և Գրգորիե ճրեշտակապետները ձեռքներին երկարավիզ խաչագուլի մականներ, որպես նշան իշխանության: Լուսապսակներով շրջանակված նրանց գլուխները թեքված են դեպի կենտրոնական խաչը և նրա հետ կազմում են մի այնպիսի հարդարում,

որը, թեև անանձին կտորներից բաղկացած, թողնում է մի ամբողջության տպավորություն: Նրանց հանդերձանքը հիշեցնում է վերևի երկու ճրեշտակներին:

Սույն խաչի վրայի ակնակուռ մասը կրում է հետագա նորոգության ակներև նշաններ, քանի որ վերոհիշյալ զույգ օղակների և ընդհանուր աշխատանքի ոճերը նույնը չեն: Հավանաբար նորոգության ժամանակ պակասող ակների շրջանակները ընդելուզված են արվեստական ակներով: Դժվար է այլ կերպ բացատրել գոյություն ունեցող մի քանի գույնի ակների գոյությունը, որոնք հազիվ երկու հարյուր տարվա հնություն ունեն: Կարծում ենք, որ վերոհիշյալ ակներից միայն նոնաքարերն են, որ հին են և մասնատուփի պատրաստման ժամանակակից: Համենայն դեպս, խաչի ընդհանուր ձևը փոփոխված չէ, քանի որ նրա շրջագիծը թելադրված է ընդհանուր ֆոնին մաս կազմող շրջազարդով:

Այն բոլոր պատկերաքանդակները, որ այստեղ նկարագրեցինք, որպես ֆոն ունեն ծաղկանկարներ, որոնցից՝ կան նաև կենտրոնի խաչի շուրջը և նրանցից ոչ մեկը մյուսի իրկությունը չի կազմում: Պատկերաքանդակների անմիջապես շուրջը և շրջանակներից ներս կան ազատ տարածություններ, իսկ մնացած տարածության վրա կան վերոհիշյալ ծաղկանկարներ, որոնց բացակայության դեպքում սույն աշխատանքի դիտումը կարող էր թողնել դատարկ և անբավարար տպավորություն:

Ինչպես տեսնում ենք, այս աշխատության վրա սրբանկարները ընդհանրապես չեն գրավում այն առաջնահերթ տեղը, որ նրանք գրավում են կիլիկյան արծաթադրժության մեջ, օրինակ, Սկևռայի մասնատուփի վրա:


Սվիրատուի (Էաչի Պոռչյանի) և ստացողի (Խոռոզկերաց Ս. Նշան վանքի) մասին պարզորոշ գաղափար է տալիս ետևի կողմի գեղեցիկ և ներդաշնակ տառերով գրվագված արձանագրությունը (նկար 6): Վերոհիշյալ տառերը սեռած են երկաթագրի նուրբ ձևերից, և բաղմիցս զարդարված են մանրանկարական մոտիվներով: Ոճային տեսակետից այս մոտիվները արձանագրության տառերը կապում են երեսի ձևավորման և զարդարման ոճի հետ, ստեղծելով հաճելի և ներդաշնակ միաձուլվածություն:

Արձանագրությունը հետևյալն է.

«Կամաւ կարողին Այ ես էաշ-
ի որդի Հասանա որդո Պոռչա
որդո մեծին Վասակա յազգէ
Հաղբակեանց տիրեցի հայրենի երկր-
իս իմ Շապուռեանց և այլ յով-
ով գաւառաց զարաւիգն և օգնա-

8 Հ. Տեր-Ղևոնդյան, «Կիլիկյան հայկական արծաթադրժության պատմությունից», «Պատմա-բանասիրական հանդես», Սրբան, 1963, № 4, նկար 4:

կան ունեւում զՔս և զՍր նշանս
 հոտակերաց որով և նախնիքն իմ
 զօրացան: Ետու կազմել պահարան
 սմին անջինջ յիշատակ: Որ-
 ք հանդիպիք սմա շիս և զծն-
 ողսն իմ զԱմիր Հասան և զԹ-
 աճերն և զհաւերեղայրն ի-
 մ զՊապար յաղաթս յիշե-
 ցէք, ալ և զամենայն նախ-
 նիսն մեր և զազգատոհմս:



Նկար 7

Վերոհիշյալ արձանագրութիւնից պարզ-
 ւում է, որ այս մասնատուի-պահարանը
 պատրաստված է որպէս հաղթանակի յուրա-
 տեսակ կոթող, նրա (էաշի Պոռշյանի) հայրե-
 նի երկրին տիրելու առիթով:

Պահարանի կողերը զրվագլած են բուսա-
 կան մոտիվներից կազմված պիրի զարդա-
 նկարներով: Երջազարդի երկու կողերը իրա-
 րից տարբերվում են մոտիվներով, սակայն
 միատոն են: Նրանց հյուսածո լուծումը շատ
 յուրահատուկ է հայկական մանրանկարչու-
 թյան մեջ հաճախ օգտագործված լուսանցա-
 զարդերին և այս տեսակետից նրանք բիշ ար-
 քեր են ներկայացնում: Սակայն տվյալ դեպ-


քում նրանք ունեն նյութի (արծաթի) հետ
 շաղկապվելու բացառիկ հատկութիւնը:

Առանձին մասերը իրար միացած են արծա-
 թաղուխ փոքր դամբրով, որոնցից այժմ որոշ
 մասը պահպանում է: Հավանաբար անցյալի
 նորոգութեան ժամանակ այս պահարանի ներ-
 քին փայտակերտ մասը փոխված է, տեղի
 տալով վերակաղմութեան և այս պատճառով
 էլ որոշ թվով դամբր չեն տեղավորվել և կամ
 ոչ տեղին ամրացված լինելու պատճառով կո-
 րեկ են:

Սույն աշխատութիւնը զրվագլած է հետե-
 յալ կերպով: Ամենաբարձրը մարդկայի՝
 կերպարանքներն են, միշին բարձրութեամբ
 եղրազարդ զարդանկարները և արձանագրու-
 թիւնները, իսկ ամենացած զրվագլածները
 մարդկային կերպարանքներին որպէս ֆոն
 ծառայող դարձգարձիկ զարդանկարներն են:
 Վերոհիշյալ երեք աստիճանի զրվագլածները
 նպատակ ունեն այն հանգամանքին, որը հնա-
 րավոր է դարձրել մարդկային կերպարանք-
 ներին տալու այն աչքառու տեղը, որ նրանց
 համար նախատեսել է հեղինակը:

Պահարանի վրա օգտագործված են մի բա-
 նի եղրազարդ պարաններ, որոնք հետագա
 դարերի հայկական արծաթագործութեան մեջ
 բազմիցս օգտագործված են թե՛ ձեռագրա-
 կազմերի և թե՛ աշխարհիկ զարդերի վրա:

«Խոտակերաց Ս. Նշանի»-ի բոլոր պարա-
 նազարդերը (բացի հետագա նորոգութեան
 արդյունք հանդիսացող խաչի վրայիններից),
 ունեն բացառիկ մի առանձնահատկութիւն,
 այն, որ զրվագլել են հիմնական արծաթ թեր-
 թերի վրա և ոչ թե աշխատանքը ավարտվե-
 լուց հետո այնտեղ մածուցված, ինչպէս
 բազմիցս հանդիպում ենք հետագա դարերի
 հայկական արծաթագործական աշխա-
 տանքների վրա: Նույնպէս ֆոնների զրվա-
 գլումները (տե՛ս նկար 7) շատ ինքնատիպ և
 ուշադրաւ են, կատարված որակի և ճաշա-
 կի բարձր մակարդակով և ոչնչով չեն հա-
 մեմատվում հետագա ԺԴ, ԺԵ և ԺԶ դարերի
 աշխատանքների հետ, որոնցում ակներև է
 շտապողականութիւնը, հետևաբար և անո-
 րակութիւնը:



Նկար 6

Սույն մասնատուփի և հետագա դարերի ձեռագրակազմերի դրվագման աշխատանքների լուրջ ուսումնասիրությունը մեզ հասցրել է այն եզրակացության, որ «Խոտակերաց Ս. Նշան»-ի դրվագման և մշակման աշխատանքների համար օգտագործվել են այնպիսի դրվագիչներ, որոնց ծայրամասի հավան կետերը բոլորովին այլ ֆակտուրա են ունեցել քան հետագա դարերինը:

Ինչ վերաբերում է «Խոտակերաց Ս. Նշան»-ի մեզ անհայտ հեղինակին, կարող ենք ասել, ելնելով նրա դյուրասահ և հստակ ոճից, որ նկարիչն ու կատարողը հավանաբար նույն անձն է եղել, նկատի ունենալով, որ այն դրվագված է վստահ և պինդ ձեռքերով:

Ձոռների դրվագման կատարումը դիտողին գրավում է իր հեշտ կատարման հնարավորություններով: Գծային, աննշան ուլիվաֆեներով, ծաղկանկարներից դուրս մնացած տարածու-

թյունները ծածկված են մանր, կետանման գծիկներով: Թվում է, թե դյուրասահ գծերը գծագրված են մի թեթև գրչի ձեռքով, ինչ-որ փափուկ նյութի վրա, սակայն այն կատարված է դրվագման ամենախիստ օրենքների համաձայն՝ մուրճի և դրվագիչի օգնությամբ, առանց ավելորդ մշակումների: Վերոհիշյալ ֆոնների դիտումը մեզ թելադրում է այն կարծիքը, որ ԺԳ դարի Արևելյան Հայաստանում գոյություն է ունեցել դրվագված զարդերի արտագրություն և ուր օգտագործվել է սույնանման կամ մի քիչ այլ դյուրասահ և հեշտ ոճ: Թեև այժմ մեր տրամադրության տակ չունենք ոչ մի նմուշ վերոհիշյալ դրվագված զարդերից, սակայն այս ֆոնների դիտումը մեզ այլ կարծիքի չի առաջնորդում: Իսկ մարդկային կերպարանքների և նրանց դիմաքանդակների կատարումը ցույց են տալիս, թե ի՞նչ բարձր որակի գծանկարչություն և քանդակագործություն է գոյություն ունեցել Արևելյան Հայաստանում, վերոհիշյալ դարում:



ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԸ

Նորայր Բյուզանդացին ծնվել է 1844 թվա-
դանի մարտի 4-ին, Կոստանդնուպոլսում:
Հայ դասական բանասիրության այս բազմա-
մուտ գործիչը ավելի քան կես դար հետա-
զոտել է մեր դարավոր մատենագրությունը և
գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնք
հայտնի են իրենց հազվագեղ սրամիտ վճիռ-
ներով: Դժվար է գտնել մեսրոպատառ դպրու-
թյան արշալույսին ստեղծված որևէ գրավոր
հուշարձան, որի ուսումնասիրությամբ զբաղ-
ված չլինի հմուտ գիտնականը: Կորյունին,
Ծղերիկ Կողբացուն, Ագաթանգեղոսին, Փավս-
տոս Բուզանդին, Ղազար Փարպեցուն, Մով-
սես Խորենացուն, Հին Կտակարանի Մակա-
րայեցվոց գրքին և այլ երկերի նվիրված նրա
հետազոտությունները ճանաչված են որպես
հայ քննական մտքի ամենափայլուն նվա-
ճումներ: Բազմաշխատ գիտնականը ուսում-
նասիրություններ է նվիրել նաև Ստեփանոս
Տարոնեցի Ասողիկին, Թովմա Արծրունուն,
Վարդան Արևելցուն, միջնադարյան տաղա-
սացներ Նահապետ Քուչակին, Դավիթ Սալա-
ծորցուն, կարևոր ճշգրտումներ է մտցրել մի
շարք մատենագիրների երկերում, խմբագրել
է «Բազմավեպ» ամսագիրը, Շվեդիայում,
մենակ, հրատարակել է «Քննասեր» ժողո-
վածուն (վիմատիպ), հոգևածներ է հրատա-
րակել «Հանդես ամսօրյա», «Հումա», «Բա-
նասեր», «Մասիս», «Փունջ», «Մշակ» և այլ
պարբերականներում, կազմել է գաղղիերեն—
հայերեն բառարանը, հայերենի է թարգմանել
Ռենանի սեմական լեզվի պատմությունը և
այլն:

«Բոլորովին ուժասպառ եմ սրտնեղությամբ
և մտավորական հոգնությամբ: Հիսուն տարի
ավելի աշխատած եմ հայ հին մատենագրու-
թյունը և մատենագիրները ուսումնասիրելով,
աշխատած եմ ձրի և ձրի աշխատությունս հա-
լած, մաշած է ղիս»¹,— գրել է նա 1912 թվա-
կանին՝ իր վախճանից երեք տարի առաջ,
Դյուտ քահանա Աղանյանին:

Այսպիսի անմխիթար վիճակում, նյութա-
կան մեծ կարիքի մեջ վախճանվեց մեծանուն
գիտնականը 1915 թվականին, Վենետիկում:
Նրա աճյունը 1924 թվականին Վենետիկից
տեղափոխվեց Շվեդիա և ամփոփվեց Ստոք-
հոլմի գերեզմանոցում, Բյուզանդացու իսկ
կառուցած գերեզմանում:

Ի՞նչ եղան Նորայր Բյուզանդացու հազա-
րավոր էջերից բաղկացած մեծաթեք աշխա-
տությունները, որոնք դեռ պետք է հրատա-
րակվեն և հարստացնեն հայագիտության
ոսկյա ֆոնդը: Ընդամենը երեք-չորս տարի
առաջ լույս տեսած մի գրքում նրա աշխա-
տանքների մասին դեռ կարելի էր կարդալ.
«Հեղինակի մահից հետո անհայտացել է»²:

Ճակատագիրը, սակայն, բարեբախտաբար
իսպառ չի ոչնչացրել մեծ գիտնականի աշխա-
տությունները: Նրանց մեծ մասը պահպանվել
է Շվեդիայում, որտեղ 1882—1903 թվական-

¹ «Նորայր Բյուզանդացու անտիպ նամակներ», տն'ս
«Բանբեր Հայաստանի արխիվներին», Երևան, 1962,
էջ 85:

² Հ. Պետրոսյան, «Հայ գիտնականներ, հրապարակա-
թոսներ, ժողովուրդներ», Երևան, 1960, էջ 65:

ներին ապրել է վաստակավոր գիտնականը իր տիկնոջ՝ Շվեդիայի արքունի նկարչուհի Սելման Նորայրի (Յակոբսոնի) հետ միասին:

1946 թվականին Շվեդիայի Գյոտեբորգ քաղաքի գրադարանի նկուղներում Ս. Լորելլուն հաջողվում է գտնել և կորստից փրկել Նորայր Բյուզանդացու անտիպ գործերը³, որոնցից մեկի վրա Լորելլին մակագրել է. «Վերին աստիճանի անխնամ և անգիտակ են պահվել (Նորայր Բյուզանդացու ձեռագրերը—Գ. Ա.) և իրենցից ներկայացնում են մի կաշա ամեն տեսակ թղթերի»⁴: Լորելլուն չի հաջողվել գտնել Բյուզանդացու բոլոր աշխատությունները, ինչպես նաև հայտնաբերված աշխատությունների զանազան հատվածներ:

Գտնված անտիպ երկերի մի մասի միկրոֆիլմերն ուղարկված են Հայաստան և այժմ պահվում են Հայկական ՍԱՌ գիտությունների ակադեմիայում և մասամբ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Նորայր Բյուզանդացու անտիպ երկերի մասին մինչև այժմ եղած կցկտուր հայտարարությունները ենթակա են լրացման, ճշգրտման: Անճշտությունների կան նույնիսկ Բյուզանդացու հենց Ուլստալա քաղաքում (ուր պահվում են այժմ Նորայրի գործերը) կադմրված և միկրոֆիլմերի վրա գրանցված աշխատությունների ցանկում: Սրա համեմատությունը Հայաստանի Գիտությունների ակադեմիայում ստացված միկրոֆիլմերի հետ տալիս է որոշ տարբերություններ:

Ակադեմիայում պահվող միկրոֆիլմերի համառոտ բովանդակությունը հետևյալն է.

Ա.— Փալատոսի Բիզանդայ Պատմութիւն Հայոց, քարգմանեալ յառուոյն: Գրեաց Նորայր Բիզանդացի» (էջ 1—122):

Ինքը՝ Նորայր Բյուզանդացին այսպես է ներկայացնում երեք մասից բաղկացած իր ուսումնասիրության ընդհանուր բովանդակությունը. «Գրութեանս նպատակն է ցուցնել Փալատոսի Բիզանդեայ աճառատայի կրկնաբանութիւններն, մանկական պարզութիւններն, արեւելեան ոճն, անկանոն ֆեռականութիւնն կամ ռամկական անյարիւր աճեբեական խօսուածներն, ինչպես կը կոչէ Հ. Արսէն Այտընեան («Քննական քերականութիւն», երես 58, 59), կամ աճնոն կալագելն, ինչպէս կ'ըսե Հ. Արսէն Բագրատունի («Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց», երես 630), վերագրելի է ասորի օրինակին, յորմէ թուի թարգմանեալ սոյն գիրքն: Այս կարծեաց ոյժ տալու համար՝ խնամով կը

ներկայացնեմ ընթերցողաց Բիզանդեայ Պատմութեան այն ամէն մասնատրութիւնը, քերականական և բառական ձևերը, ոճերը, խեցիխեղծքներն անգամ, որ հասարակ և թարգմանութեանց յասորականէ կամ յայտնապէս կը մատնեն ասորի բնագիր մը, ապագային թողլով որ ասորերէն լեզուի կատարեալ հմտութիւն մը համարձակութիւն տրինձ վճռաբար խօսելու»:

Ուսումնասիրության առաջին մասում Բյուզանդացին մանրամասն ըննարկում է Փալատոս Բուզանդի երկի շուրջ ստեղծված բանասիրական կարծիքները, հիմնականում՝ նրա՝ որ լեզվից թարգմանված լինելու հարցը: Այնուհետև խոսում է Հայաստանում ասորական գրականության և ասորերենի ունեցած լայն տարածման մասին, նշում է ասորերենի ուսումնասիրության մեծ կարևորությունը, ցարկում է, որ իր ժամանակի հայ բանասերների ոչ ոք չի համացել ասորերենի մեջ, չնայած որ ասորական գրականությունը, ինչպես ինք է ասում, հույն գրականության հետ միասին խոր հետքեր է թողել (սկսած Ն դարից մինչև Թ դարը) ոչ միայն մեր բառապաշարի, այլ՝ քերականության մեջ: Բերում է իր ասածը հաստատող փաստեր, վկայակոչում է պատմիչներին, թվարկում է ասորերենից թարգմանված երկերը և այլն:

Բյուզանդացին ասորերենից կատարված թարգմանություն է համարում նաև Ազաթան գեղոսի պատմությունը («Թարգմանեալ յասորոյն և ապա սրբագրեալ ի յունականէն»):

Թարգմանական գործերը բնութագրելու հետո, հեղինակը անցնում է Փալատոս Բուզանդի Հայոց պատմությանը և գտնում է, որ այս երկը իր մեջ՝ գործածված հատուկ անունների ձևերով, բառային կաղմով և քերականությամբ նույնպես համապատասխանում է ասորերենից թարգմանված մյուս երկերին, մասնավորապես Նվսեբիոս Կեսարացու Նկեղեցական պատմությանը, Հակոբ Մժեքացու երկասիրությանը, Նփրեմի մեկնություններին, ուստի և բնական է մտածել, որ Փալատոսի պատմությունն էլ է թարգմանված ասորերենից:

Իր այս տեսակետն ապացուցող փաստերը շարադրելուց առաջ, ուսումնասիրության երկրորդ մասում, նա ըննարկում է Փալատոս Բուզանդի ինքնության հարցը, ընդունում է, որ նա հույն պատմիչ է, ապրել է Դ դարի վերջին, գրել է վեց դպրություններից բաղկացած մի պատմություն, որի առաջին երկու դպրությունները վերաբերել են օտարներին (դրա համար էլ «Թարգմանիչն զանց ըրած է»): Վերջին չորս դպրությունները թարգմանվել են ասորերենի, որից և թարգմանված է մեղ հասած հայերեն Բուզանդարանը: Վեր-

³ Ս. Լորելլու հաղորդագրությունը տե՛ս «Էջմիածին», 1949, մարտ—ապրիլ, էջ 64—68:

⁴ Բյուզանդացու ձեռագրերի անմխիթար վիճակի մասին տե՛ս անդ:

մինս կրում է երկու հեղինակի հետքերը՝ հույն լեզվաբան Գալստոսի և ասորի եկեղեցական լեզվագիտական, որը այլևայլ փոփոխությունների է ենթարկել Բուզանդարանը:

Ուսումնասիրության այս երկրորդ մասը դրոշմաբան Բյուզանդացին զետեղել է իր ինքնաշարժ ժողովածուում: Միկրոթապավենների հրա գրանցված մասում, սակայն, կան որոշ դրոշմություններ, որոնք Բյուզանդացին ավելացրել է հետագայում. դրանցից են, օրինակ, «Փալստոս» անվան ստուգաբանության լրացումը տվյալները, որով հայտնվում է, որ հարաբերեն «Ֆեվզ» և հայերեն «բաստ» բառերը նույնպես, լատիներեն Faustus-ի նման, նշանակում են «երջանկություն», որն ավելի է փալստոսի անվան հիմքում:

Ուսումնասիրության երրորդ մասը նվիրված է Փալստոս Բուզանդացու Հայոց պատմության մանրակրկիտ լեզվական քննությանը, ասորական թարգմանությունների համեմատությամբ: Սա իր ծավալով ավելի մեծ է, քան նախորդ երկու մասը միասին վերցնելով: «Բուզանդարանի նմանությունն ընդ այլ թարգմանությունների յասորուն», — գրում է Նորայր Բյուզանդացին, — վեց կետերու կր առաջնեմ, որ են հետեւեալ՝ ա. Յատուկ նշանականց ուղղագրութիւն և ձևը, բ. Ասորի լեզուի նմանությունները. քերականական ձևը, բայեւ լատին ինդրառութիւն և խոնարհմունք, որ լատինաւորապէս յասորուն թարգմանութեանց ընդ իր դասուն, գ. Կրկնութիւնը և աւելորդութիւնը, դ. Բառը, բառերի ասմունք, ոճը և անասացումը, աւերոջ պարբերութիւնը, յար և նման թարգմանութեանց յասորականէ, ե. Պարսիկ և յուն բառից յաճախութիւն, զ. Շաղկապը և անկանոն նախագասութիւնը»:

72 էջից բաղկացած այս բաժնում Նորայր Բյուզանդացին ի մի է հավաքել նշված վեց մեթոդներում ներկայացված ընդհանրությունները: Փալստոս Բուզանդի Հայոց պատմությունում և ասորերենից հայերենի թարգմանված մատենագրական հուշարձաններում: Սա մի փոքր քանակությամբ համադրված է, որով մեծ ծառայություններ կարող է մատուցել ոչ միայն Փալստոս Բուզանդով, այլև առհասարակ հայ և թարգմանական մատենագրության ուսումնասիրությանը զբաղվող պատմա-գիտականներին, լեզվաբաններին, պատմա-գիտականներին:

Ուսումնասիրությունն ընդհատվում է 1112-րդ էջում: Ըստ խոստաբանության՝ լատինալեզու է քննարկված լինելու նաև զ կետում նշված բաժինը («Շաղկապը և անկանոն նախագասութիւնը»), բայց այդ չի կատարվել:

Շարունակությունը (էջ 113—118) կրում է հետևյալ խորագիրը. «Փալստոս Բիզանդ և թարգմանութիւնք յասորուն, նմանութիւնք բառից և ասացումոց»: Այստեղ բերված է Փ. Բուզանդի օգտագործած զարկութիւն բառի գործածության օրինակներ նաև Եվսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմությունում, Եփրեմ Ասորու մոտ և ասորերենից թարգմանված այլ երկերում:

Բ. — «Եզերկայ Կողբացայ ձառնք ընդդէմ աղանդոց»:

234 էջերից բաղկացած մի տետրում Նորայր Բյուզանդացին ընդօրինակել է Եզերկ Կողբացու «Եղծ աղանդոց» գործը և պատրաստել է տպագրության: Ընդօրինակությունը կատարել է Կողբացու առաջին տպագրության (Ջմյուռնիա, 1762 թ.) հիման վրա, համեմատել է նաև այլ տպագրությունների հետ: Բնագրի տողադատարկի և լուսանցքներում երբեմն ծանոթագրում է բնագրական այս կամ այն տվյալը: «Քննասեր»-ում Բյուզանդացին հայտնում է, որ «Եզերկ Կողբացի և իւր գրութեան ընդդէմ աղանդոց» խորագիրը կրող մի ուսումնասիրությունում «պիտի ցուցանեն, թէ խառնակութիւնը կան ի գիրս Եզերկայ ի յետևառաջութենէ թերթից գրագրաց»:

Նորայր Բյուզանդացին ծրագրել էր «հինգերորդ դարէն մինչև ցվեշտասներորդն հրատարակել դամենայն հայերէն մատենագրութիւնս և թարգմանութիւնս Հնոց, Միջնոց և Նորոց՝ ժամանակագրական կարգաւ և վերստին տպագրելով զմիանգամ տպագրեալս»⁶: Մատենագրությունների այս շարանի, որը Բյուզանդացին կոչում է «Հայ մատենադարան» (Bibliotheca Armena) հատորներից մեկն էլ հանդիսանում է Եզերկ Կողբացու բնագիրը: Վերջինս կազմված է տպագրի օրինակի հիման վրա, որովհետև գրագրի ձեռք բերելու համար «հարկ էր որ բաց ըլլային իմ առջև ամենայն թանգարանը, ուր հայերէն գրագիրը կը պահուին: Տարիներով աշխատեցայ, որ իմ ճանապարհս մաքրուի խոշերէ և արգելքներէ և ես հասնիմ ի ցանկայի նպատակն. աւաղ, յոգնութենէ և վհատութենէ դատ ոչինչ շահեցայ: Բարեաւ մնան ուրեմն գրագիրը ուր որ են, և ես զբաղիմ մի միայն տպագրեալ մատենագրութեամբ նախնեաց»⁷:

Գ. — «Թուղբ Մագիստրոսի...»:

518 էջերի վրա ընդօրինակված և տպագրության են պատրաստված Գրիգոր Մագիս-

⁶ Անդ, պրակ Բ, էջ 3:

⁷ Անդ, պրակ Ա, էջ 6:

⁸ Անդ, էջ 7:

⁵ «Քննասեր», «Ինքնագրութիւնք Նորայրի», պրակ Ա, Ստոկհոլմ, 15 մայիսի 1887, էջ 17—62:

տրոսի թղթերը (Հմմտ. «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», լույս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրոպոլ, 1910):

Տողատակին և լուսանցքներում համեմատված են թղթերը պարունակող գրչագրերը (Կ. Եղյանի և Մյունխենի օրինակները), արված են ծանոթագրություններ, բանասիրական դիտողություններ, կազմված է բառերի համաբարբառ նաև այլ մատենագրությունների համապատասխան բառերի:

Բյուզանդացիին իր օգտագործած բնագրերը ներկայացրել է այսպես.

«Թուղթք Մագիստրոսի և Ն. Շնորհալույց». թերատ գրեալ ի Թագաւորական քաղաքն Սիս, ի Թուականիս Հայոց ՈՂԳ (=1244), ի կաթողիկոսութեան Տեառն Կոստանդնուպոլս (Ձեռագիրք նարբերդոյ)»: Գարեգին վարդապետ Սրուանձտեան, Թորոս Աղբաբ, մասն Բ, երեսք 332—334: Տե՛ս անդ և ի ձեռագիրս Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի վանաց Արդնոյ, լերես 394, Թիւ 225, Գրիգոր Մագիստրոսի բերթուածք և Թուղթք:

Տեղեկութիւն զընդօրինակութենէս: Զայսոսիկ թուղթս Գրիգորի Մագիստրոսի ընդօրինակեցի ի Ստոքհոլմ (15 աւգոստոս 1896—5 նոյեմբերի 1896) յաւրինակէ տեառն Կարապետի Եղեանց՝ գաղափարելոյ նորին ձեռամբ ի ձեռագրէն Մելքոն Սարկաւագի, որդւոյ Բաղտասարայ Եղնկացոյ: Ժամանակ գրչութեան ձեռագրին Մելքոնի է՝ 1790, դեկտեմբերի 4—1791 մայիսի 26, իսկ տեղի գրչութեանն է եկեղեցին Սուրբ Հրեշտակապետ որ ի Պալատ Կոստանդնուպոլսի:

Ձեռագիրն Մելքոնի Սարկաւագի գտանի այժմ յԱրքունի մատենադարանին Միւնիք (München) քաղաք Բաւարիայ, զորոյ զնկարագիրն և զքովանդակութիւնն տե՛ս ի «Յուցակ հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխեն, կազմեց Հ. Գրիգոր վարդապետ Գալեմբեարեան, Վիեննա, 1892, եր. 11ա—14բ, cod. Arm. IV, ՌՄԽ=1791»:

Այնուհետև Բյուզանդացիին բերում է Մյունխենի ձեռագրում գտնվող Մագիստրոսի թղթերի ընդհանուր խորագիրը, հայտնում է, որ անգլիացի գիտնական Կոնիքիրը գիտե Մյունխենի ձեռագրի մասին («Հանդես ամսօրյա», 1893, էջ 52, նաև անդ, 1905, 366բ—367ա):

Դ.—«Աշխարհացայց Վարդանայ վարդապետին»:

«Հայ մատենադարան» շարքի հերթական հասարկության մեկը: Զբաղեցնում է 56 էջ: Ընդօրինակված է Մեն Մարտենի «Mémoires historiques et géographiques sur l'Arménie...», Paris, T. sec., 406—453 էջերից:

Բնագիրն ուղեկցվում է նորայր Բյուզանդացու ծանոթագրություններով:

Ե.—«Տեսիլ Խաճակայ Պարթևի Հայոց Բայրապետին, զոր ետես ի Վաղարշապատ քաղաքի մինչ սարկաւագն էր» (16 էջ):

Ընդօրինակված է 1772 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակված «Գիրք ճառ հոգեշահ. արարեալ յուղղափառ և յաստուածաբան վարդապետաց Եկեղեցւոյ գրքից»:

Զ.—«Պատմութիւն ծերնդեան և սերնդեալար Մանեմտին որ է կարապետ Նեոխն» (2 էջ):

«Հացունեաց խաչի պատմութեան» տարբերակներից մեկն է: Հմմտ., օրինակ, Մաշտոց անվան Մատենադարան, ձեռագիր № 8106 Բ. 211բ—244ա:

Սկիզբը՝ «Աստանօր կամ եղև ինձ դարձեալ յերկրորդ անգամ բուռն հարկանել զմատենի ժամանակագրաց պատմութեանց կարգածանուցանել որպէս կամ զի՛նչ գործեցան աշխարհին Հայոց և Բարեկացւոց, Յունաց և առհասարակ ընդ տիեզերս ամենայն: Եւ արբազում էին զօրաւորք տանն Թորգոմայ անթիւք էին գունդք նախարարաց նոցա. նոքաք ելանէր մեծն Տրդատ և յաղթէր բազում զաւառաց և Թագաւորաց. և յետ սորայ վախճանելոյն ոչ յուղղեաց զաթոռ, Թագաւոր որդի նորա Խոսրով և նորին որդի Տիրան. նորին որդին Արշակ և նորին որդին Պապն ոչ նսպան դեղովք զսուրբ հայրապետ զմեծն Ներսէս և ընկալաւ զնորին արագահաս պատիժ: և զկործանումն տանս Հայոց... Ապա յայտնեալ կարապետն Նեոխն, որ է Մահմետ առաջնորդ տաճկաց...»:

Վերջը՝ «Ո՛ր հեծան ի ձի մինչև ի մահ զդեռահէն և երկիւղն ի սիրտն էր և Քրիստոս մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն»:

«Հայ մատենադարան»-ի համար պատրաստած այս բնագիրը նորայր Բյուզանդացիին ընդօրինակել է «Ի Ժե տաղարանէն Ս. Կաղարու. երեսք 410—440: Թիւ ձեռագրին 1371... գրիչ Ժե տաղարանին՝ Միքայէլ Սարկաւագ ի Թուրին ՈՂ=1641—1642:

«Յայսմ տաղարանի են և հինգ տաղք սիրոյ (նահապետ Քուլակի)»:

ա. «Ծառ նարընձնի ես դուն...», բ. «Ժառ ժամ զիմ դարիպիս...», գ. «Տեսայ իմ հոգու հոգին...», դ. «Այլ ողորմ չեմ տեսեր քանց...», ե. «Այ իմ գեղեցիկ պատկեր...»:

Ը.—«Թուղթ Դաշնաց» (63 էջ):

Ընդօրինակված է Աբրահամ Երիցու ձեռագրի և Կարապետ վարդապետ Շահնազարյանի 1862 թվականի հրատարակությունից, «Հայկական Մատենադարան»-ի համար:

Թ.—«Պատմութիւն Աղուանից» (էջ 168—313):

Մովսէս Կաղանկայտվացու Աղվանից պատմութեան ընդօրինակությունը, որը նույնպէս

պատրաստված է «Հայ մատենադարանի» համար:

Ժ.—«Ճառք Սրբոյն Յակոբայ Սրենցոյ» (329 էջ):

Ընդօրինակված է 1722 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակված վերոհիշյալ «Գիրք և ճառ հոգեշահ» գրքից:

ԺԱ.—«Մեկնութիւն բառից Գաղիանոսի. համեմատութեամբ հնգից ձեռագրաց (151 էջ):

Բնագրի հիմքը կազմող հինգ ձեռագրերն են՝ Ա. Փարիզի Bibliothèque Nationale-ում պահվող մի ձեռագիր, որն ընդօրինակված է 1282 թվականին, Բ. Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող, 1307 թվականին ընդօրինակված մի ձեռագիր, Գ. դարձյալ Վենետիկ, 1490 թվականին ընդօրինակված ձեռագիր, Դ. Հավանաբար Փարիզի Ազգային մատենադարանում պահվող ձեռագրի ընդօրինակությունը, որն այժմ գտնվում է Վենետիկում, Ե. (այս ձեռագրի մասին Նորայր Բյուզանդացին տեղեկություն չի տալիս):

Աշխատությունը բաղկացած է երկու բաժնից: Առաջինում Նորայր Բյուզանդացին ընդօրինակել է Գաղիանոս բժշկապետի՝ ԺԱ—ԺԲ դարում արաբերենից հայերենի թարգմանված բառերի բնագիրը, իսկ երկրորդում (որը կրում է «Բառք առաջնոյ մասին, ուղղեալ և ճշգրտեալ» խորագիրը) ուղղել, ճշգրտել, մեկնաբանել է Գաղիանոսի բառերը, տալով նրանց «հոմանիշքն ի յոյն, յարաբացի, ի պարսիկ և ի գաղղիերէն լեզուս»:

ԺԲ.—«Հայ պարտէզ, յորում հաւաքեալ կանաւումք բուսոց և բուսականաց յիշատակելոց ի գիրս նախնեաց և յետնոց հաւելեալ այնոքիւք, որ պահեալք են միայն ի բերան ուսմիկն» (61 էջ):

Հայկական աղբյուրներում հանդիպող բուսական անունների բառարան: Յուրաքանչյուր բառի դիմաց վկայակոչվում են այն սկզբնաղբյուրները, որտեղ հիշատակված է տվյալ բառը: Զուգընթացաբար տրվում են բույսերի ֆրանսերեն անունները:

ԺԳ.—«Հմայեալ քշուառ քանաւայի մը պատմութիւնը: Հրատարակեց տիկին Նագենիկ Ելիզաբետեան, 1871 թ. օգոստոսին» (94 էջ):

Առաջաբանում հայտնվում է, որ մի երիտասարդի մահվանից հետո նրա թղթերի մեջ գտել են այս պատմությունը, որն ունեցել է վերնագիր «Իմ պատմութիւնը», առանց առաջաբանի և ծանոթագրության և, իհարկե, ոչ տպագրելու համար:

Սա ակնհերքաբար Նորայր Բյուզանդացու ինքնակենսագրությունն է, որը վերջանում է 1862 թվականի ապրիլի 30-ին թվագրված մի դիմումով, ստորագրված՝ «Ես Գաղէզ, որդի

Յովհաննիսի և Յուլիանեայի»: «Գաղէզ»-ը Նորայր Բյուզանդացին է (Ստեփան Գաղեզյան—ձիզմեճյան—Թերզոնց):

Այսբանով ավարտվում է Նորայր Բյուզանդացու Հայաստանի գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանում պահվող անտիպ աշխատությունների միկրոֆիլմերի պարունակությունը:

ԺԴ.—«Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ—ԺԷ դարոց» (շուրջ 6000 էջ):

Նորայր Բյուզանդացու այս արժեքավոր անտիպ բառարանի միկրոֆիլմերը պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Պահպանվել են բառարանի միայն հինգ տետրեր, մնացածը դեռ գտնված չէ: Մատենադարանում պահվող հինգ տետրերն ունեն հետևյալ բովանդակությունը: Առաջին տետրը պարունակում է ԺԱ—ԺԷ դարերի հայ մատենագիրների երկերում հանդիպող բառերը: Առաջին բառն է «Աքեք», վերջինը՝ «Գծողիկ»: Բառերի դիմաց նշված են սկզբնաղբյուրները, կատարված է բառերի մեկնաբանություն: Նույն սկզբունքն ունեն նաև հաջորդ տետրերը:

Երկրորդ տետրն սկսվում է «Դագաղ» և վերջանում է «Լծէ» բառերով:

Երրորդ տետրը՝ «Խոլիսի»—«Հետակառու»:

Չորրորդը՝ «Ձագ»—«Շշակ»:

Հինգերորդը՝ «Ոգեմ»—«Պօզ»:

ԺԵ.—«Նախնիք» (շուրջ 1200 էջ):

Այստեղ հավաքված են Ե—ԺԸ դարերում ստեղծված մատենագրական երկերում հանդիպող սխալ ընթերցվածները, որոնք մոտ 50 տարվա ընթացքում հավաքել, սրբագրել և ճշգրտել է Նորայր Բյուզանդացին: Սրբագրությունների թիվը անցնում է տաս հազարից:

Այս աշխատության մասին հեղինակը գրել է. «Երբ Տէր յաջողէ որ հաստատուիմ ի քաղաք ուր հայ տպարան կը գտնուի, պիտի հրատարակեմ դիմ մատենան նախնիք, յորում ամփոփած եմ դիմ բովանդակ հետազօտութիւնս, և կը յուսամ թէ այն ամէն հրատարակեալ գործք մեր հին մատենագրաց զորս կրցած եմ հաւաքել և ուսումնասիրել՝ շատ տեղ բոլորովին նոր կերպարանօք պիտի ներկայանան»⁹:

Փարիզարնակ պատմաբան-բանասեր, հարգելի պ. Հայկ Պերպերյանի մի նամակից մեզ հայտնի է, որ «Նախնիք»-ի միկրոֆիլմը տրամադրվելու է Գյուլպենկյան հիմնարկությանը՝ լուսատիպ հրատարակության համար:

⁹ «Քննաւէր», պրակ Ա, էջ 7—8:

ԺԶ.— Նույն աղբյուրի միջոցով տեղեկանում ենք Նորայր Բյուզանդացու մեկ ուրիշ կարևոր աշխատության մասին, որն իրենից ներկայացնում է «Հայկազեան բառարան»-ի լրացումը: Բառարանի յուրաքանչյուր էջի վրա Բյուզանդացին վերջում կատարել է նոր հավելումներ:

ԺԷ.— Դարձյալ պ. Հ. Պերպերյանի միջոցով մեզ հայտնի է, որ միկրոֆիլմի վրա են գրանցված նաև Նորայր Բյուզանդացու «Կորին վարդապետ և նորին քարգմանութիւնք» (Քիֆիս, 1900) աշխատության բազմաթիվ հավելվածներ, «որով աշխատութեան ծաւալելալ և ճոխացեալ մէկ նոր խմբագրութիւնը կ'ըլլայ»:

ԺԸ, ԺԹ կետերում նշված աշխատությունների միկրոֆիլմերը, որոնք այժմ գտնվում են արտասահմանում, հավանաբար շուտով կուղարկվեն Հայաստան:

Բացի վերոհիշյալ գործերից, Նորայր Բյուզանդացուց մեզ հասել են նաև բազմաթիվ այլ աշխատություններ (Ս. Լորելլին գրում է. «Իմ ուսումնասիրած ու ձեռքով էլ փաթաթած և կապած ձեռագրերի քանակությունը հասնում է 44 կապոցների»), որոնք այժմ պահվում են Շվեդիայի Ուպսալա քաղաքի Գեորգիան Բրտիվիլյա նշանավոր համալսարանական գրադարանում:

Նորայր Բյուզանդացին «Քննասիր»-ում (պրակ Բ, էջ 3—5) թվարկում է իր հետևյալ անտիպ աշխատությունները (նշում ենք այնպիսիները, որոնց միկրոֆիլմերի մասին չենք խոսել)։

ԺԸ.— «Տեսութիւն քննական քերականութեան Հ. Արսենի Այտընեան.— Աշխարհաբար հայերէն ի հինգերորդ դարու»:

ԺԹ.— «Եզնիկ Կողբացի և իւր գրուածն ընդդէմ Աղանդոց»:

Ի.— «Մովսէս Խորենացի և իւր Պատմութիւն Հայոց»:

ԻԱ.— «Պատառիկ յանյայտ հայերէն քարգմանութեանց»:

ԻԲ.— Ոսկերեանի մեկնութեանցն քրթոյց Պապոսի, առ Գաղաթացիս, առ Երայեցիս, առ Թեսաղոնիկեցիս, առ Կորնթացիս, առ Հռովմայեցիս, առ Փիլիմոն»:

ԻԳ.— «Քարգմանութիւնք նախնեաց յասորի լեզուէ ի հինգերորդ դարու»:

ԻԴ.— «Յաւելուածք և ուղղութիւնք յիմ գաղղիներէն—հայերեն բառագրիս»:

ԻԵ.— «Դիտողութիւնք և ուղղութիւնք ի հայերէն բառարանս»:

ԻԶ.— «Բառագիրք գաւառական հայ բարբառոց»:

ԺԺ, Ի, ԻԶ կետերում նշված աշխատությունները, ըստ Ս. Լորելլու հաղորդագրության¹⁰, այժմ պահվում են Ուպսալայի համալսարանում: Մնացածների տեղն անհայտ է: Լորելլին Բյուզանդացու իր հայտնաբերած բոլոր աշխատությունները չէ որ թվարկել է. հնարավոր է, որ մյուս կետերում մեր նշածներն էլ նույն համալսարանում գտնվեն:

Ս. Լորելլու տվյալների համաձայն, Ուպսալայում են պահվում նաև Բյուզանդացու հետևյալ ձեռագրերը.

ԻԷ.— «Առաքելի Սիւնեցոյ Տաղաչափութիւնք» (85 էջ):

ԻԸ.— «Վրիպակք յԱստուածաշունչ գիրս»:

ԻԹ.— «Եվսէբի Պամփիլիա ժամանակականք»:

Լ.— «Ժողովրդական միջոցներ անատուններու ցալերու դէմ»:

ԼԱ.— «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն և քուրք առ Վահան Մամիկոնեան»:

ԼԲ.— «Եղիշէի (և ոչ Մամբէի) ճառ ի Յարութիւն Ղազարոսի»:

ԼԳ.— «Արամեան երէց» (327 էջ):

ԼԴ.— «Ամիրզովլար, Օգոստ բժշկութեան»:

ԼԵ.— «Ամիրզովլար, Անգիտաց անպէտ»:

ԼԶ.— «Փիլոն և Ոսկերեան»:

ԼԷ.— «Բարսեղ Կեսարացի»:

ԼԸ.— «Մովսէս Խորենացի և առաջին քարգմանիչ»:

ԼԹ.— «Հաղարտիր տաղարան հայ բանաստեղծութեանց ի դարուն ԺԲ—ԺԷ»:

Վերջինս ունի հետևյալ բաժինները.

ա. «Տաղք ուրախականք» (սթափականք)

բ. «Տաղք սիրոյ»

գ. «Տաղք հոգևորականք»

դ. «Տաղք աշխարհականք»

ե. «Տաղք պատմականք»

զ. «Տաղք ուսումնականք»

է. «Տաղք հայկականք»:

Խ.— «Յաւելուած տաղից նախապետի Քուչակի, Յովնանէն Երզնկացոյ և այլոց»:

Այս է Նորայր Բյուզանդացու մեզ հայտնի անտիպ ձեռագրերի ընդհանուր նկարագիրը¹¹:

¹⁰ «Էջմիածին», 1949, մարտ—ապրիլ, էջ 68:

¹¹ Հովհ. Պետրոսյանի «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժողովրդականներ» (Երևան, 1960, էջ 66) ժողովածուում թվարկված են Նորայր Բյուզանդացու ինն անտիպ աշխատություններ, որոնց շարքում նաև՝ «Մովսէս Խորենացու Աշխարհացոյցը» և «Բառք քերթողականք»։ Ցուցակում հանդիպող սխալներից երևում է, որ այն կազմված է բանավոր, պատահական տեղեկությունների հիման վրա։ Հայտնի չէ, թե ո՞րտեղից են վերցված տեղեկությունները նշյալ երկու աշխատությունների մասին:

0
0
A
0
0

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԼԵՁՈՒՆ ԵՎ ՈՃԸ*

«Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան ընդ նախագրեալ երջանկացն փառատրական աւելորսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ ի հաճութիւն և ես ընդ նոսին՝ իբրև դառնութիւն եղեալ ընդ քաղցու, կամ տատաակ ընդ ողորկութեան, տգեղութիւն ընդ վայելչութեան, և ահա ընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող ընդ յատակութեան ոսկոյ և կամ քարինս անարգս ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղութեան զանգուածոյ հացի» (ՁԲ)։ Այստեղ հակադրութիւնների հետ միաժամանակ աչքի է ընկնում առարկայնութիւնը, թանձրացակաւնութիւնը։ «բարձրեալ, օրհնաբանեալ» և այլ բաների կամ որակումների փոխարեն կյանքն է շնչում, հողը, արծաթը, տիղմը։ Ածականները յուրահատուկ ձևով գոյականանում են և գոյականների հետ միասին յուրահատուկ վեհութիւն ու մեծափառութիւն են հաղորդում կապակցութիւններին։ Համեմատութիւնն և վերացական հետևյալ հատկաւ։

«Մի՛ ածեր, ողորմած, ինձ օր տարածամ ի համառօտս երբի՛ անթողակ ապաճեոնութեամբ՝ ընդ անկատար ուղին հետեւել, մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան ի ժամ ծարաւու. մի՛ փակեր, գթած, իմ հանդէպ զյաջողութեամբ հոգևոր օգտիս և մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն ինձ պատահեցէ, մի՛ տապ տօթոյն յան-

պատրաստ պահուն զարմատս հատեալ ցամաքեցուցէ, և մի՛ լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեցեն, մի՛ պահեցի ինձ սառն մեղացս» (ՁԲ, Ը)։

Այստեղ լավագոյն օրինակը «բաժակ դառնութեան»-ն է, սովորական թարգմանութեամբ՝ նշանակում է «դառն բաժակ», բայց այստեղ ոճը ստանում է վեհութիւն, դառն բառի սահմանափակ հասկացութիւնը ընդարձակվում է, սովորական գործածական բառը հանդես է գալիս նոր ձևափոխությամբ, մեր քաղվածքի ընդհանուր վերացական ոգու հետ կազմում է մի ներդաշնակութիւն, մի ամբողջութիւն։ Չգիտեմ, թե ի՞նչպես կհնչեր դառն բառը, եթե նարեկացին այդպես էլ գործածեր, բայց այժմ դառնութեան ձևը չի կարելի փոխել դառն ձևով, որովհետև խոսքի մեջ անմիջապէս առաջ է գալիս ոճական աններդաշնակութիւն, բարձր երևակայությամբ, հակադիր անակնկալներով առկուն աղերսարկու բանաստեղծութիւնը աղճատվում, իջնում է վեհութիւնից։

Այս երկար կտորը դիտարկելով բերինք, որ ցույց տանք, թե ի՞նչպես նարեկացին, հանձարեղ արվեստագետի հմտությամբ, նորանոր ձևեր է կազմում, ածականները, երբեմն իսկ մակբայները, գոյականացնում է՝ ստեղծելով խոսքի մասերի համաչափ փոխանցումներ։ Ընդհանուր է, այստեղ օտարաբանութիւնները ծանրացնում ու մթնեցնում են խոսքի պարզութիւնը, սակայն ներդաշնակութիւնը չի փոխվում։ «Ի համառօտս երբի՛» հունաբանական ոճ է, բառացի նշանակում է՝ «երբ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № 1-ից։

վա կարճության մեջ», այսինքն՝ ժամանակի սակավության մեջ, սակավ ժամանակում: Երբ ժամանակի մակբայը նարեկացուց առաջ գոյականաբար գործ է ածված Դավիթ Անհաղթի հունաբանական թարգմանությունների մեջ, իսկ համառոտ բառը իբրև գոյական առաջին անգամ նարեկացին է գործածել, չնայած Մակարայեցվոց Բ 29-ում կարդում ենք՝ «և զկարճառոտ բանն ի համառոտ կացուցանել», որտեղ, ըստ Հայկազյան բառարանի, համառոտ բառը գոյական է: Բայց մեր կարծիքով՝ «ի համառոտ կացուցանել» պետք է մի ամբողջական դարվածք համարել, ուր համառոտ ածական է, և թարգմանել «համառոտել»: Սրանք պահպանում են խոսքի համաչափությունը, հանդիսավորությունը:

Մակդիրների այդ տեսակը սովորաբար գոյականի հետ գործածվում է սեռական հոլովով. այսպես՝ «Բերկերութեան հանգիստ, ննջումն ծանրութեան, առատութիւն քաղցրութեան, գիր անկեղծութեան, գրաւական անեղծութեան, հայր գթութեան, կենցաղ կորուստեան, ճշմարտութեան ճանապարհ, ճաշակ քաղցրութեան, շունչ կենդանութեան» և այլն: Բայց խոսքը առնականություն, ծանրություն և լրջություն է ստանում, երբ այդպիսի վերացական գոյականները հոլովվում կամ կապվում են այլ խոսքի մասերի հետ, դառնում նրանց համար լրացումներ, և կամ ածականների փոխարեն ուղղակի վերացական գոյականներ են կիրառվում. օրինակ՝

«Եւ արդ շուր կամաց և կաթ արտասուաց բեկութեամբ հոգւոյս, մտացս լքմամբ, խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի»... ամբողջովին նորություն, թարմություն, բարձր ու վեհաշուք բանաստեղծություն է, որ հնչում է ծանր, խորհրդավոր՝ հարուստ փոխաբերական ու հումանիշ արտահայտություններով. եթե մենք փորձենք շուռ տալ, ապա խոսքը կիջնի բարձրությունից և կկորցնի ոճական հանդիսավորությունն ու լրջությունը:

Առանձնապես աչքի են ընկնում բաղադրյալ կամ բարդ մակդիրները. դրանց մեծ մասը հեղինակի սեփական կազմություններն են, որոնք բոլորն էլ շեշտակի, դիպուկ, անսպասելի, խորամտած են, և ընտրված արվեստագետի ճաշակով: Բարդ մակդիրները այն հատկությունն ունեն, որ երբեմն կրկնակի, եռակի ու ժով բացահայտում են երևույթը, առարկաները, առարկայի կամ երևույթի ընդհանուր անորոշ իմաստը լուսավորում են բաղմազան կողմերով: Օրինակ՝ ծառայածին ստրուկ կապակցության մեջ շեշտված է ստրուկի ամբողջովին, ծնված օրից, արյունով, էությունմբ, ծագումով ստրուկ լինելը: Կա նաև բաղիմաստային խաղ. ստրուկ և ծառայ հոմանիշ են: Այս և հետագա մակդիր-

ները մերկացնում են նարեկացու ժամանակ կեղծավորությունն ու քծնանքը. բնության ապականված երևույթները արտահայտում են հասարակական հոգի հարաբերություններ իսկ այս ողջ փոխաբերությունը տրված ձևական կատարելությամբ:

«Տունկս դառնոտեան, բարունակս ապականաբեր և մահողկուղեան պաշտօնեայ տիրադրուժ և երախտամոռաց, ծառն ամբարձուղէշ, ստուարաստեղն. մթազոյն, ահագնս տեսիլ ամպ... յորս է տեսանել ի մէջ արջնատեսն ագռաւուց, սպիտականիշ երամս աղաւնեաց («արջն» նշանակում է՝ «մուկ սև»), համեմատին՝ «արջնաթոյր գոյն» (Կ, ԿԹ): Մակդիրների խորությունը շեշտվում է նաև հակադրությամբ. արջնատեսն ագռաւ և սպիտականիշ աղաւնի: Մակդիրների հետ հակադրված են նաև առարկաները. «ախտաբոր բոք նիւթ, դժնատեսիլ գոյն, յոքնատիտու գեղ, անձնավաճառ գիր, հողազանգուս բնութիւն, վաստականուէր աղերս, մեռելօրինակ թմբրումն, լուսակիր հիւթ, անտիխսէշ մահակերպարան, տաղտկազաղրախառն հեշտութիւն, ձէթ լուսանիւթ, քնար ձայնատրական, բանապաճոյճ, պսակապաճոյճ, գեղազարդ, բարեշնորհ ծաղիկ, լուսածին օրէնք» (համեմատի՝ «տիւրատեսակ մուր, լուսակիր լուսահիւթ, լուսածին»): Պատահում են նաև երեք բառից կազմված բարդություններ՝ եորբերգարկու բամբիտ, տաղտկազաղրախառն հեշտություն և այլն:

Նարեկացին շատ սիրում է ան ածանցյալ բարդված մակդիրներ գործածել. այսպես «անմուտ արեգակն, անստուեր յիշատակ անփակ միութիւն, անկերպագրելի գոշումն» (ԴԲ), անհաս մեծութիւն, անզերծ սպառնալիք, անբժշկական վէր, անբուժելի բեկութիւն, անհանճար (համեմատի՝ Ը), անկենդան դիւ (նման մի արտահայտություն, ոչ պակաս համարձակ, ունի Ագաթանգեղոսը. «անբարբառ մեռելութիւն» (Ագաթ. 83):

Նարեկացին մակդիրների ընտրությունը կատարում է այնպես, որ նրանք դառնում են հուզական, իմաստալից, սլացիկ և տպավորիչ ու հաղորդական: Նկատվում են չափազանցումներ, բայց տիպականացման սահմաններին չեն անցնում: Ենթահիվ թերականական իրենց ճիշտ կազմության, շարահյուսական համարձակ փոխանցումների, խոսքի, դարձվածքի ինքնահաստուկ կառուցվածքների, այդ մակդիրները ստանում են իմաստային, նորանոր նրբավորումներ, խորանում է նրանց բովանդակությունը և մակդիրի ու նրա որոշյալի մեջ ստեղծվում է մտքի ու ձևի ներդաշնակություն: Մակդիր-փոխաբերությունները, բառին տալով նոր փոխաբերական նշանակություն, նրա ընդհանուր նշանակությունը

ավելի պարզ ու արտահայտիչ են դարձնում. հողմ դառնութեան արտահայտության մեջ հողմը փոխաբերական նշանակություն է ստանում, և ուժեղանում է ընդհանուր հատկանիշներով: Բառիմաստի և նրա արտահայտած զգացումների մեջ ստեղծվում է մի զարմանալի միություն: Հողմով ու զգացումներով, մտքով ու բարքերով ամուլ և անօգտակար մարդը պատկերացվում է իրական ու առարկայական գույներով: «Մատանն շնչական, բարդեալ ի յինքեան ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս... Քաղաքս անպատուար և անմահաբձան, յարկս ունայն ի դոնափակաց ամրութեանց, աղս տեսակաւ, այլ ոչ համեղութեամբ, ջուրս աղտաղտին, անխորժի ծարաւաց արբման, գետինս անօգուտ հերկագործութեան, սահմանս լքեալ՝ հեղեղավայրս կնիւնոյ, խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս... Եղբնձիւղ փայտս պողակորոյս, հատանելի ծառս ունայնաբոյս, կրկնամեռ խօսուն տունկս անյոյս, ամենաշէջ ճրագարանս անյոյս»:

Առանց գործողության, առանց նախադասությունների կապակցության, սովորական թվարկումով ստեղծված ամալության, ավերածի, անմարդարնակության հույսկապ համայնապատկեր է սա: Այստեղ հակադրությունը ուժեղ է, անհատական, ո՛չ միայն մարդը իր զանազան հատկանիշներով կերպավորված է ավերված քաղաքների և տատասկաբեր անդաստանների պատկերով, այլև զգացվում են փոխաբերության զարմանալի ճշմարտական, ճշմարտապատում աղբյուրները: Հին գրականության կամ Աստվածաշնչի ընդհանուր կաղապարումին հակադրված են ազատ մտքի ստեղծագործական ուժի նոր և միանգամայն իմաստալից ու պատկերավոր մակդիրներ: Դրանք ումբի ուժով պայթում են, առցված են օբյեկտորոններով («կրկնամեռ խօսուն»), զարմանալի շեշտակի հակադրություններով, ավելագործություններով («ամենաշէջ ճրագարան անյոյս», ամենաշէջ՝ բոլորովին մարած՝ նարեկացու կաղմած բառն է, որ նշանակում է անյոյս):

Նարեկացին համարձակ է և հանդուգն լեզվական ստեղծագործության մեջ. նա ոչ միայն չի վախենում կրկնաբանություններից, ավելագործություններից (պլենադմեններից), այլև շատ հաճախ դրանք այնպես է գործածում, որ առարկաներին տալիս են նոր բովանդակություն: Խոսքը օժտվում է կրկնակի ուժով և որոշակի հաճելի անակնկալներով: Հիշենք՝ դրանցից մի քանիսը. «կոյր անյուսաւոր, յոքնապաճոյճ պճնութիւն, դի անկենդան, յուսանցոյց երգ»:

Այս հավելագիր մակդիրներին են հարում այնպիսիները, որոնք հոմանիշ են իրեն՝ որոշ-

յալին և գործ են ածվում սեռական հոլովով՝ իբրև լրացում: Դոյականացած մակդիրի այդ տիպը շատ տարածված է գրաբարում և հաճախ նարեկացին օգտվում է այդ միջոցից:

Այսպես՝ «նուէր հացի պանից բաղաբոց՝ իւրով զանգեւոց» (ԼԴ), «եղեռականք ջալից, զգետ պատմունանին, հասկ հասակի» (ԼԸ), «կախաւ կայքից՝ և ցոյցս վազից» (ԻԱ) (չպե՛տք է արդյոք այստեղ ցոյց բառը համարել վազք բառի հոմանիշը, և ոչ վազքի տեսարան), «կառակում սօրից» (ցեխ, ճահիճ). համեմատի՛ր «վասն կառակում տըղմին» (Ագաթ. 124):

Մակդիրների անակնկալ սրությունը, իտյածակնային ուժը երբեմն հասնում են չափազանցության, բայց այդ բառի միանգամայն լավ նշանակությամբ: Օրինակ՝ «կայծակող բան» («զըքոյին պատկերս մեղօք հնացեալս՝ ի քրայս հալոցաց՝ կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա») (ԺԲ):

Այս խոսքի մեջ չկան ավելորդ բառեր, խոսքը կաղմված է իրար հակադիր երկու եղբրից. մի տեղ մեղքերով հնացած մարդը, մյուսը կայծակող խոսքը: Ամբողջ նախադասությունը ներծծված է խորհրդանշական պատկերներով և հոյակապ, ցնցող, ջերմացնող փոխաբերությամբ. «կայծակող բան». կայծակող մակդիրով երևույթի մեջ ուժ ու կրակ է դրված. բոց, լույս, արագասլաց թափ, ալրող և ջերմացնող զորություն, և այստեղից արդեն մի քայլ է մնում, որ խոսքը դառնա նաև կյանք տվող, դեպի կյանքը մղող մի ուժ, այսինքն դառնա «կենսախախտ լույս» (ԻԴ): Եվ իբրեք, լույսն ու կյանքը կապվում են իրար հետ. մեկը դառնում է մյուսի զորացուցիչ աղբյուրը՝ իսկ խոսքը դառնում է թե՛ լույս բերող և թե՛ կյանք բերող. հնացած, փտած, խախտված պատկերը վերածուլվում է, թարմանում, նորանում է խոսքի կայծակմամբ: Այս խոսքի ուժը չի սպառվում միայն պատկերավոր հակադրության թանձրությամբ. այդ դեպքում մեր միտքը և երևակայությունը միայն սնունդ կստանային և մենք չէինք ստանա խոսքի այն հուզական ջերմությունը, այն քնարական լարվածությունը, որը առաջանում է միայն մի դիմումով՝ «պաղատի՛ր առ քեզ». մի երկու բառ, բայց թախծի, հոգեկան տազնապի խոր, անհունորեն խոր, այնպիսի մի հուզիչ է ներարկվում նախադասությանը, որ խոսքը շնչում է բարձր զգացական վեհությամբ, ստանում դրամատիկ շունչ, և միաժամանակ աղաչանքի աստիճան մեղմանում է բայի հրաշալիական եղանակի շեշտը:

Հիշենք այսպիսի մակդիրներից մի քանիսը և անցնենք. «ծաղկեալ ալիք, խօսուն ոսկեղէն տախտակ, սլացեալ միտք, հերկեալ բանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ

սրտիս» (17), «բանաւոր մոխիր» («և միշտ որոտմամբ բանից բանաւոր մոխրոյս բարկացեալ» (18)):

Սակայն երբեմն այս նուրբ կապակցութիւնների հետ նկատում ենք գոնհկաբանութիւններ, որոնք արդունք են շափազանցութեան և մտքի ու զգացումների ծայրահեղ լարման: Այս պարագայում ոճը դառնում է տգեղ՝ կորցնում է բանաստեղծական քնարական շունչը: Մակդիրները զրկվում են իրենց լուսավորող կենսականութիւնից, խոսքը իջնում է հանդիսավոր բարձրութիւնից: Այսպես՝ «տունկա դառնոստեան (մի ձեռագրում՝ գարշութեան), որ զգարշութիւն անառակ վարուց (ձեռագրում՝ վարուք) ծաղկեցի» (է), «շաւն սպառնելոյ՝ մի՛ քարին արձակեսցես, լույս ջախջախելոյ մի՛ ռաստիկա որոտացես» (49), «մատնամուխ զգուաճօփ փսխել, վայ զմարմինս պարարողի, կեցակոյ՛ռդ աճեցն անմահից» (է), «պոռնկալեցալ կեցաւրան, գեցաւակիր ակն, փռչիս շնչաւոր, կաւ ձայնաւոր» (ի):

Զգացումների ծայրահեղ լարումը առաջ է բերում հակադիր երևույթներ. շափազանցութիւնից հանկարծ իջնում է փոքրացման կամ նվաստացման աստիճանին. ծայրահեղ շափազանցումները խախտում են իրականութեան հետ ունեցած երևույթի կապը և թուլացնում տպավորութիւնը. խիստ նվաստացումը կամ ստորացումը դուրս է գալիս իրական կյանքի սահմաններից և առաջ է բերում տհաճ տպավորութիւն ու զգացում: Իհարկե ոչ մի արվեստի սահմանում չի ընկնում մարդու ամենատրուկ ջարդված լիկ, սատկած շան կամ մարմնակեր որդերի հետ: Ժամանակակից հասարակական հարաբերութիւնների մեջ մարդը դառնում է կենդանական արարածներից էլ անարժեք. կրօնը քարոզում էր մոռանալ սեփական եսը, անձնական հաճույքներն ու կյանքը և նվիրվել Աստուծուն. հասարակական կարգերը մեկոյցնում էին ամեն անհատականութեան դրսևորում և ահա մարդը դառնում է ջախջախված լու, շնչավոր փռչի:

Այդպիսի մի պատկեր գտնում ենք Աստվածաշնչի մեջ, որտեղ Դավիթը դիմում է Սավուրին. «Եւ արդ, զո՛ր հետ ելեալ ես, արքայդ Խորայէլի, և զո՛ր հալածես. զհետ շա՛ն միոյ մեռելոյ, և զհետ լուտ՞ի միոյ» (Ա. Թագ. ԻԴ 15) խոսքերով: Սակայն այստեղ գործադրված խոսքի հարցական ձևը փրկում է գոնհկաբանութիւնից, որովհետև բոլորովին հակառակ իմաստով է առնվում և այդ պատճառով էլ չի առաջացնում այն տգեղ համեմատութիւնը, որպիսին ունի Նարեկացին:

Բոլոր տեսակի շափազանցումները, իհարկե, չեն հասնում գոնհկաբանութեան, խիստ

շափազանցումով հանդերձ, այնուամենայնիւ երբեմն դրանք ցնցող են իրենց պատկերավորութեամբ, հղացման խորութեամբ և անսպասելի նորութեամբ: Օրինակ՝ «կաթնս հոսեալ ի կոյտս մոխրոց, ընդ այսակիր անզգայելոցն՝ դիւալլուկ և քարակոշկոճ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քստմնելի դիւսխուի հերացն, վայրեններն բանդագուշելոցն» (ԺԸ): «Ահա բարդեցան կուտեցան շրջանակը ամացս ընդունայնութեան, յորմեհէտէ յայտնեցեալ ցուցայ յոչպէտս երևեալ՝ ի յանդաստանէ մօրն իմոյ, սենեկի, փուշս դծնկի, մեղաց շառաւիղի, մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիլ՝ որպէս անդ տոհմին Յուդայի և կամ զաւակին Եփրեմի: Եւ քանզի բուսուցեալ տնկեցի յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմութեան խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս. . . Զիա՛րդ ոչ կոշեցից զանձն իմ գարշելի անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ (ԶԳ): Այս պատկերները լավ հասկանալու համար, պիտի ի նկատի առնենք նաև Ժ դարի վանականին, որի հոգին գիշերվա հսկումի պահին լցվում էր սատանայական անհի սարսեցուցիչ պատկերներով, որի մազերը գիսախուլվ, զգացումները դիվալլուկ, ուղեղը խախտված, ցնորլալ և բանդագուշող էին:

Մի անգամ որ Նարեկացին առարկաները կամ երևույթները հատուկ մակդիրներով որոշում է, դրանից հետո այլևս առանց այդ առարկաները կամ երևույթները հիշելու, ազատ կիրառում է մակդիրները, որոնք մեղ համար արդեն հասկանալի, արտահայտիչ և պատկերավոր են: Այստեղ արդեն առանց բառի հիմնական նշանակութեան հանդես է գալիս բառի փոխաբերական նշանակութիւնը. ճիշտ է, բառը կորցնում է ուղղագծութիւնը, առարկայականութիւնը, բայց լրիվ կերպով դառնում է խոսքի արտահայտչութիւնը դրսևորելու միջոց: Երբեմն տրամադրութիւնները, զգացումները, ուժեղ գեղարվեստական պատկերները հնարավոր չի լինում բառի ուղղակի նշանակութիւններով արտահայտել, այլ հարկավոր է ուրիշ նման կամ մոտ բառերի երկրորդական նշանակութիւնները օգտագործել, որտեղ մի այլ բառ կամ արտահայտչութիւն ծառայում է մի ուրիշ բառի պատկերավոր կամ հուզարտահայտչական կողմը դրսևորելու. հենց այստեղ հաջողութիւնը կախված է ստեղծագործողի ընտրութիւնից: Ստեղծագործողը պետք է դտնի տարբեր բառերի մեջ եղած նմանութիւնների գեղարվեստական արժեքը և նրանց արտահայտչական խորութիւնը, նրանց փոխհարաբերութեան իրական ու ճշմարտացի լինելը, հակառակ դեպքում կստացվի կեծի, մտքին և զգացումին ոչինչ չափող և միա-

ժամանակ բառի ներքին խորը իմաստային կողմը չզրկելով արտահայտություն: Ընտրելիս պետք է վերցնել բառի բազմազան, կողմնակի նշանակություններից ամենացայտունը և արտահայտչական տեսակետից ամենաշեշտվածը: Այսպես, նարեկացին ձեռք բառի համար (ձեթ, որ ներկայումս այնքան անբանաստեղծական է) ընտրում է լուսակիր կամ լուսանիւթ մակդիրը: Սրանով վերցվում է ձեթ բառի ամենակարեւոր և ամենաբանաստեղծական կողմը, այսինքն՝ նրա այն հատկանիշը, որ լույս է արտադրում հեղինակի համար, որպեսզի նա իր մատյանը գրի խավար ճգնաբանում, կամ այն կողմը, որ երեկոյան խորհրդավոր պահուն, համատարած գիշերային խավարի մեջ լույսի առկայծող շողերն է փայլեցնում, որոնք և՛ հույսի, և՛ գիտության, և՛ բարության խորհրդանշաններն են: Այդ դեպքում մենք դնենում ենք թե՛ բառի ուղիղ նշանակությունը և թե՛ նրա փոխաբերական նշանակությունը, երկուսն էլ վերցվում են («լուսակիր ձեթ»): Երկրորդ անգամ ալլեա ձեթ բառը չի գործածվում, այլ միայն «լուսակիր նիւթ», որով վերանում է բառի ուղիղ նշանակությունը և միայն հանդես է գալիս նրա փոխաբերական նշանակությունը: Բառը ազատվելով դարերով կրկնված իր անբանաստեղծական անունից (հիշիր ձեթ բառը), ստանում է նոր ձև՝ իր պատկերավոր արտահայտչությամբ, բանաստեղծական հուզականությունը: Այս դեպքում արդեն մակդիրը մոտենում է շրջաստիւթյան (պերիֆրազի): Նարեկացին այստեղ ևս հանդես է բերում իր մեծ վարպետությունը: Օրինակ՝ մարմինը դառնում է «տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի» (ՂԲ), սիրտը կամ միտքը կոչվում է «խորհրդակիր սենեակ» («Ելէ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեակս» (Ա), աչքերը կոչվում են «ճրագաբան տեսութեանց կերպի», արցունքները՝ «աղբերց կայլակմունք» (ԿԸ): Համեմատիր. «Ե և կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղ արտասուացս. տարր ապականացու, հողանիւթ աւոթ» (ԺԺ): Գիշերը կոչվում է «մանուաւ ստունը», ճրագը՝ «վառաբան իւղոյն», իսկ մոխիրը՝ «աճիւն հնոցի». «Եւ վառարան իւղոյն՝ աճիւնով հնոցի լցեալ» (ԻԳ):

Մենք սկզբում նշեցինք այն վերացական մակդիրները, որ նարեկացին շուայում է Աստուծո նկատմամբ և ցույց տվինք դրանց անարվեստ շոտությունը: Սակայն նույնիսկ այս դեպքում, երբ նա Աստուծո վերացական պատկերն է աշխատում գծադրել, դարձյալ դիմում է կյանքին, մարդու առօրյային, բնությանը, որը կյանքի և արվեստի աղբյուրն է: Այսպես, Աստուծուն վերագրվող վերացական մակդիրների հետ մենք նկատում ենք առար-

կալական մակդիրներ. «անյեղլի կնիք, հաստիչ հոգւոց հաց, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, անապական անձրև, արփիացնցուղ ցոլ, ստրկամեծար թագաւոր, ամենաբաշխ աշ, արդարաւիշիւ ձեռն, անաշուատես ակն, նախախնամող մատն» (Գ). «զուռն բարութեան, պարիսպ ամբութեան» և այլն: Նարեկացու ստեղծագործական խորությունը հենց այն ժամանակ ենք զգում, երբ նա կյանքից, բնությունից է իր պատկերները և համեմատությունները վերցնում: Այստեղ արդեն բաները, մակդիրները ներծծվում են կյանքով ու արշուկով, դառնում են իմաստայից ու հուզական: Այստեղ արդեն ծովն է անհուն ծփանքներով, ծիրանի վետվետումներով, դժոխային ալեկոծությամբ, դարհուրելի նավաբեկությամբ: Նարեկացուն նյութ է տալիս լույսը, որ իր հետ բերում է ջերմություն, հույս, կյանք, որ ջնջում է մահվան ստվերները (գիշեր). առավոտն է արփիացնցուղ ցողով, արևաբեր յագարացով, խավարափառաւ նշույններով, առավոտը, որ դարձան հոգին է. «Եղիցի նշույն առաւօտու հոգւոյ դարնայնոյ ընդ ակնկալութեան սպասողացն բումդ երեման» (Բ): Յերեկն ու գիշերն են, մեկը անաշուատափիւ արեգակով, մյուսը՝ խոլական, սառսաղաղեցիկ խավարով, մահվան ստվերներով, աննշույլ մռայլով (ԿԸ): Մարդը՝ թերություններով, աղիոցով ողբերով, արտասուքների հեղեղով, հեծող և տառապող սրտով, ողու ալիքների ծփանքներով, խռոված սրտի մոլեգին ծարավով, աշխարհիկ կրքերով ու ցանկություններով, մահվան սարսափներով, խնկապատարն և լուղավորական աղաչանքներով: «Սաստեա ի ձմեռս ամբոխեալ ալեաց հոգւոյս ծփանաց, արձանացո զծարաւս մոլեգին շարժման սրտիս խռովութեան, ընդոտնեա ի սանձս կապոյ երասանաց բմբռնման՝ ցնդեալ մտացս վայրագութիւն: Նղիցի խաղաղութիւն բոյս սասանման, սատակեա, խափանեա զբաղմազլեան անդամս ուրուականս գաղտնեաց ամօթոյս... հան ի խորոց մահուս անդնդոց, ընկալ զխոստովանութիւն անձնագատ բանիս ի հոտ անուշից, շնորհա մխիթար դառնութեան մշտաց ուժգին հեծութեան յուսահատելոյս» (ՀԱ):

Նարեկացուն արվեստի աղբյուր են ծառայել շինականը՝ արորով, սերմնացանը՝ աղնիվ ցորենով, հողը՝ բարութեան որաներով, երանութեան պտուղներով, երկիրը՝ կենդանի արարածներով, (համեմատիր հոյակապ հողացումը գրողի և սերմնացանի նմանությունը). «Եւ ընդ լալով սերմանել բանիս ի նախընթաց շուս աստիճանաց՝ օթևանացս պատրաստութեան, ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դարձաց բերկրեցեալ

լրութեամբ քառութեան պտղոյն երանութեան որայիցն բարութեան»։ «Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս իր ապաքան սերմանող անբերրի երկրի» (Բ)։


Նարեկացու մակդիրների մի նշանավոր յուրահատկությունն էլ այն է, որ շատ անգամ ոչ միայն հակադիր երևույթներն են իրար հետ կապվում, այսինքն՝ մակդիրի և այդ մակդիրը կրող առարկան հակադիր են իրար, այլ, որ մակդիրի և առարկայի մեջ ոչ մի կապ, ոչ մի առնչակցություն չկա։ Հակադիր երևույթները այդ դեպքում ավելի մոտ են, քան այն, երբ երկու տարբեր հասկացությունների մեջ հեռավոր նմանություն անգամ չկա։ Առաջանում է մտքի մեծ լարում՝ գտնելու աղբյուր այդ երևույթների մեջ. ստացվում է մտքի համար ընդարձակ նյութ՝ մոտեցնելու այն օղակները, որ շատ նուրբ և աննկատելի թելերով կապված են։ Մակդիրը ընդունում է փոխանունական մի բարդ արտահայտություն։ Երբ ասում ենք «ձեք լուսակիր», այնքան էլ մեծ անակնկալի առջև չենք գտնվում, քանի որ լույսը և ձեթը փոխանունությամբ մոտ են իրար։ Բայց երբ Նարեկացին գրում է «Իսլաուրական աղաչանք, խնկապատար աղաչանք», այս դեպքում արդեն հղացումը նոր է, սրողված կրոնա-խորհրդավոր մշուշով։

Ավելի ուժեղ համադրում է և նորություն իր ժամանակի համար «թխառիպ կիրք», որպիսի մակդիրները գործ են ածել քսաներորդ դարում խորհրդապաշտ բանաստեղծները։ «Կոռ զգազիր թխատիպ կրիցս ապականութեանս կարիս» (Խ)։ Այստեղ անսովորությունը այն է, որ արտաքին հատկանիշը, որ հատուկ է երևելի առարկաներին, կապակցվում է հոգեկան ու մտավոր բարդ երևույթների ու զգացումների հետ։ Նարեկացին կիրքը պատկերացնում է իբրև սև, չար, խավար զգացում՝ ելնելով կրոնական ըմբռնությունից, հակառակ Վարուժանի, որ ունի «կառմիր կիրք»։ Եթե սև գույնը Նարեկացու համար նույնն է, ինչ որ չարությունը, խավարը, մեղքը, որի պատճառով էլ ամենաբացասական առարկաները որակվում են սև հատկանիշներով. ինչպես «թխառեռնակ մառ, խառառ խոռհուրդ», ապա Վարուժանի համար կառմիր հատկանիշը լույսի, պտղաբերության դրական որակումն է, գուցե գիտակցաբար հակադրված Նարեկացուն կամ Նարեկացու նման հոգևորական բանաստեղծներին։ Նարեկացին կիրքը թխատիպ է համարում, քանի որ այդ զգացումը շատ հաճախ է տանջում վանական բանաստեղծի հոգին, քուն թե արթուն. այն բոցավառվում է մեծ մարդու արյան ու էություն մեջ, առանց հագեցում գտնելու, մինչդեռ Ավետարանը քարոզում է կիրքը դեն նետել, իբրև յոթը մահացու մեղքերից մեկը։

Այսպիսով, մակդիրները ծառայում են Նարեկացու համար կյանքը և նրա երևույթները պատկերավորելու միջոց։ Նրա որակումները պատկերացնում են միջնադարի կյանքը իր կրքերով ու պահանջներով, իր ձգտումներով, հուսալքումներով ու հույսերով, իր ողջ աննշանելի կացությամբ։

Նարեկացին խոսքի մեծ վարպետ է, վարպետ ոչ միայն իբրև գեղագետ, այլև լեզվի շինարար. հայոց հին լեզվով մինչև Նարեկացին գեղարվեստական երկեր չկային։ Հին լեզվով կար սահմանափակ կրոնական, պատմական և մասամբ թարգմանական ու ինքնուրույն փիլիսոփայական գրականություն։ Մեր լեզուն ի վիճակի չէր մարդկային հոգու նրբին զգացումները, իրականության բազմապիսի երևույթները գեղարվեստական խոր ընդհանրացումով արտահայտել, պակասում էին համապատասխան բառերն ու կապակցությունները։ Նարեկացին բաց արեց գեղարվեստական խոսքի գաղտնի ուղիները։ Համաշխարհային մշակույթի պատմության ամենաաղքատ դարում ու հայոց միջնադարում հայրենի սրբազան խոսքը հարստացրեց նորանոր գեղեցիկ կապակցություններով, բառերով ու արտահայտություններով։ Նարեկացին դարձավ հայ գեղարվեստական խոսքի ստեղծագործ առաջին վարպետը և դրանով իսկ վերաբանը դրեց այն դասական գրքի, որի առաջին թերթերը լուսավորել էին Նղիսկին ու Ագաթանգեղոսը, Նղիշեն ու Բուզանդը, Խորենացին ու Փարպեցին։ Սովորաբար որևէ շրջանի գրականության սկիզբը դնողները իբրև պայծառ ջահեր լուսավորում են գալիքը, մնում են սերունդների անկրկնելի պարծանքը, այդ շրջանը փակողները չեն հասնում այն բարձունքին, բայց Նարեկացին, որ փակում էր մեր հոգևոր մշակույթի մի մեծ և բեղմնավոր շրջանը, կանգնեց Մեսրոպի ու Խորենացու կողքին իբրև հավասար և իբրև նոր խոսք ասող։ Նա եզրափակեց հինը և սկիզբ դրեց մեր հոգևոր մշակույթի մի նոր շրջանի, դարձավ հին և նորի կապող մեծ օղակը, ստեղծեց գեղարվեստական յուրահատուկ լեզու, հարյուրավոր բառեր ու ձևեր, օգտվեց մեր ժողովրդական լեզվից և հինգ հարյուրամյակի զանազան ուղղությունները ամբողջացրեց։ Նրա գիրքը դրսևորում է արվեստն ու փիլիսոփայությունը, կրոնն ու դավանաբանությունը, աղոթքն ու երգը. դա մեր ժողովրդի ծանրագույն տառապանքի կանչն է, մեր հին մշակույթի համադրումը։ Իրավամբ դա կոչվել է ողբերգություն, բայց ողբերգությունը լրիվ չի բնորոշում։ «Մատենան ողբերգութեան»-ը մի առանձնահատուկ դուրսգնեցություն է և տառապանքի դարապատում։

(Շառունգյան)



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ԲԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁԸ*

Ղազար Փարպեցու ծննդյան թվականը, տեղը և սոցիալական ծագումը որոշելուց հետո, անկանում ենք խոսել նրա վարած դեպքերով ու դեմքերով հարուստ կյանքի ու գործունեության մասին:

Փարպեցուն մենք առաջին անգամ տեսնում ենք Յուրտավում՝ Վրաց Աշուշա բզեշխի տաղը, ուր նա «սննդակից» և «խաղակից» էր Դամիկոնյան և Կամսարական իշխանազուններին: Սրանց դաստիարակությամբ և կրթությամբ ամենից առաջ զբաղվում էին նրանց լայր՝ Զվիկը, և մորաբուլբը՝ Անուշվումը: Պացի սրանցից, նրանք ունեցել են և այլ ուսուցանողներ» (Փարպեցի, էջ 110 և 188): Այդ «ուսուցանողներ»-ը կարող էին լինել իշխանական տան դուռն երեցներ կամ այլ ուսուցիչ-վարդապետներ: Այստեղ՝ Աշուշայի տանը, իշխանիկների հետ մեկտեղ իր առաջին կրթությունն է ստանում նաև մեր ապագա պատմագիրը (Փարպեցի, էջ 188): Սակայն այս հանգամանքը չպետք է մեզ շփոթություն մատնի, թե ինչպե՞ս կարող էր Փարպեցու նման ո՛չ ազնվական անձը սովորել ու դաստիարակվել իշխանազունների հետ միատեղ: Մենք գտնում ենք, որ այդ համատեղ ուսուցումը կարո՞ղ էր տեղի ունենալ, եթե նույնիսկ Ղազարը այդ տանը ծա-

ռայական դուրյան մեջ լինե՞ր: Ինչպես վերևում ասացինք, Փարպեցին կարող էր իր անձնական բարեմասնությունների ու բարեհամբույր վարքի շնորհիվ շրջապատի կողմից հարգանքի ու պատվի արժանանալ, իսկ Զվիկի նման «անվանի, առաելիալ լաւ և մտաւորք մասամբք» օժտված կնոջ աչքից չէին կարող վրիպել շնորհալի պատանու ձիրքերը, և նա կարող էր հանձնարարել իր որդվոց ուսուցիչներին՝ Փարպեցուն էլ կրթել նրանց հետ միասին: Եվ հետո, չպետք է մոռանալ ժամանակաշրջանը, երկրի իրադրությունն այդ ժամանակ, երբ «... բարձեալ էր յաշխարհէն Հայոց և կորուսեալ վաստակը, միտք, քաջութիւն, տոհմակութիւն և արդարութիւն...» (Փարպեցի, էջ 167: Ընդգծումը մերն է—Չ. Հ.): Այո՛, երբ «բարձեալ» և «կորուսեալ» էր «տոհմակութիւնը», կարո՞ղ էր տեղի ունենալ այդ համատեղ ուսուցումը:

Թե որքա՛ն ժամանակ է տևել այդ ուսուցումը, որքա՛ն ժամանակ է Փարպեցին մնացել Յուրտավում, չգիտենք. այդ մասին միայն մոտավոր գաղափար կարող ենք կազմել, որի մասին կխոսենք քիչ հետո: Սակայն, գիտենք, որ դրանից հետո Փարպեցին սնվել, ուսանել է Աղան Արծրունու մոտ և նրա կողմից հոգևորական է ձեռնադրվել (Փարպեցի, էջ 5 և 188): Իսկ որտե՞ղ է տարվել այդ ուսուցումը, որտե՞ղ է Փարպեցին կրոնավորի սքեմն ընդունել: Գ. Խալաթյանն այդ մասին պարզորեն գրում է, որ նա՝ Փարպեցին,

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № 5-ից:

Վրաստանում միառժամանակ մնալուց հետո, գնաց Գողթն՝ Աղան Արծրունու մոտ՝ իր թերի ուսումը լրացնելու, և այնտեղ էլ վերջինիս կողմից ընդունեց կրոնավորության սրբմը²⁷: Ճիշտ է, որ Արծրունին ճգնել է Գողթնում²⁸, բայց դա մեզ իրավունք չի տալիս ասելու, թե Փարպեցին էլ Գողթն գնաց և այնտեղ ձեռնադրվեց հոգևորական: Ա. Արծրունին Գողթնում մնացել է մինչև 451 թվականը և Վարդանանց պատերազմից անմիջապես հետո իր հոր և հորեղբայրների հետ միասին գնացել է Հունաստան²⁹: Այնտեղ նա մնացել է մինչև իր հոր և հորեղբոր մահը, որը տեղի է ունեցել Լևոն Ա (457—474 թ. թ.) կայսեր գահակալության հենց սկզբում, ուրեմն 457 թվականին: Դրանից հետո միայն Աղանը վերադարձել է Հայաստան³⁰: Մենք տեղեկություն չունենք, թե նա վերադարձից հետո նորի՞ց գնաց ճգնելու Գողթնում, թե՞ մի այլ տեղ, բայց գիտենք, որ նորից մնաց Եկրոնաւորական խոստամբերութեամբ» և «հրեշտակալի անուշաբանութեամբ»՝ դասվելով սրբերի շարքը³¹: Ուրեմն, չենք կարող պնդել, թե Փարպեցին գնացել է Գողթն՝ Աղանի մոտ, որովհետև չգիտենք, թե վերջինս որտեղ է ճգնել վերադարձից հետո և արդյո՞ք ճգնել է... Ընդհանրապես, պետք է ենթադրել, որ Աղանն ինքն է վերադարձից հետո գնացել Գուգարք՝ իր քույրերին տեսության, և ապա սկսել է կրթել ու դաստիարակել ինչպես իր քրոջ որդիներին, այնպես էլ ուշիմ ու խելացի Փարպեցուն: Մեզ այս ենթադրության հիմք նախ և առաջ տալիս է Փարպեցու այն տեղեկությունը, երբ վերջինս իր մասին գրում է. «... սուրբ և ստոյգ հաւատ... ուսեալ ի տղայութեանն յերանելոյ Աղանայ...» (Փարպեցի, էջ 202): Իսկ նա իր «տղայության» հասակն անց է կացրել Աշուշայի տանը: Երկրորդ՝ մեզ այդ ենթադրության է մղում նաև այն հանգամանքը, որ Աղանի անունը, նրա մահից հետո, որպես սրբի, հռչակվել է ոչ միայն Հայաստանում, այլև Աղվանքում ու Վրաստանում (Փարպեցի, էջ 6): Եթե նրա անունը հռչակվել է Աղվանքում և Վրաստանում, ուրեմն նա եղել է այդ տեղերում, իսկ եթե եղել է Վրաստանում, ապա առաջին հերթին կլինեք Ցուրտավում՝ իր քույրերի մոտ: Բայց մի բան պարզ է, որ Փարպեցին ուսանել է Արծրունու մոտ վերջինիս Հունաստանից վերա-

դառնալուց հետո: Ուրեմն, այդ ուսման սկիզբը պետք է փնտռել անպայման 451 թվականից հետո:

Եվ ահա, Աղան Արծրունին, այստեղ՝ Աշուշայի ամրոցում, սկսում է «սուրբ և ստոյգ հաւատ» սովորեցնել ինչպես իշխանիկներին, այնպես էլ Փարպեցուն: Պատանի Ղազարն է ձիրքերով ու ձգտումներով, իր ուշիմությամբ ու ընդունակությամբ իրենցով այն աստիճան գրավում Արծրունուն, որ նա որոշում է Ղազարին հոգևորական դարձնել և ապա բարձրագույն կրթության տալ: Այս մտադրությամբ էլ բուն թափով շարունակվում են ուսումնառությունները: Ըստ երևույթին, բացի Աղանից, այլ ուսուցիչ-վարդապետներ ունեցնում էր Ղազարին (Փարպեցի, էջ 187): Այս ուսումնառության տարիներ տևում են մոտավորապես մինչև 462—463 թ. թ., այսինքն մինչև Մամիկոնյան Կամսարական իշխանիկների վերադարձից հետո կալվածները: Պետք է ասել, որ Հ. Մ. Չամչյանը ճիշտ է վճարվել, սրանց վերադարձը կապելով կապալա նախարարների ազատության ու Հայաստան վերադառնալու հետ սխալվելով միայն թվականի հարցում³²:

Այո, Մամիկոնյան ու Կամսարական իշխանազույգը դրանից առաջ չէին կարող Գուգարքից վերադառնալ իրենց կալվածները որովհետև մինչ այդ երկրում տեր ու տնօրեն էին ուխտազանցները, երկիրը գտնվում էր խառնաշփոթ վիճակում, և ուրիշ շատ իշխանական տոհմերի հետ միասին, իրենք էլ զրկված էին իրենց կալվածներից, այնպես որ վերադարձի համար՝ չկային բարենպաստ պայմաններ: Իսկ երբ 450—451 թ. թ. ապրտամբությանը մասնակցած և Պարսկաստանի խորքերն աքսորված հայ նախարարներն ազատվում և վերադառնում են Հայրենիք, դրությունը փոխվում է: Ամենից առաջ Հայոց աշխարհը վերստանում է իր կորցրած ղեկավարներին, իրենց կալվածներից զրկված շատ նախարարական տներ վերստանում են դրանք, երկրում ստեղծվում են քիչ թե շատ խաղաղ վիճակ և այլ բարենպաստ պայմաններ, որոնք արդեն հնարավորություն են ստեղծում Գուգարքում ապաստանածներին վերադառնալու իրենց հայրենական կալվածները: Նախարարները Հայաստան են վերադարձել Մամիկոնյանների թագաւորութեան Պերդդի»³³ (Պերդդ՝ 457—484 թ. թ.), այսինքն՝ 462 թվականին: Ուրեմն, նրանք էլ Ցուրտավից վերադարձել են այդ թվականից հետո: Հենց այս ժամանակներն էլ Աղան Արծրունին Փարպեցուն հոգևորական է ձեռնադրում:

²⁷ Գ. Խալաբյան, էջ 9, 10 և 11.

²⁸ Թովմայի վարդապետի Արծրունայ, «Պատմութիւն տան Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 130—131.

²⁹ Նույն տեղում, էջ 142.

³⁰ Նույն տեղում, էջ 144.

³¹ Նույն տեղում.

³² Հ. Մ. Չամչյան, Բ, էջ 156.

³³ Գ. Փարպեցի, էջ 110.

Փարպեցի, էջ 188): Դրանից հետո, ինչպես
դրվում է, երիտասարդ Ղազարն ուսանել է
գալստորից վերադարձած Արրահամ Խոստո-
վանողի մոտ. «... որում ըստ ձայնի խորհրդ-
ոյն և շահագուցանելի ծերութեանս, և կա-
ռող լինելի առ նմա գոնեա սուղ ինչ ժամանակ
մնալ... այլ յաղազս իմաստաւոր բանի, ըստ
տնորս տեանն մեծ հրահանգին, շահեալ ի
նմանէն՝ հանգոյն մեծի գանձու ամփոփելոյ
հաշուէի զպարապումն զայն» (Փարպեցի,
էջ 202): Ինչպես երևում է, Փարպեցին քիչ է
աշակերտել Խոստովանողին, այլպես չէր
ապաստաս «նրա մոտ քիչ ժամանակ մնալու»
համար: Դրանից հետո, շուտով, մոտավորա-
պես 465—466 թ. թ., երիտասարդ Ղազարը
վրի վարդապետների՝ Արծրունու և Խոստովա-
նողի հրամանով, մեկնում է Հունաստան՝ ու-
սումը կատարելագործելու նպատակով (Փար-
պեցի, էջ 187):

Բյուզանդիոնում նա երկար տարիներ մեծ
ծրաջանությամբ կարգում և ուսումնասիրում
է հին հունական մտածողների և Քրիստոնեա-
կան Եկեղեցու հայրերի՝ Աթանաս Ալեքսանդ-
րացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Կյուրեղ
Նրուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրի-
գոր Աստվածաբան նաղիանդացու և ուրիշնե-
րի երկերը: Նա առանձնապես մեծ ուշադրու-
թյուն է դարձնում հասարակական գիտու-
թյուններին, հատկապես հոեոտորական և
ճարտասանական արվեստին և շուտով փայ-
լում իր «բանական գիտութեամբ» (Փարպե-
ցի, էջ 185): Ստանալով իր ժամանակի հա-
մար բարձր և առաջավոր կրթություն, նա
վերադառնում է հայրենիք, և գալով Շիրակ,
մնում է Կամսարականների մոտ մինչև
Վահան Մամիկոնյանի վերջնական հաղ-
թանակը պարսիկների դեմ, յայնքն մին-
չև նվարսակի հաշտության պայմանագրի
կնքումը. «...և եկեալ անտի (Հունաստա-
նից—Ձ. Հ.) կեցի առ Կամսարականսդ
յամենայն ամբոխսն, մինչև յամս նուաճ-
ման ձեռոյ (Փարպեցի, էջ 187): Ընդգծու-
մը մերն է—Ձ. Հ.): Վ. Մամիկոնյանի
«նվաճումը» նվարսակի պայմանագիրն
է, իսկ այդ «նվաճման ամը»՝ 484 թվա-
կանը (Փարպեցի, էջ 158, 159, 170):
Ուրեմն, մինչև այդ թվականը Փարպեցին
եղել է Կամսարականների մոտ՝ Շիրակում,
թերևս որպես դռան երեց: Այնտեղ եղել է
«յամենայն ամբոխսն»-ի ընթացքում, որի
տակ պետք է հասկանալ ինչպես Վահանյանց
պատերազմի ամբողջ ժամանակաշրջանը,
այնպես էլ դրան նախորդող իրարանցումնե-
րով ու շփոթություններով լեցուն տարիները,
որոնք հղի էին ապստամբության պոռթկու-
մով: Այդ «իրարանցումներն ու շփոթու-
թյունն» սկսվում են Գյուտ Արահեզացի (461—

478 թ. թ.) կաթողիկոսի կյանքի վերջին տա-
րիներից, երբ ուխտադանցները՝ Գաղիշո
Մաղխազի գլխավորությամբ, նորից են աշ-
խուժացնում իրենց հայրենազավ գործողու-
թյունները և սկսում բանասրկությունների ու
խժդժությունների մի ամբողջ շարք հայրենա-
նվեր անձանց նկատմամբ: Այդ իրարանցում-
ների մեջ մտնում են Գյուտի դատը, Վահանի
կեղծուրացությունը և դրանց նախորդող ու
հաջորդող դեպքերը: Գյուտի դատը տեղի է
ունեցել 478 թվականին, իսկ Վահանի կեղծ-
ուրացությունը՝ դրանից անմիջապես հետո,
մոտավորապես՝ 478—479 թ. թ. (Փարպեցի,
էջ 113—117): Այս հաշվով, Փարպեցին Բյու-
զանդիայից պետք է վերադարձած լինի այս
դեպքերից մի քանի տարի առաջ, մոտավոր-
ապես 472—473 թվականներին՝ 32—36
տարեկան հասակում՝ այնտեղ ուսանելով
6—8 տարի:

Ինչպես երևում է, Շիրակում եղած տարի-
ներին Փարպեցին եռանդուն մասնակցու-
թյուն է ունեցել ինչպես Վահանյանց պատե-
րազմին, այնպես էլ դրան նախորդող բոլոր
դեպքերին՝ իր հորդորներով ու խրախույսնե-
րով, կրոնական քարոզներով ու խորհուրդնե-
րով, հայրենասիրական կրակոտ ճառերով
մարտի կոչելով հայրենիքի զինվորներին:
Իսկ պատերազմի հաղթական վախճանից հե-
տո, հոգնած ու պատերազմական թոհուրո-
հից ձանձրացած, Փարպեցին ցանկանում է
զբաղվել աղոթքներով ու հանգստանալ (Փար-
պեցի, էջ 187):

Եվ ահա նա գնում է Սյունիք՝ ճգնելու
Մովսես անունով մի կրոնավորի մոտ: Ձմե-
ռը նա անցկացնում է քարայրներում, իսկ
ամառը՝ տեղի եպիսկոպոս Տեր Մուշեի հետ
գնում է հովասուն վայրեր: Սյունիքում նա
մնում է երկու տարի՝ 484—486 թ. թ., մինչև
Վահան Մամիկոնյանի Հայոց մարզպան
նշանակվելը (Փարպեցի, էջ 187): Մարզպան
նշանակվելով, Վ. Մամիկոնյանն ավելի լայն
հնարավորություններ է ստանում ընդարձա-
կելու դեռևս 484 թվականից սկսած իր բարե-
նորոգման ու շինարարական աշխատանքնե-
րը: Միաբանություն է հիմնում³⁴ դեռևս այդ
թվականին իր կողմից նորոգված³⁵ Վաղար-
շապատի կամ Նոր քաղաքի³⁶ կաթողիկե եկե-
ղեցում և նրան կից վանքերում և ապա մտա-
ծում եկեղեցական այդ կարևոր կենտրոնի
հոգաբարձությունը հանձնելու ձեռնարկ, ըն-
դունակ ու վստահելի մի մարդու: Շատ սքե-
մավորներ են ցանկանում ձեռք բերել այդ

³⁴ Ասողիկ, էջ 81—82:

³⁵ Ղ. Փարպեցի, էջ 157, 176, 186:

³⁶ Փարպեցու ժամանակ Վաղարշապատը միաժամա-
նակ նոր քաղաք է անվանվել (Փարպեցի, էջ 176):

արդյունավետ պաշտոնը, սակայն Վահանը չի մոռանում իր մանկության ու պատանեկության օրերի սննդակցին ու խաղակցին: Ուստի նա Սյունյաց աշխարհից գտնում, բերում է Փարպեցուն, այն մարդուն, «որում ոչ ոք գոյ փոխանակի» (Փարպեցի, էջ 188) և նրան հանձնում այդ պատասխանատու պաշտոնը (Փարպեցի, էջ 186: Տե՛ս նաև Ասողիկ, էջ 82):

Ստանձնելով հոգաբարձությունը՝ Փարպեցին շուտով մեծ բարեկարգության է հասցրել ու եկեղեցին և վանքերը, կարգ ու կանոն է մտցնում այնտեղ, գրանցման է ենթարկում միաբանության բոլոր հասույթներն ու նվիրատվությունները: Այս գործում նրան մեծ աջակցություն ու օգնություն են ցույց տալիս Վահանի եղբայրները, եղբորդիները, Կամսարականները, Համազասպ Մամիկոնյանը, Գազրիկ Աբեղյանը և ուրիշներ (Փարպեցի, էջ 195 և 196): Շուտով իր «գործավոր» քարոզների և լուսավոր ու անսպառաքել շնորհիվ, ինչպես և իր «առավելյալ շնորհներով» գրավում է ժողովրդի սերն ու համակրանքը, որը «հոգաբարձությանը է լսում» նրան և «գովություն» արժանացնում (Փարպեցի, էջ 200):

Բայց այս բոլորը երկար չի տևում: Հոգաբարձուի այդ կարևոր ու արդյունավետ պաշտոնը, որ հենց սկզբից էլ վիճարկվել էր բազում նախանձորդների կողմից (Փարպեցի, էջ 197), գրգռում էր տգետ ու խավարամիտ շատ սքեմավորների ընչաքաղցությունը, և նրանք առիթի էին սպասում՝ իրենց ընչաքաղցությանը հագուրդ տալու համար: Առիթը չի ուշանում:

490 թվականին վախճանվում է հայոց կաթողիկոս Հովհան Մանգակունին: Նրան հաջորդում է Բաբգեն Ոթմսեցին (490—516 թ. թ.)³⁷: Ժամանակավորապես լուծ կրոնա-դավանաբանական վիճաբանությունները նորից են սկսվում: Հայաստանում սկսում է կազմակերպվել միաբնակ, հակաքաղկեդոնական հոսանք³⁸: Եվ բացի դրանից, ժամանակավորապես թաքնված պարսկասերները նորից են բարձրացնում իրենց գլուխները և սկսում են հալածել հունական գիտությունը սիրող ազգայիններին³⁹:

Ղազար Փարպեցին, լինելով այս ազգային մտավորականների ականավոր ներկայացուցիչը, բնականաբար զերծ չէր մնալու նրանց հալածանքներից: Սկզբում այդ հալածանք-

ներն ի հայտ են գալիս բանասարկությունների մի ամբողջ շղթայով, հետո՝ վանքի կահ-կարասու ջարդումով և եկեղեցու փայտակերտ շինվածքները հրդեհելով, և վերջապես՝ «նման գալլոց» հարձակումով ու «անխնայ գիշատում»-ով (Փարպեցի, 186, 197): Նրան սկսում են մեղադրել մի շարք «մեղք»-երի պոռնկության, աղանդավորության, աղանդավորներին հովանավորելու, անգիտության մեջ⁴⁰: Խլում են նրա ամբողջ ունեցվածքը և գրեթե (Փարպեցի, էջ 196 և 197):

Այդ բանասարկություններին ու խժոժություններին վերջ տալու համար, Փարպեցին դիմում է կաթողիկոսին, բայց վերջինս տեսության իսկ չի արժանացնում նրան (Փարպեցի, էջ 199): Շարունակելով իրենց խարդավանքները՝ բանասարկները կարողանում են Փարպեցուն պախարակել նույնիսկ Վահանի աչքում (Փարպեցի, էջ 197): Եվ ահա, մեն-մենակ մնացած, բոլորի կողմից լքված, Փարպեցին շունի ոչ այլ ինչ անելու, եթե ոչ թողնել և փախչել դեպի օտար երկրներ:

Վաղարշապատից փախած Փարպեցու հանգրվանը լինում է Հայկական Միջագետքի Ամիդ քաղաքը⁴¹ (այժմ Դիարբեքիր): Այստեղ նա իր հայրենի երկրից հալածված օտարականի դառն ու տխուր կյանքն է վարում: Ինչպես երևում է, նա նույնիսկ օրվա հացի կարոտ է եղել: Համազասպ Մամիկոնյանն է եղել նրա «կերակրիչը» (Փարպեցի, էջ 195): «Թուղթ առ Վահան Մամիկոնեան»-ի «Առաջաբան»-ի հեղինակի տեղեկություններից երևում է, որ այստեղ էլ Փարպեցուն հանգիստ չեն տվել այդ հալածիչները (Փարպեցի, էջ 186): Միաժամանակ Ամիդում մնալուց հետո, նա այլևս չի կարողանում տանել այդ նենգությունները և, «իբրև դքս ապատերազմող զինեալ», գրում է իր հռչակավոր «Թուղթ»-ը, որպեսզի «լուեսցեն լիրբքն և անամօթքն», և նույն Համազասպ Մամիկոնյանի միջոցով, «որ և պատճառ իսկ եղև նմա» (Փարպեցու—Ձ. Հ.) այսքն դարձին, ուղարկում է Վահան Մամիկոնյանին (Փարպեցի, էջ 186, 191), որտեղ մեծ զայրույթով, մեծ պաթոսով և ամբակուռ տրամաբանությամբ ապացուցում է իր անմեղությունը և ծաղկում ամբաստանողներին: Վահանը, համոզվելով դրանում, իր մոտ է կանչում Փարպեցուն և հանձնարարում գրել «Հայոց պատմությունը»՝ ստանձնելով այդ պատմագրական գեղեցիկ երկասիրության մեկենասությունը (Փարպեցի, էջ 5):

Այժմ անհրաժեշտ է պարզել, թե ե՞րբ է Փարպեցին գրել իր այս երկու գործերը:

³⁷ Մաղաֆիա աբխազիական Օրմանյան, «Ազգապատմություն», Ա, էջ Ի և ԻԱ:

³⁸ Լեո, էջ 139:

³⁹ Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք 1, Երևան, 1944 թ., էջ 201:

⁴⁰ Ղ. Փարպեցի, էջ 190, 192, 195 և 200:

⁴¹ Նույն տեղում, էջ 186:

Պետք է ասել, որ ուսումնասիրողների մոտ այս մասին տարբեր տեսակետներ կան: Փարպեցու «Պատմության» գրության թվականը չորսերորդ համար, ամենից առաջ պետք է նշանակել, թե ե՞րբ է գրվել «Թուղթ»-ը և ըստ այնմ պարզել նաև «Պատմությունը» գրելու տարեթիվը, քանզի «Թուղթ»-ը գրվել է «Պատմություն»-ից առաջ:

Այսպես, հավանական է, որ Փարպեցու սկսած ամար հալածանքներն սկսվել են նույն՝ 490 թվականից, երբ հայրապետական գաղափարներն իր ձեռքը վերցրեց Բաբգեն Ոթմսեցին, քանզի բանասարկությունն, ինչպես ասվել է արդեն, առիթի էին սպասում նրա ձեռքից սխալված վերակազմվի պաշտոնը, որը նրանց պատճառով ու դադար չէր տալիս: Լուռ էին նրանք, զբաղված Մանգաղիկոսի էր Կաթողիկոսական Քահանայի վրա, բայց երբ այն անցավ «տեղական» դատարարականությանը հառաջ եկած և հակա-հունական զգացմամբ տոգորված⁴² կուսակցության ներկայացուցչին, սկսեցին կատաղի կերպով հալածել Փարպեցուն: Ինչպես երևում է, գրանց տոն է տվել, խրախուսել է նույնիսկ ինքը՝ Ոթմսեցին: Մեզ այդ համոզմանն է բերում այն հակակրանքը, որ տածել է Փարպեցին վերջինիս նկատմամբ (Փարպեցի, էջ 199), նույնիսկ այն աստիճան, որ ոչ մի անգամ չի հիշատակում նրա անունը, մինչդեռ սրա նախորդի՝ Մանգաղիկոսի, անունը հիշում է բազմիցս և մեծ սիրով, ջերմությամբ ու հարգանքով: Ինչից և ո՞րտեղից էր գալիս այդ հակակրանքը, արդյո՞ք ճիշտ չէ Օրմանյանը, երբ գրում է. «Կերեկի թե Ղազար Փարպեցին իրեն (Ոթմսեցու—Ձ. Ն.) դեմ հզոր մրցակից (Կաթողիկոսական Աթոռի ժառանգություն համար՝ Մանգաղիկոսի մահից հետո—Ձ. Ն.) մը եղած է, այլ Բաբգենի Դվինի մեջ զորացած ըլլալը, իսկ Փարպեցին Վաղարշապատի մեջ հեռու և գործերն անմասն մնալը, վճռած են Բաբգենի հաջողությունը, և այդ պատճառով Փարպեցին հանգիստ բերելով իր իրավունքներն ալ մոռցած է, և վահանն ալ յուր կողմը շահելով Փարպեցին նեղություն մատնած է⁴³: Կաթողիկոս դառնալով՝ Ոթմսեցին կաշխատեց չեղդաբացնել Փարպեցուն և նրա տեղ վանահայր նշանակել իր համախոհներից մեկին: Փաստորեն այդպես էլ լինում է: Փարպեցու դեմ այնպիսի զորեղ խժոժություններ են սկսվում, որ նա Այրարատում երկար մնալ չէր կարող: Ուստի պետք է կարծել, որ նա Ամիդ փախավ կամ հենց այդ՝ 490 թվականին, կամ ամենաուշը

491-ին, որովհետև այդ բոլորից հետո նրան մնում էր ոչ այլ ինչ անել, եթե ոչ շուտափույթ փախուստի դիմելով ազատել իր զույգը:

Մենք գտնում ենք, որ նա Ամիդում էլ երկար չի մնացել: Մեզ այդ համոզման են բերում հետևյալ հանգամանքները. նախ՝ այդ բանասարկություններն այստեղ էլ են հասնում նրան, իսկ այդ նշանակում է, որ դրանք չեն լռել, իսկ լռելու համար հարկավոր էր բավականին ժամանակ՝ առնվազն երկու-երեք տարի, Փարպեցուն մոռանալու համար, երկրորդ՝ եթե չեն լռել, ապա նշանակում է, որ այդ բանասարկություններն ու խժոժությունները կրկնակի հետևել են նրան՝ լրիվ չեղդաբացնելու և վերացնելու նրանից երկու փուլով, երրորդ՝ «Թուղթ»-ը գրել է հենց այդ ժամանակ՝ դրանց վերջ տալու համար, չորրորդ՝ «Թուղթ»-ը գրելուց անմիջապես հետո, նա վերադարձել է հայրենի երկիր: Որ նա «Թուղթ»-ը գրելուց անմիջապես հետո է վերադարձել՝ հաստատվում է հետևյալ փաստերով. ա) մենք տեղեկություն չունենք, որ նա «Թուղթ»-ը գրելուց հետո սպասած լինի վահանի պատասխանին. բ) «Թուղթ»-ը վահանին է ուղարկում Համազասպ Մամիկոնյանի⁴⁴ միջոցով. գ) այս վերջինս էլ հենց պատճառ է հանդիսացել Փարպեցու վերադառնալուն: Հարց է ծագում, թե Համազասպը սկզբից «Թուղթ»-ը բերեց վահանին և հետո՞ նորից վերադարձավ Փարպեցուն տանելու, թե՞ միանգամից, ինչպես «Թուղթ»-ը, այնպես և նրա հեղինակին իր հետ տարավ հայրենիք: Բնական է, որ հավանականության մոտ է երկրորդը: Թերևս նա Փարպեցու փախուստից հետո գնացել է նրան փնտռելու և գտնելով Ամիդում, վերադարձել հայրենիք: Հավանական է, որ «Թուղթ»-ը հանձնում է վահանին, իսկ հեղինակին պահում իր մոտ մինչև որ վահանը, կարգավոր այն, կհամոզվեր Փարպեցու անմեղության մեջ, կներեր և իր մոտ կկոչեր նրան:

Քանի որ Փարպեցին Ամիդում երկար չի մնացել, ուստի այս բոլորից հետո կարելի է եզրակացնել, որ նա այնտեղ է եղել 491—492 թ. թ. և 492 թվականի վերջերին վերադարձել հայրենի երկիր: «Թուղթ»-ը գրել է Ամիդում 491—492 թ. թ.: Ահա այս վերադարձից հետո է, որ վահանը նրան հանձնարարում է գրել «Հայոց պատմությունը»: Ուրեմն, Փարպեցին իր այդ երկը գրել է 492

⁴² Մ. աբխազիկոսյան Օրմանյան, հիշված աշխատությունը, էջ 484:

⁴³ Նույն տեղում, էջ 482:

⁴⁴ Այս Տեր Համազասպը (Փարպեցի, էջ 195) կայալ նախարարների հետ վրկան աքսորված Համազասպ Մամիկոնյանն է (Փարպեցի, էջ 86): Նա մեծ է պատվական նախարար է (Փարպեցի, էջ 186), թերևս Վարդան Մամիկոնյանի կրտսեր եղբայրը:

բվականից հետո, բայց ոչ ուշ, քան 493 թվականը, որովհետև նրա փախուստը Այրարատից և վերադարձը կարող էր տևել ամենաշատը երկու տարի:

Թե ե՞րբ է վերջացրել իր «Պատմություն» շարադրումը, որտե՞ղ և ինչպիսի՞ կյանք է վարել այնուհետև, ե՞րբ է վախճանվել և ո՞րն է նրա վերջին հանգրվանը, հայտնի չէ, ուստի սխալ է ասել, և այն էլ ոչ հիմնավորված, թե Փարպեցին իր «Պատմություն»-ը ավարտել է 506⁴⁵ կամ 509⁴⁶ թվականներին: Հավանական է, որ նա շատ ավելի վաղ է վերջացրել իր երկասիրությունը: Այդպես ենք գտնում, ելնելով այն թարմությունից, որ զգում է ընթերցողը կարդալով այդ երկը: Ինչպես երևում է, Փարպեցին գրել է դեպքերի անմիջական ազդեցության տակ. խոսքն այստեղ հատկապես վերաբերում է նրա երկի երրորդ մասին: Նա իր գիրքը վերջացրել է ամենաշատը մի քանի, մոտավորապես՝ 3—5 տարում, որովհետև, եթե նրա շարադրման տևողությունն ավելի երկարներ, ապա կթուլանար դեպքերի տպավորությունը, և մենք չէինք զգա այն թարմությունը, որ կա նրա երկի վերջին մասում: Որ այդ այդպես է, երևում է այդ երկի առաջին երկու և վերջին մասերի համեմատությունից: Առաջին երկու մասերը վերաբերում են անցյալին, որոնք նա գրել է մեծ մասամբ զրավոր և ապա բանավոր աղբյուրների օգնությամբ, մինչդեռ, վերջին


մասի դեպքերին ինքն ախանառես է և նույնիսկ՝ մասնակից, իսկ հերոսներն իր շրջապատի մարդիկ են, որոնց հետ նա մշտական շփում ունի: Այս իսկ պատճառներով, թարմության տեսակետից խզում է առաջացել նրա երկի սկզբի և վերջին մասերի միջև: Կրկնում ենք, եթե նրա երկի շարահյուսման ընթացքը ավելի երկար տևեր, ինչպես ենթադրել են հալաթյանը, Ջամիլյանը և ուրիշներ, ապա մենք չէինք զգա ա՛յն թարմությունը, ա՛յն անմիջականությունը, որ կա նրա երկի վերջին մասում և այս մասը չէր տարբերվի նախորդ երկու մասերից: Այս հաշիվներից ու հանգամանքներից ելնելով՝ մենք գտնում ենք, որ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմության» շարադրումը ավարտել է մոտավորապես 495—498 թվականներին:

Գրելով ու դարերին հանձնելով իր նշանավոր երկասիրությունը՝ հայ պատմագրության փայլուն գլուխ-գործոցներից մեկը՝ Փարպեցին այնուհետև հրաժեշտ տվեց իր բուռն ապրումներով, դեմքերով ու դեպքերով հարուստ և անչափ արդասավոր կյանքին, մոտավորապես 2 դարի առաջին տասնամյակում: Ըստ ավանդության, մեր վաստակավոր պատմագրի շիրիմը գտնվում է Փարպիի մոտ գտնվող Լազրեվան կամ Ղազարու վանք գյուղի հարավակողմում եղած հին եկեղեցու հարավային ավանդատանը:

Ահա՛ այն բոլորը, ինչ որ կարող էինք իմանալ մեր բազմաշարչար ու բազմավաստակ պատմագրի՝ Ղազար Փարպեցու կյանքի ու գործունեության մասին:

⁴⁵ Ա. Ջամիլյան, էջ 84—85:

⁴⁶ Գ. Խալաթյան, էջ 113:





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Արտասահմանի հայության հետ մշակութային կապի հայկական կոմիտե.— Հունիսի 25-ին Երևանում տեղի ունեցավ արտասահմանի հայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպական կոնֆերանս, որին մասնակցում էին Հայաստանի պրոֆմիութենական, հասարակական, գիտական, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը կարողաց նախածենող հանձնախմբի դիմումը, որի մեջ ասվում է, որ նպատակ ունենալով է՛լ ավելի զարգացնել և ամրապնդել հայրենիքի և սփյուռքահայության միջև եղած մշակութային կապերը, առաջարկվում է ստեղծել մի նոր հասարակական կազմակերպություն, որը կարողանա ավելի նպատակալաց և գործուն կերպով իրագործել այդ խնդիրները:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն իր ելույթում ասաց, թե մեծ է սփյուռքահայության սերը դեպի իր հայրենիքը, դեպի նրա ժողովուրդը և մշակույթը. թող նոր ստեղծվելիք կոմիտեն օգնի արտասահմանի մեր հայրենակիցներին՝ ավելի մոտից ճանաչելու հայրենիքը: Մենք բոլորս կաշխատենք ավելի սերտացնելու Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մշակութային կապերը արտասահմանի հայ գաղութների հետ:

Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, գրող Նաիրի Զարյանը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Լ. Խաչիկյանը, հրապարակագիր Պ. Սեյլանը և ուրիշներ իրենց ելույթներում ջերմորեն պաշտպանեցին նոր կոմիտե ստեղծելու գաղափարը:

Այսուհետև կոնֆերանսը հաստատեց կոմիտեի կանոնադրությունը և ընտրեց արտասահմանի հայության հետ մշակութային կապերի կոմիտեի կազմը: Կոմիտեի նախագահ ընտրվեց Վ. Համազասպյանը:

Մենագրություն Ներսես Շնորհալու մասին.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել բանասիրական գիտությունների թեկնածու Գրիգոր Հակոբյանի աշխատությունը Ներսես Շնորհալու մասին:

Աշխատության մեջ տրված են Շնորհալու կյանքն ու գործունեությունը, տաղերի և գրական ստեղծագործության բազմակողմանի վերլուծումը, տաղաչափական և գեղարվեստական առանձնահատկությունները: Խոսելով Ն. Շնորհալու ստեղծագործությունների արժեքի ու նշանակության մասին, հեղինակը նշում է այն դերը, որ նա կատարել է միջնադարյան հայ բանաստեղծության զարգացման գործում, ներկայացնելով Շնորհալուն նաև որպես հումանիստ և հայրենասեր:

Մխիթար Գոշի մահվան 750-ամյակը.— Ընթացիկ տարում նշվելու է միջնադարյան հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներից մեկի, օրենսգետ և առակագիր, եռամեծ վարդապետ Մխիթար Գոշի մահվան 750-ամյակը: Գրականության և պատմագիտության հաստատությունները արդեն սկսել են նշանավոր տարեթվի արժանավայել նշման կանխապատրաստությունը:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը հրավիրել էր գիտական հատուկ նստաշրջան այս տարեթվի առթիվ: Լսվեցին մի քանի հետաքրքրական դասախոսություններ: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը խոսեց Մխիթար Գոշի մատենագրության պատմական արժեքի մասին, իսկ բանասեր Ասատուր Մնացականյանը՝ Գոշի Դատաստանագրքի ստեղծման պատմության շուրջը: Կարդացվեցին դասախոսություններ նաև Մ. Գոշի նամակների և Դատաստանագրքի վերլուծման մասին:

Մատենադարանը նույն այդ նստաշրջանը հրավիրելու է Իջևանում, ուր ծնվել և Գետիկի վանքում իր կրթություն է ստացել միջնադարի հայ ականավոր եկեղեցական ու իրավագետը:

Հայ գրականության պատմությունը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել հայ նորագույն գրականության պատմության երրորդ հատորը: Այս աշխատությունը, որը բաղկացած է լինելու 5 հատորից, տպագրության է պատրաստում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը:

Հատորն ընդգրկում է անցյալ դարի 70—80-ական թվականները: Հարուստ և բազմակողմանի նյութերի հիման վրա տրվում է Սունդուկյանի, Ռաֆֆու, Պատկանյանի, Պռոշյանի, Աղայանի, Ծերենցի կյանքն ու գրական գործունեությունը, դերն ու նշանակությունը հայ գրականության պարզացման գործում:

Առանձին գլուխներ են նվիրված Մ. Մամուրյանին, Գ. Արծրունուն, Գարեգին եպիսկոպոս Սրվանդությանին և հայ մշակույթի մյուս գործիչներին, որոնք այնքան նշանակալի դեր են կատարել մեր հրապարակախոսության և գրաքննադատության պարզացման գործում:

Արժեքավոր աշխատություն. Պետրոս Աղամյանի մասին.— Հայաստանի պետական հրատարակչությունը ծուսերեն թարգմանությամբ լույս է ընծայել արվեստագիտության դոկտոր Ռուբեն Զարյանի արժեքավոր աշխատությունը՝ «Աղամյանի Ծեքսպիրը»: Գրքի առաջաբանը գրել է նկարիչ Մարտիրոս Սարյանը:

Փաստական հարուստ նյութերի հիման վրա, գրքի հեղինակը նկարագրում է հանճարեղ դերասանի ստեղծագործական ուղին, նրա աշխատանքը Ծեքսպիրյան կերպարների կերտման գործում և այն վիթխարի ավանդը, որ Պ. Աղամյանը մուծել է թատերական արվեստի պարզացման գործում: Գրքում լայն տեղ է տրված հայ և ռուս քննադատության և հասարակայնության գնահատանքին դերասանի արվեստի նկատմամբ:

Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակը.— Այս տարի նշվելու է հայ նշանավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակը: Այս առթիվ գրականության ինստիտուտը տպագրության է պատրաստում մի ժողովածու, որի մեջ կմտնեն բանաստեղծի կյանքին, գրական և մանկավարժական ու հասարակական գործունեության վերաբերյալ նոր նյութեր, որոնք հաստատվել են վերջերս Մոսկվայի և Երևանի պետական արխիվներում: Հրատարակվելու է Հովհաննես Հովհաննիսյանի երկերի լրիվ ժողովածուն:

Հայ ժողովրդական հեքիաթներ.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի չորրորդ գիրքը՝ 15 000 տպաքանակով: Գիրքը տպագրության է պատրաստել, նախաբանն ու ծանոթագրությունները գրել բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մկրյանը: Հատորի մեջ Վետեղված են գերազանցապես Երևանի հայ ժողովրդական հեքիաթները:

Պատմա-բանասիրական հանդես—ի նոր համարը.— Լույս է տեսել Հայաստանի գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1964 թվականի 2-րդ համարը ճոխ բովանդակությամբ:

Հանդեսում Վետեղված են մի շարք արժեքավոր հոդվածներ գրականության, պատմության, լեզվաբանության, մանկագիտության հարցերի շուրջը: Հետաքրքրական են պրոֆ. Մ. Մկրյանի «Հակոբ Պարոնյան», Ա. Ալկո-

յանյանի «Զմյուռնիո տպարաններ», Հ. Պահակյանի «Միջնադարյան հայ տաղերգության ավանդները և Սալաթ-Նովան» հոդվածները:

Այս համարում Վետեղված են Ղապարոս Աղայանի 10 անտիպ նամակները: Տպագրված են փաստաթղթեր թուրք հափշտակիչների դեմ ԺԸ դարում Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարի վերաբերյալ և այլն:

Հայ մշակույթի անխնջ գործիչը.— Երևանի թատերասեր հասարակայնությունը ջերմորեն նշեց հայ թատրոնի հնագույն գործիչներից մեկի՝ Գարեգին Երիցյանի ծննդյան 85-ամյակը: Գ. Երիցյանը Վավական է պատմաբան-հնագետ Ալեքսանդր Երիցյանի:

Իր կրթությունն ստանալով Պետերբուրգում, Գ. Երիցյանը վերադառնում է իր ծննդավայրը Թիֆլիս և նվիրվում մշակութային գործունեության: 1906—1907 թվականներին նա հրատարակում է Անդրկովկասում առաջին երգիծական ամսագիրը ռուսերեն լեզվով: Հետո պրադվում է հրատարակչական և նկարչական գործունեությամբ, գրում է թատերական երկեր: Նրա գրչին է պատկանում «Ուշ լինի նուշ լինի» զավեշտական թատերգությունը, որը 1916 թվականից մինչև օրս խաղացվում է Անդրկովկասի ժողովուրդների թատերական խմբերի կողմից:

1921—1922 թվականներին Գ. Երիցյանը տեղափոխվում է Երևան: Նա Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նկարիչն է եղել 7 տարի շարունակ: Ներկայիս գրում է իր «Հուշեր ու ակնարկներ» գիրքը, որն ընդգրկելու է իր շուրջ 65 տարվա գործունեության ջրջանը:

Թիֆլիսի հայկական թատրոնի ներկայացումները Երևանում.— Հունիսի 20-ից մինչև հուլիսի 7-ը Երևանում ներկայացումներ էր տալիս Թիֆլիսի Ստեփան Եահումյանի անվան հայկական պետական թատրոնը, որի գոյության 100-ամյակը մեծ շուքով նշվեց Թիֆլիսում մի քանի տարի առաջ: Թատրոնը Երևան էր ժամանել ցույց տալու իր ստեղծագործական նոր նվաճումները:

Բոլոր ներկայացումներն անցան մեծ հաջողությամբ, արժանանալով երևանցիների ջերմ գնահատանքին: Խաղացվեցին Սունդուկյանի «Նաթաբալա», Ս. Խանկաղյանի «Միսթրալ սպարապետ», Ծեքսպիրի «Տասներկուերորդ գիշեր», Դիլերի «Սեր և խաղաղամեջ», ժամանակակից վրացի թատերագիր Աբելիալայի «Մարդը վերադարձավ» թատերգությունները և այլ պիեսներ:

Հյուրախաղերի ավարտից հետո, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան պետական օպերային թատրոնում կայացավ հանդիպման երեկո, որին ներկա էին արվեստի և գրականության աշխատողներ, թատերասերներ, պետական և հասարակական գործիչներ: Ներկաները ջերմորեն ողջունեցին Թիֆլիսի թատրոնի ամբողջ խմբին և մաղթեցին նորանոր հաջողություններ:

Հայաստանի Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը ողջունեց թատրոնին և պարգևատրեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրով: Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհվեց թատրոնի գլխավոր ռեժիսոր Ֆ. Բժիկյանին և արտիստ Դորի Ամիրբեկյանին: Թատրոնի 6 այլ աշխատողների շնորհվեցին Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործչի կոչումներ:

«Ռուսինական քնար».— Հայաստանի պետական հրատարակչությունը հայերեն լեզվով լույս է ընծայել ռուսներանաստեղծների գործերի ժողովածու «Ռուսինական քնար» խորագրով: Ժողովածուն բաղկացած է երեք բաժնից՝ ժողովրդական պոեզիա, դասական և ժամանակակից պոեզիա: Դասական բաժնում տեղ է տրված ռուսների մեծ բանաստեղծ Միքայիլ Լևինսկուի ստեղծագործությունների: Ժամանակակից պոեզիայի բաժնում տեղ են գտել 30 բանաստեղծների: Ժողովածուն թարգմանել է բանաստեղծ Գուրգեն Բոբյանը:

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ

«Էջմիածին» ամսագրում 1950—1952 թվականների ընթացքում լույս տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատան ձեռագրաց առաջին հարյուրյակի ցուցակը: Ամսագրում 1960—1963 թվականներին լույս տեսավ նոր ստացված ձեռագրերի երկրորդ հարյուրյակի ցուցակը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Մայր Աթոռիս ձեռագրատունը ձեռք է բերել նույնքան թվով ձեռագրեր: Անհրաժեշտ ենք համարում սկսել այդ ձեռագրերի երրորդ հարյուրյակի ցուցակի հրատարակությունը:

Վհափառ Հայրապետի ջանքերի շնորհիվ, վերջին տարիներս տառնյակներով ձեռագրեր նվիր ստացվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներին, Արգենտինային, Թուրքիային, Եգիպտոսին, Հնդկաստանին, Ֆրանսիային, Հունաստանին և Ռումինիային: Ներքին թեմերին ևս ստացվեցին մի շարք արժեքավոր ձեռագրեր: Բոլոր նվիրատուներին հայտնում ենք Վհափառ Հայրապետի օրհնությունները և Մայր Աթոռիս ձեռագրատան վարչության շնորհակալությունները:

Պանդխտությունից փրկված ամեն մի հայերեն ձեռագիր և պատուիրակ արժեքավոր ներդրում է մեր հնագրային մշակույթի ուսումնասիրության և գնահատման բնագավառում:

Կազմող՝ Ն. ՄԻՔԱՅԵՆՍԿԱ

№ 201

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թերթեր՝ 588:— Պրակներ՝ 97 հատ, յուրաքանչյուրը 6-ական թերթից: Մեծույունը՝ $34 \times 23 \times 9,4$ սմ:— Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ, վրան ոսկեգույն նախշեր, հատկապես կազմի կոնակի մասում: Կան երկու կաշյա բռնիչներ:— Պահպանակներ՝ սկզբից և վերջից 5-ական թերթ հասարակ թուղթ:— Վիճակը՝ բավարար:— Գրույթը՝ միասյուն:— Դատարկ թղթեր՝ թ. թ. 1—4 և 5—588:— Տաղեր՝ 27—39:— Գծումներ՝ ճշշումով:— Իր՝ հասարակ եռթղթի 2 ետևյալ թերթերը գրված են գեղեցիկ բոլորգրով՝ թ. թ. 226ա—238բ, 376ա—379բ, 382բ—384բ և 439ա—443ա:— Զարդագրություն՝ կա:— Գրիչը՝ Կոստանդնուպոլսի Հակոբ Նալյան Պատրիարք Ձմարացի (1752—1764):— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 1755—1758 թ. թ.:— Վայրը՝ Կոստանդնուպոլսի:— Մանրություն՝ սույն ձեռագիրը նվիր է տրված Վհափառ Հայրապետին 1961 թվականին Ստամբուլ Իր այցելության առթիվ, Ալեքսանդր Նանասովի և Իր դստեր՝ Էվգենիայի կողմից:

ԲՈՎԱՆԵՒԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. թ. 6ա—567բ.— Քարոզգիրք:

Թ. թ. 568ա—583ա.— Ցանկ քարոզներ (երկսյուն):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 5ա.— Զբորոք գործս զայս նուիրեմ քեզ Հոգի Սուրբ Աստուած. զբոյս ի բոյոցդ քեզ առաջնոյ պարզելիդ ընծայելով աղբատս ամենահարստի Տեառնդ իմոյ զիս ստացողիդ որպէս և աստուածաբանն Գրիգորեան. ի ճառի՛ն որ ի վերայ քոյ աստուածաբանութեանցն ասաց թէ մեք այնքան վստահանամք ի Հոգին զոր պարշեմք, մինչ զի աստուածաբանութեանս աստի արասցուք սկիզբն, վասն որոյ և հիմն ամենայնից բարեաց, և արմատ բնաւից պարզեաց զքեզ դաւանելով, զկանխախայծս զայս քարոզ ի պատիւ աստուածութեանդ նուիրելով, զօգնութիւն քո հայցեմ նուսաստս ի բանասիրաց Յակոբ և Եթ անարժան պատրիարքս Կոստանդնուպոլսոյ, որպէսզի որ յամենայնի նուագեալն եմ. զի քեզ համայն ստանալով. զգոլն իմ և զքարոզ գոլն խնամեալ դարմանիցես, և անուանդ բում զփառս տացես, և զի դու եղեր պարզս շարչարանաց էակիցդ և փառակցիդ՝ նմին իրի յուրբաթի աւուրն վերջնոյ մեծի Բարեկենդանին սկսայ ի փառս քո յամի մարդեղութեան քե օծեցելոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի 1755, և Հայոց ՌՄԴ, ի մարտի երեքն: Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա ի մեզ:

Թ. 567բ.— Ի պարզեաց Հոգւոյն աւարտեցաւ կիրակէից քարոզգիրքս, յամի Տեառն 1758, և հայոց ՌՄԷ, յունիսի ամսոյ ԺԹ, ի տօնի Սրբոյն Յօհաննու Մկրտչի, և Աթանագինեայ եպիսկոպոսին, ի փառս եռանձեայ և միոյ աստուածութեանն, Հօր, և Որդոյ, և Հոգւոյն Սրբոյ, և ի պատիւ ամէնօրհնեալ մօրն Յիսուսի և Աստուածածին Կուսի իմոյ յատկական այցելուի և բարեխօսի, և Սրբոյն Յովհաննու Մկրտչին և ամենայն սրբոց:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ա. Ն., Կ. Պոլիս:

Թ. 3ա.— Ա. Նանասով, Կ. Պոլիս, 1961:

Թ. 5ա.— (մեքենագրված) Առ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա մանայն Հայոց Հայրապետին, կը մատուցանէ՝ ուղղիական սրտագին և խոր յարգանքներով:

Ալեքսանդր Նանասով և դուստր Էվգենիա, Կ. Պոլիս, 12—7—1961:

(ձեռագիր ստորագրություն) Ա. Նանասով:

№ 202

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թերթեր՝ 485:— Պրակներ՝ 44, յուրաքանչյուրը 12-ական թերթից: Պրակներ լԳ՝ 2, ԻԱ և ԽԴ՝ 4, ԼԴ՝ 6, ԻԴ՝ 8, ԺԲ, ԻԲ, ԼԹ և Խ՝ 10, Ա՝ 11 թերթից են:—

հանձնարարությունը՝ 28,8×19,5×6,7 սմ.:— Նյութը՝ զեղնած կեղտոտած թուղթ, որոշ տեղեր հաստ թուղթ, իսկ մնացած տեղեր էլ բարակ: Այնքան բարակ է թուղթը, որ մասնաբեր գուրս է եկել թղթի մյուս երեսը:— Կազմը՝ հաշվապատ ստվարաթուղթ, քայքայված և կաշին պատճառած: Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական աստաղակ թուղթ:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ թղթային:— Դատարկ թղթերը՝ բազմաթիվ թղթերում թղթային մի երեսն է գրված՝ թղթի վատորակ լինելու պատճառով: Հետևյալ թերթերը դատարկ են՝ թ. թ. 141, 142, 331, 332, 375, 376, 433, 434, 484 և 485:—Տողները՝ 32—33:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ նոսրգիր, ձեռն-տեղ լավ, իսկ տեղ-տեղ էլ հապենպ կերպով գրված:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ Ղուկաս արդապետ խարերդցի:— Պատվիրատուն՝ Կոստանդնուպոլսի Հովհաննես Կոլոտ Պատրիարք Բաղդեցի (1715—1741):— Ժամանակը՝ 1741 թ.:— Վայրը՝ Կոստանդնուպոլիս:— Մանրություն՝ սույն ձևերը չունեն:— Վայրը է տրված Վեհափառ Հայրապետին Ստամբուլ Իրայցեյուքյան առթիվ 1961 թվականին, տեղ և տիկին Աղանիկ Աղամանի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Անտառ նորագոյն մտածման, հիմնալի հեղինակութեան Սուրբ Գրոց, ի սուրբ հարց և յայլոց ծայրագոյն վարդապետացն Սուրբ Եկեղեցւոյ:

Յարմարեցուցանելի ամենից լուր աւուրցն քառասնորդաց կիրարկէից ի մէջ տարւոյն և հասարակ տօնից:

Ի յարգելի Տեառն Աղէքսանդր Գալամաթօս Կոչեցեցելոյ Մէսինացւոյ: Ի Պատուալ:

Թարգմանեցեալ յիտալականէ լեզուէ ի հայկական բարբառ ի Ղուկաս վարդապետէ խարերթացւոյ:

Յամի Փրկչին 1741:

Ըստ խնդրոյ արհի և պանծալի եպիսկոպոսին Տեառն Յովհաննու պատրիարքին Կոստանդնուպոլսոյ:

Ի Կոստանդնուպոլիս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Ամենայն հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա-ի Իսթանպուլ այցելութեան առթիւ Տէր և Տիկին Աղանիկ Աղամ սոյն Աւետարանը կը նուիրեն Ս. Էջմիածնի: Իսթանպուլ, 16—7—1961:

№ 203

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 307:— Պրակները՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից, ի ըաց առյալ վերջինը, որ 7 թերթ է:— Մեծությունը՝ 26,5×20×7 սմ.:— Նյութը՝ զեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ժամանակին երեք ռոնիշներ են եղել, սակայն այժմ ընկել են: Կազմի վրա ճշումով մի մեծ

խաչ և այլ զարդեր են դրոշմված:— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական թերթ մազազաթ, որոնք նույն թերթի երկու կեսերն են: Մազազաթի գրությունը Ավետարանից է, հնությունը ԺԲ—ԺԳ դարեր, ունի մի հատ դունավոր հասարակ զխազարդ և մի հատ էլ քավական գեղեցիկ մարդագիր:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ երկսյուն:— Դատարկ թերթերը՝ թ. թ. 1, 2, 25:— Տողները՝ 21:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրություն՝ ձևագիրն ունի քավական գեղեցիկ զարդագրություն և մանրանկարություն: Կան ամբողջական թերթի մեծությամբ չորս ավետարանիչների նկարները (թ. թ. 29ր, 100ր, 149ր և 231ր), ձևագրի սկզբում 16 թերթ մեծ նկարներ՝ առնված Հիսուսի կյանքից: Ձևագիրն ունի նաև ութ էջ համարաբար, բազմաթիվ խորաններ և զմբեթներ, թռչուններ և սիրամարդեր, ծառեր և ծաղիկներ, զազաններ և հրշտակներ, սրբեր և մարդագուլիս թռչուններ, խաչեր և լուսանցազարդեր, զարդագրեր և մարդագրեր, թռչնագրեր և զազանագրեր:— Գրիչը՝ Հովհաննես քահանա:— Պատվիրատուն՝ Մխիթար:— Մաղկաղը՝ անհայտ (թ. թ. 20ր-ում և 21ա-ում նկարված երկու եղինկների վրա թվում է թև գրված է ծաղիկոյի անունը, սակայն այժմ անընթեռնելի է):— Ժամանակը՝ 1624 թ.:— Վայրը՝ Խիզան:— Մանրություն՝ սույն ձևերը չունեն:— Կառ Հայրապետի անունով նվեր է ստացված Իրանից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 301ր.— Փառք անսկըզբան և սկզբանն ամենայնի...

Թ. 303ա.— ... Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից բարեպաշտ Մրխիթարն զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախաւ Սուրբ Աւետարանիս և ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն Ովազարին և Բուրսամին և որդոյն իւրոյ Թասալոյն և կողակցացն (թ. 303բ) և ամենայն արեան մերձաւորացն: Ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ և զըհեղահոգի Մխիթարն և ծնողաց նորին՝ Ովազարին, Բուրսամին և որդոցն Մարութէ, Մուշեղին, որ ըստացաւ զՍուրբ Աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծրնաւորացն իւրոց, ի միտ առեալ զըբանն ծալայր որ ասէ—Երան որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեալ յԵրուսաղէմ: Վասն այն յուսոյն ըստացաւ զՍուրբ Աւետարանս:

Եւ արդ եղև զբաւ և կատարումն հրաշալի և աստուածախաւ Սուրբ Աւետարանիս ի մայրաքաղաքս Հիդան ընդ հովանեաւ սուրբ է տաճարացս Սուրբ Յարութեան և Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Յովհաննէս Մկրտչին, և Սուրբ Գրիգորին և Սուրբ Ստեփաննոսին և Սուրբ Սարգսսին զաւրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, (թ. 304ա) ի

թուին Հայոց ՌէՔ (1624 թ.) ամին, ձեռամբ անարգ և անպիտան սուտանուն Յոհանիսի որ անուամբ միայն եմ քահանայ և դատարկ յամենայն բարեաց, որ և մեղաւք ցնորեալ կամ յաշխարհի, կորացեալ մտօք իբրև զմոլորեալ ոշխար, ոչ ճանաչելով զճշմարիտ հովուապետն զՏէրն մեր Յիսուս Քրիստոս: Բայց աղաչեմ զձեզ զամենեսեանդդ կողկողազին պաղատանօք զի լի և առատ սրտիւ մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ ստացողի Սուրբ Աւետարանիս սրբասէր և բարեմիտ Մխիթարին և ծնաւդացն Ովաղարին, Բուրսամին, և ծնողաց և ամենայն ազգականաց նոցին, և ինձ անարժան Յոհանիսի և ծնողաց իմոց Տէր Յովանիսիին և Ահլուն, և պապուն իմոյ Տէր Միքայելին, և եղբարց իմոց Տէր (թ. 304թ) Միքայելին, Ամիրսէթին, ի քեւրն իմոյ Հովսէփին որ փոխեցեալ են առ Քրիստոս և ամենայն ազգականաց իմոց կենդանեաց և հանգուցելոցն մերոց: Ամէն:

Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք լի բերանով և ուղիղ սրտիւ իմ վարդապետին Տէր Կիրակոսին և ծնողացն և ամենայն ազգականաց նորա, կենդանեաց և հանգուցելոցն: Ամէն:

Եւ արդ եղև ի յայսմ ամի եղև մահտարածամ սաստիկ ի Մարը և ի Ստամբուլ, Բամով յառաջ և եկեալ հասաւ մինչև ի Յալայ և յՈւրհայ, և յԱմիթ և ի Բաղէշ, ի Վան և ի միջի մերում ի Խիզան, և ի մատակայ գաւառս մեր, և այնպէս սաստկացաւ մահն, զի ի յօրն Ծ (100) մեռեալ ելանէր ի Ա քաղաքէ, և ի բազում տանց Բ և Գ մի հետ տանէին ի դիր հանգստարանին (թ. 305ա) և Ժ-ն մեռելի մի կարք ասէին, և երեկոյի խոցացն ի լոյս ոչ ելանէր և քահանայք ոչ ժամանէին գալ ի տունս իւրեանց մինչև երեկոյի ժամուն ի հանգստարանէն, այլև ոչ հասանէին հաղորդութիւն տալ հիւանդաց, այլև այնպէս խստացաւ մահն մինչ զի Ե ու Զ տարւոյ տղայքն իւրեանց կաման զնային առ քահանայքն թէ զրմեզ հաղորդայ չի մեռանենք առանց հաղորդի: Եւ արդ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Զի դառնութիւն գործոց մերոց ել յերկինս և սրտմտեցոյց զկամք Արարչին մերոյ ի վերայ երկրի և մատնեցաւ արդարն ընդ ամբարիշտն, քան զի ելաք ի հրամանէն Աստուծոյ և մոռացաք զովստն զոր եդ առ հարսն մեր: Բայց ունիմք բարեխօս զՍուրբ Կոյսն Տիրամայր Աստուածածին, (թ. 305բ) զի նա աղաչէ զՈրդին իւր Միածին զի փրկեցէ և ազատեցէ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յորդաթից թշնամույն: Ամէն: Մանաւանդ զըստացող Սուրբ Աւետարանիս զբարեմիտ և զհեզահոգի Մլխիթարըն և զծնողսն իւր Ովաղարն, Բուրսամըն և զեղբայրն իւր Մալումն, Մուշեղն,

Մարութն և քեռն իւր Մէրտատիկն և կողակիցն իւր Վարթիկն և ամենայն դստերն իւր Ամէն:

Դարձեալ կրկին անկամ յիշեցէք ի Քրիստոս զԱմիրսէթ եղբայրն իմ, և զհոգեւոր եղբայրն իմ զՍտեփաննոսն որ ի յայսմ նշանէս փոխեցան առ Քրիստոս Աստուածն մեր ի յօրսն ամենեցուն: Ամէն: Եւ արդ, անմեղադիւրեւութիւն, ո՛վ եղբայրք, խոշորութեան և սխալանացս, զի կայր մեր այս է: Արդ, որք հանդիպիք սմա կարգալով կամ արինակելով զպակասու (թ. 306ա) թիւն ընուք և զաւելորդն բառնայք և այլ և այլ գրոյս անմեղադիր լեր, զի կայր մեր այս էր: Արդ, աղաչեմ զձեզ Աստուած ողորմի ասացէք անպիտան գրչիս Յոհանիսի և ծնողաց իմոց և ամենայն ազգականաց մերոց կենդանեաց և հանգուցելոց և այնոցիկ որ ի վերայ մեր աշխատանք և երախտիք ունին: Ամէն: Աւրհնեա Տէր: Հայր մեր:

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Տէր զստացող Սուրբ Աւետարանիս զմահադասի Մխիթարն և ծնողսն իւր Ովաղարն, Բուրսամն և եղբայրքն իւր Մալումն, Մուշեղն, Մարութն և քոյրն իւր Մէրտատիկն, և կինն իւր Վարթիկն և որդին իւր Թասալի և դստերն Մարիամն, Սաբրիկն, Դշխունն, Մէրտատիկն, և հանգուցեալ կանայքն իւր: Տնայինքն և այլքն որ է արհնեալ յաւիտեան:

Արդ, ես Մխիթարս ստացայ զՍուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իմոց, ընծայ տվի Բեղդահէմ եկեղեցոյն:

ՀԻՇԱՏԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Գրված կազմի առաջին երեսի կոնակին կպցված կարմիր կտորի վրայ).

Այս մատունս Ավետար. Տր. Նեկեղայոս այն իրան որդին Վաղարշապատ և Եղնազարան, Տր. Նեկեղայոսն: Թ. 307ա.— Գրեցաւ ձեռամբ Տէր Նազարէթ քահանայի Տէր Ղևոնդիանի ի թն. 1946 յունվար 30-ին Շատրովայում:

(Ձեռագրի վերջի մագաղաթյա պահպանակի երկրորդ երեսում գրված է).

1882 ամի հանդիպեցայ Ամ. Սուրբ Ավետարանիս եղիա քահանա Ենովսեան:

№ 204

ՅՈՒՆԱՅ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Քերթրը՝ 68.— Պրակեւր՝ 17, յուրաքանչյուրը 4 Քերթից, ի բաց առլալ Ա՝ 3 և Ժէ՝ 5 Քերթից.— Մեծուքումը՝ 26×19,5×2 սմ.— Նյուրը՝ մաքուր, սպիտակ հաստ թուղթ.— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով նկարված են զարդեր: Կազմի առջևի երեսում կա ոսկեգույն մի խաչ, իսկ կոնակի երեսում դարձյալ ոսկեգույն Մարիամ Աստվածածինը և Հիսուսը.— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական

Պժ քաց վարդապետն հասարակ թուղթի— Վիճակը՝
վարար— Գուրպուր՝ միասուն— Դատարի քրքրի՝
Վիճի— Տոգերը՝ անկանոն— Դժուվները՝ առանց
նշան— Գիրը՝ նոտրիքի— Զարգացումը՝ ձեռ-
նի կարմիր թանաքով նկարված հասարակ հիմ-
նադարը և շորս թռչնադիր— Գրիչները՝ Մահտեսի
վիճաննա դպրի Սիմոնյան և Յորկի աղայի որդի Այ-
լյան— Պատվիրատուն՝ անհայտ— Մաղկոցները՝
առ հավանարար գրիչներն են— Ժամանակը՝ 1846—
1847 թ. թ.— Վայրը՝ Ակնի վանք դուռը— Մանրու-
նուն՝ սույն ձեռագիրը 1961 թվականին նվիր է ստաց-
ված Աթենքից, հարյուրամյա ակնեցի եփրեմ Թաշճյանի
որդից, հունահայ թեմի առաջնորդական տեղապահ Տ.
Ամենակ-Մեհրոպ ավագ քահանա Տեր-Հակոբյանի
ընթացով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. Զա.— Գիրք խորհրդոյ Սրբոյ Պատա-
գի Յունաց:

Թարգմանեալ ի հելլենական բառէ առ հայ-
ական բարբառ ի Մելայիմ օղլի Գեորգ վար-
ապետէ:

Ըստ խնդրոյ և արդեամբք Զօրակցի Լազա-
րոսի երկրպագող գերեզմանի Տեառն բարե-
պաշտ և գրասէր քրիստոնէի:

Ի փառս և ի պայծառութիւն Կաթողիկէ և
Առաքելական Եկեղեցւոյ, առ ի լուսաւորու-
թիւն ամենայն քրիստոնէից:

Վերստին զծագրեցաւ ի վերայ ձեռագրոյն
Փրնճանճի տիրացու մաղտեսի Յօհաննէսի
գրչին:

Ի ձեռամբն իմով վերստին զծագրեցաւ
Եւթանի դպրի մաղտեսի Սիմոնեան, ի յԱկ-
նա քաղաքի գեղջէն Վանուց արեւելեան և որդի
Յեօրկի աղայի որդի Այմելեան:

Ի գիւղն Վանք 1846 ղեկտեմբեր 15-ին:

Թ. Զա.— Նախարանութիւն և թուղթ ի լոյս
ածողի գրքոյս:

Բանաստեղծի և իմաստագունի Տեառն
Մատթէոսի Տիրալտօյեան արքիտիագօրի
ամենասրբազանի և աստածաբանագունի Մե-
լիտինոյ եղբայրասիրի և արժանագունի տի-
տասկալոսիդ ամենայնի միայնոյ սեռի:

... Եւ արդ գիրքս այս թարգմանեալ Պատա-
րագ անուանեցաւ, զքեզ խնդրէ, որ և պատա-
րագօղ և հասարակ թարգմանիչ հելլենականի
սեռի ես և համբաւիսդ:

Ուրեմն քո է թարգմանել զսա, որով փա-
ռաւորեալ անուն քո, վայելէ զի փայլիցի ի
նեկայս:

Եւ քոյ է զսա աստուածաբանել նարդեանս
ըստ աստուածաբան հանձարեղութեան քում
պատշաճ է լինիլ այս Սուրբ Խորհուրդ քահա-
նայագործութեան, քո է սակաւս այս, ուրեմն
գիտեմ այժմուս այլապէս անուն [վերադնել]
բայց անշնորհ է [ինձ] որ ենթագրեցիցի: Ու-
րեմն առ քեզ վերաբերեմ, զսա, ով հեղինակդ

մեր, և առ քեզ մատուցանեմ զայս երկիւղ-
(թ. Յր)ածական, և բարեհաճութեան ներ
սրտի իմոյ զընծայս, և աղաչեմ զքեզ ընկալ
զսա ղուարթ երեսօք և ցնծայ:

Որ եմս բանաստեղծիդ նուաստ ծառայ, և
հաւատարիմ աշակերտ: Ի Եօրկիոս Սուղտու-
րիս՝ որ ի Իօնեան:

Թ. 66ա.— Յիշատակարան:

Գրեցաւ Պատրագամատոյց կոնտակս Սրբ-
բոյն Յօհաննու Ոսկեբերանին, և Սրբոյ մե-
ծին Վասիլիոսի, և Սրբոյն Գրիգորի Աստուա-
ծաբանին, նաև առաւօտու և երեկոյի ժամա-
կարգութիւնս, ի ձեռամբն իմով յԵւթանի
դպրի մաղտեսի Սիմոնեան և յԵօրկի աղայի
որդի Այմելեան, ի յԱկնա քաղաքի գեղջէն
Վանուց արեւելեան, ի վայելումն Շոգուի գիւղի
Յօհան Ոսկեբերանի եկ(թ. 66բ)եղեցւոյն
սպասաւոր քահանայից, եղի յիշատակ վասն
հոգւոյ իմոյ, և վասն ծնողաց և ազգականաց
և ընտանեաց իմոց: Աղաչեմ զձեզ, ով սրբա-
զան քահանայք յիշեսցիք ի մաքրափայլ
աղօթս ձեր զմեղսամած յԵւթանքս, և բարե-
հասակ և վայելչազեղ որդեակերս իմ Սիմոն
աղան և յԵօրկին և Լամպիկն և ղուստրն իմ
Մառինան և կողակիցս իմ Ելենի Տուտուն և
թոռունքս իմ յԵօրտանն, Տիմիդրին, և Լազա-
րագին, Սօֆիճան, և Սուլթանիճան, և Մայօ-
րիճան, և Մառլարիդան, և հարսնեքս Մառի-
նա Տուտու, Վառվառն և Շեքեր Մառիկըն:

Եւ ես յիշեսցիք զնախանջեցեալ հայրքս և
եղբարքս և ամենայն ազգականսն իմ՝ մաղ-
տեսի Ուլանես, մաղտեսի Խաղարոս, մաղտե-
սի Սիմէօն, մաղտեսի Ըստեփան, Յեօրիոս,
Տիմիդրիու, Լազարի, Վասիլիու, Նիգօլայ,
Անաստաս, Խարալամպի, մաղտեսի Պալա-
սան, մաղտեսի Սուլթան, մաղտեսի Մա-
րիամ Ելենի, մաղտեսի Մարիամ, մաղտեսի
Ելենի, մաղտեսի Նիկօլ, Նազլու, Սօֆիայ,
մաղտեսի Մառիկ, Մարիամ, Պալասան, Մա-
րիամ:

Եւ որք յիշէք յիշեալ լիցէք և ղուք յաւուրն
ետնում:

1847 փետրվարին 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի Ա էջում).

30—5—28 (հունարեւն գրված մի մարդու անուն, հայ-
րանուն և ազգանունը).

(Նույն պահպանակի Բ էջում կա վեց տող հունարեւն
գրութիւն).

Ես եմ քրիստոսի Մառայ զՏիոնդափիլոն որ 1902
յունվար 3-ին գիւղէրնիս ձամբայ էլամբ ի Տիլարպէ-
րի գընալով միթրօքօլիս Սիլվէտրոս էֆ.—ի մօտ Գողմո
Եկեղեցին քահանայ ութօթօրիս էղաք և 1902 փետրվար
3-ին ի կիրակի օրըն գիւղի գալով սուրբ օրհնութիւն
բերայ, եկեղեցիս քացանք, Տէրն վայել տայ, ամէն:

Առաջի անունը Տբիսարֆիլ, օծվեցամք Տէր Տիմո-
բէօս անունով:

Ք. 1ա.— Այս գիրքս գրէց Պապայանց Բանայօթը
1872 յուլիս 27, ով որ յիշէ Աստուած ողորմի ըսէ,
ամէն: (Հետագայում շնչված է):

(Կա հունարեն գրված երեք անուն ազգանուն):

Սա մի գիրքըս պարպար Մոխայելին Լիֆաթէ տա-
րադիր, լրսնցի բերել տրվի Լիֆաթէին 1. (=10) մ.
տալով կօխկըն շնիւ տրվի և 0 (=5) մ. ալ տրվի
փօստայ ծաղբըն եկեղեցիին հիսապին գիրեցի և մեծ
իօյտան էֆենտի ծայլմկեանի խրրկեցի որ մեր Սուրբ
Սոսկեբերնայ եկեղեցիին խրրկէ: 95, ապրիլ 29, Փիթ-
րօսպերօ Խանազիանց, Պօլիս, Վաղիր խանըն:

Ք. 66բ.— Սոյն Սուրբ Պատարագի Խորհրդատեարն
հօրս մեծ հօրը ձեռագիրն լինելով քանի տարի առաջ
նուիրեա՞ծ գիւղի զահանան... Միխանէ Լէֆթէ տարած
է, Եւ ի վերջո Շուղս գիւղի ժողովուրդներէն յարգի Փեթ-
րայ աղան բերել տալով կողմնի ծովեր է որ փոստայիւ
ղրկած եր, Յիշալ Փեթրայ աղայէ մեծապէս շնորհակալ
եմք որ սոյն մեր ազգատոհմի նուիրած գիրքն խաւա-
րէն ի լոյս ընծաեա՞ծ է: 1895 մաիս 3:

Յիշել ծովն աղայի թռն Ծոանի աղայի որդին Սի-
մէօն է. Այմելեան, վանեցի:

Ք. 67ա.— Յիշատակարան:

Աս Եփրատ Խորհրդոյ Սրբոյ Պատարագի՞ս ձեռագիր
հասուր՝ Յունաստանի Աթէնք մայրաքաղաքի Բէրիս-
տէրի թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ նուիրած է 18
մայիս 1961-ին բնիկ Ակնեցի 1861-ին (հարիւրամեայ)
ծնած պր. Եփրեմ Թաշճեան, զաւակը՝ Պետրոսի և
Սրբուհիի և հանգուցեալ կնոջմէն աղջիկ մը ունի՝
Սրբուհի անունով:

Եփրեմ Թաշճեան ժամանակի ընթացքին գտնուած է
Խարբերդ, Ատանա և Իզմիր, ուրկէ 1922-ին ապաստա-
նած է Յունաստան և այժմ կը բնակի Աթէնք, Տուր-
ղութի, D. H. 524 բնակարանը:

Ան՝ Ս. Էջմիածնայ Մայր Աթոռի հաւատարիմ, եր
յօժար կամօք նուիրած է այս մատենը, (Ք. 67բ)
խնդրելով ստացողներէն ողորմիս հանել իր հանգուցեալ
ծնողաց, տիկնոջ և ազգականներուն և իր և աղջկան
համար առողջութեան ու յաջողութեան մաղթանք:

Յունահայոց առաջնորդական տեղապահութիւնս յար-
մար նկատեց սոյն ձեռագիր հատորը նուիրել Մայր
Աթոռ Ս. Էջմիածնայ գրադարանին՝ ի վախճումն բա-
նասէր հոգիներու և ի փրկութիւն կորսուելու և փճա-
նալու վտանգին:

Առաջնորդական տեղապահ յունահայոց՝ խաչակիր
Արմենակ Մեսրոպ Ա. Բնէյ. Տէր Յակոբեան (Կ. Պոլ-
սեցի): 10 յունիս 1961, Աթէնք:

(Կլոր կնիք) Հովութիւն Հայ Առաք. Ուղ. Եկեղեցւոյ,
1958, Աթէնք: (Նաև նույնի հունարենը):

№ 205

ԱԶԳԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ

Թերքերը՝ 14:— Պրակները՝ 2, Ա՝ 6, Խկ Բ՝ 8 թե-
թից:— Մեծութիւնը՝ 25,7×19,5×0,3 սմ.:— Նյութը՝
գեղնած դիմացկուն թուղթ:— Կազմը՝ չունի:— Պաճա-
կներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար:— Գրութիւնը՝

փոխանակ սովորականի նման լայնքին գրվելու, գրվա-
ն է երկայնքին:— Դատարկ բլրերը՝ 13բ, 14ա և 14բ:—
Տաղերը՝ անկանոն և փոփոխական:— Գծումները՝ ճշու-
մով:— Գիրը՝ նոսրագիր:— Զարդագրութիւն՝ հայկական
մանրանկարչության մի շատ գեղեցիկ նմուշ է սով-
ձեռագիրը: Առաջին էջում կա մի շատ գեղեցիկ զխա-
ղարդ, նկարված ամբողջ էջի երկայնքով: Զեռագիրը
ունի գեղեցիկ թունազրներ, սրբանկարներ և առաքյա-
ների նկարներ: Գործ են ածված ոսկեգույն և նարնջա-
գույն, կանաչ և կապույտ, մոխրագույն և կարմիր գույ-
ները և դրանց երանգները: Բոլոր էջերում կան ճյու-
ղագրական ծանոթ կամ աղյուսակներ և շրջանակներ,
Օգտագործված են մի քանի գույներ, ցույց տալու հա-
մար որոշ դասավորումներ և խմբեր:— Գրիչը՝ Ղազվի-
նեցի Ներսես վարդապետ:— Պատվիրատուն՝ անհայտ:—
Մաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ ժէ դար:— Վայրը՝
շատ հավանաբար Պարսկահայաստան:— Մանրութիւն
սոյն ձեռագիրը 1962 թվականի հունվար ամսին նվիր
է ստացված Կահիրեից, պր. Հրանդ Նասիպյանի կողմից:

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 1ա.— Ըստ Մեծին Արիստո(գրված է
գեղեցիկ թռչնագրերով) տէլի իմաստասիրի
հարկ է ամենայն ընդհանրականի յառաջանալ
իւրում առանձնականի: Զի ընդ հանրականօք
առանձնականացն դիւրագոյն հմտանամք: Եւ
զի կամեցայ խօսիլ ի վերայ տոհմանց և աղ-
գակցութեանց, և պատմութեանց Հին և Նոր
Կտակարանաց: Պատշաճաւոր թուեցաւ ինձ,
նախ, բաժանել զգիրս Հին և Նոր Կտակա-
րանացն: Զհին Կտակարանացն բաժինքն
կարգել կամիմ, ըստ Եւրայեցւոցն կարգի և
բաժանմանցն: Ուստի և էառ սկիզբն, և սփռե-
ցաւ ընդ ամենայն ազգս: Եւ զկարգ Նոր Կտակա-
րանացս, կարգեցի ըստ կարգի Ուղղափառ
Եկեղեցւոյ սուրբ վարդապետաց՝ ի բաժան-
մունս բոլորակացոյ: Եթէ հաւանական թուես-
ցի, Տեառն շնորհ: Ապա թէ ոչ՝ ներել աղաչեմ
տկարութեանս:

Ք. 5ա.— Տեառն Յիսուսի Քրիստոսի ծա-
ռայ Ղազվնցի Ներսէս վարդապետ (գրված
1,5 սմ. մեծութեամբ մեծատառերով):

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. 14բ.— Նուէր Հր. Նասիպյանից, 17.1.1962:

№ 206

ՏԱՂԱՐԱՆ

Թերքերը՝ 98:— Պրակները՝ 9, յուրաքանչյուրը 10
թերթից, ի բաց առյալ 7 պրակը՝ 8 և Ե՝ 18 թերթից
են:— Մեծութիւնը՝ 22,5×15,8×1,7 սմ.:— Նյութը՝
սպիտակ հասարակ բարակ թուղթ:— Կազմը՝ թղթով
ծածկված սովորաբար, որի վրա մի քանի կենդա-
նիկներ են նկարված:— Պաճապակները՝ սկզբից և վեր-
ջից մեկական թերթ հասարակ թուղթ:— Վիճակը՝ բա-
վարար:— Գրութիւնը՝ միասուն:— Դատարկ բլրերը՝

Յ. — Տողեր՝ 21. — Գծումներ՝ ճշնամով: — Գիրք՝
Պարզագրություն՝ ձեռագիրն ունի մի հա-
յկ ձեռագիր (թ. 53ա) և հինգ հատ էլ շատ հա-
յկ փոքր գլխադարձեր և վերջնադարձեր: — Գրիշ և
բողոք՝ Պաղտատար վարժապետ: Պատվիրատուն՝
Աշխարհ: — Ժամանակը՝ ժը—ժթ դարեր: — Վայրը՝
Համալսարան Արևմտյան Հայաստան: — Մանրա-
րդ՝ 1963 թվականի հունվար ամսին ձեռագիրը նվա-
զացված կահիրեից, Երևանյան ընտանիքի կողմից,
այստույն հայրենադարձ Գևորգ Փանոյանի ձեռամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Յ. թ. 2ա—50ա. — (Կրոնական, եկեղեցա-
կան և աշխարհիկ 82 տաղեր):
Ֆ. թ. 51ա—52բ. — Յուդայական որբանութեանց
մեղեդանց իւրաքանչիւր տաղից և տաղարա-
նային համարովն յայտնեցեալ:
Փ. թ. 53ա—94ա. — Տաղիկներ սիրոյ և
պատանայ և այլ:
Փ. թ. 94բ—95բ. — Յանկ և ցուցակ գլխե-
ղան տաղիցս (ընդամենը 61 հատ են):
Փ. թ. 96ա—97բ. — Տաղ Ղարապի ի հնոյն
պատգեալ խղճալի ձայնիս: Ի գոյնն նէրտին
մնլը գովար պէնիմ մոսլուսմու: (Տաղիկնե-
ր մի բանիսը գրված են հայատառ տաճ-
արէն: Իբր նմուշ տալիս ենք Ս. էջմիածնին
գրված երկու տաղեր):
Փ. թ. 25ա. — Առ Սուրբ էջմիածին մայր հա-
տոյ Հայաստան երկրի: 41.

Անեղ գոյմամբ ուռն ի ձեռին.
Իշեալ Որդին ձօռն Միածին,
Բախէր զերկիր հաւմամբ ուժգին.
էջմիածին, էջմիածին:
Անուն սեւեռնի.
Սեւեռնիւն Յիսուսի,
Իշմամբն անուանեալ:
Բազմաշարք անհատակին.
Գրգռեալ հայրապետին,
Յայտնէր տեսիլն իշմամբ բանին,
էջմիածին, էջմիածին:
Գըմբեքայաւ խորան կազմեալ.
Կերպն ի յերկնից լուսաձեւալ,
Ինձ փրկութեան տաճար շինեալ.
էջմիածին, էջմիածին:

- Յ. թ. 25բ. — Դետողն արբուն՝ յառեալ նայէր.
Վաղարշապատն երբեմնապիւր,
Յորմէ աղբիւր շնորհաց բղխէր.
էջմիածին, էջմիածին:
Երկին յերկրի հաստատեցար,
Դռնովն հոգւոյն զիս ըստացար,
Մայր հաւատոյ անուանեցար.
էջմիածին, էջմիածին:
Ձուարբուն անուն հայրապետին.
Հայաստանայց լուսաւորչին,
Մախար մաղրաբէն ի բնգ մառչին.
էջմիածին, էջմիածին:

Յ. թ. 80բ. — Առ Սուրբ էջմիածին: 32.

Հայոց պարծանք՝ Արաւոտեան
Սուրբ գաւառին ակրն պատուական.
Լուսովըն երկնից ձեռքերովեալ
Լուսակառոյց խորան անըման:
Մայր հաւատոյ գիտեմ ըզբեզ
Հայաստանայց Սուրբ եկեղեցայ,
Գերապայծառ երկնաւըման՝
Գերսեւեռնի Սուրբ էջմիածին:

Յ. թ. 81ա. — Սրբեկապար քօթեանէմ
Սրբագումար տաճար սիրական.
Թէպէտ յերկրի երեւեթօ,
Բայց ներքապէս համայն վերեական:
Ձի ոչ ունիս յերկրի հաւառար,
Այլ երկնային զՄիածին ձօր,
Տուն և տեղի Տեառն Աստուծոյ.
Մեծ պատուելի Սուրբ էջմիածին:
Անեղ գոյմամբ ուռն ի ձեռին
Իշեալ յերկնից Միածին Որդին,
Տեսանելով արբուն անուն՝
Հայաստանայց Սուրբ Լուսաւորչին:
Ոսկի ուտամբ ուժգին բաղխմամբ
Դողացուցեալ ըզսեղաւորմտս.
Բաւժաւապետի Արքա Հայոց՝
Յոյժ յարգելի Սուրբ էջմիածին:
Անքիւ անհուն զօրացն երկնից՝
Իշեալ ըզնեալ որդւոյն Միածին,
Լուսով լրցեալ դաշտն երջանիկ
Սին լուսեղէն կանգնեալ յերկրի:

- Յ. թ. 81բ. — Կարողիկէ մեզ կառուցեալ,
Անուանելի ի դրանց դժոխաց.
Իւրովն օծեալ գետ անտեան,
Մայր պաշտելի Սուրբ էջմիածին:

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

- Յ. թ. 50ա. — Մանէր աստ սիրելի ընթերցող.
Ձի բանէ իւրաքանչիւր տաղից փոքրիկ,
Տաղարանիս այստրիկ՝
Ի վերայ ձայնին գոյով շինեցեալ՝
Յորժամ ի քի ընթերցանին.
Այնքան համեղ երկին:

Յ. թ. 50բ. — Ձի զանազան հանգէտ և անհան-
գէտ. չափաւորութիւնք նոցին ի վերայ գու-
նոցն վայելչանան:

Նաև եթէ գլխաւոր գոյն նորին ոչ գիտելով՝
այլ ինչ գոյն տացես նմա, ոչ այնքան ճշիւա-
բայլ արտաբերի որպէս իւր իսկական գու-
նովն:

Ձի սոքին այնպիսիք են, որոց բանքն ի վե-
րայ գունոցն են շինեալք, և ոչ գոյնն ի վերայ
բանիցն:

Վասն որոյ պարտիս գիտել զգոյնն և այնու
վարել զբանն, զի համեղ գայցն լսելոյ:

Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ ընդ ձօր և
ընդ Սուրբ Հոգւոյն, փառք յաւիտեանս: Ամէն:

Թ. 80բ.— Ի յայնմ ատուր ահեղին ողորմեա Տէր հոգւոյ իմոյ բազմամեղի:

Յարմար և անյարմար, ի չափ, ի վերջ:

Թ. 87բ.— Եւ ծանիր աստ, ո՛վ սիրելի ընթերցող, զի ոմանք երգեցմունք ի փոքրիկ տաղարանիս թէպէտ ըստ արտաքին կերպին երևին մարմնականք, բայց ըստ ներքին դիտեցմանն համայնքն առ հոգեւորն վերաբերին, և յայտ այնոցիկ է, որք գիտեն զհոգոյն խորհիւ: Զի մի է ճշմարիտ սիրելին և մի է սէրն ճշմարիտ:

Թ. 97բ.— Հարուստ և զմայլեցուցիչ տաղարանիս այսմիկ որ յօրինեցաւ ի գեղափայլ և մաքրափայլ Պաղտասար վարժապետէ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Այս գիրք եղբայր Աղանաս վարժապետին է:

Նստիւ Սուրբ էջմիածնայ Երկանեան ընտանիքի կողմէ: 3—10—62:

Թ. 1բ.— Այս տետրակ տիրացու Բալթայի:

(Նկարված է մի նալ այս էջում):

Թ. 98ա.— Այս տետրակը տիրացու Թուրքայի Պինի (4 հատ):

№ 207

ԳՈՒՇԱԿԱՐԱՆ

Թերթեր՝ 144:— Պրակներ՝ 18, յուրաքանչյուրը 3 թերթից:— Մեծութունը՝ 21,6×18×1,9 սմ.:— Նյութը՝ խոնացած հասարակ թուղթ:— Կազմը՝ լաթակազմ սովորաթուղթ, կոնակը՝ սև կաշի, որի վրա գրված է ոսկեգույն տառերով. «Գուշակ ապագայից»:— Պահպանակներ՝ սկզբից և վերջից մեկական հասարակ բարակ վարդազույն թուղթ:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասույն:— Դատարկ դրերը՝ 139—144:— Տողեր՝ 21:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ նոտագիր:— Զարգացումը՝ շուրջ:— Գրիչը՝ Սարգիս քահանա:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 1841 թ.:— Վայրը՝ Արևմտյան Հայաստանի Ամասիա քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցի:— Մանրությունը՝ 1957 թվականին Մայր Աթոռ Նվեր է ստացել Ստամբուլից՝ Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եսվարը քահանա Պալուանից, փարիզաբնակ Ալբերտ Աշճյանի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Ցուցակ գուշակութեանց, տրուհեալ յերկուս հատորս:

Որ ի նախկին հատորով գրի թարգմանութիւն և մեկնութիւն տաղաչափական բանիւր արարեալ գուշակութեանց Վէյսի էֆէնտի կոչեցեալ Մէվլէվի տէվրիշական կրօնէ՝ հոշակաւորի առն ումեք, որ աստի իբր հարիւր երեսուն ամա յառաջ՝ խօսի վասն զրկանաց և անիրաւութեանց մեծամեծացն տէրութեան թուրքաց, և գուշակէ զառեցումն Ղըրիմայ ի

ձեռանէ նոցա ի մեծէ Եէգաթէրինէ Երկրորդ Օգոստոսի առ Կայսրուհոյ ամենայն Բուստաց: Եւ և ցուցման վասն ժամանակի վերջաւորութեան մահմէտական տէրութեան արտահանամբ ի գրեանց նոցին՝ համեմատ մարգարէական գուշակութեանց այլոց եկեղեցական: Ընտիր անձանց, և այլ զանազան գիտնոց:

Այլ և համառօտ զեկուցմունք աղանդի մահ (թ. 1բ) մէտական տէվրիշականաց, ա ի բացայայտ վերծանելոյ զամենայն միութանից՝ յիշեալ Վէյսիի, որ ի շարունակ տաղաչափութեան իւրում գրի. և յերկրորդու հատորի տեսանի յարմար ասութիւն ինչ ի վերայ բանից Յայտնութեան երանելոյն Յովհաննու, վերաբերելով զնոսա վասն ծագման: Մահմէտի՝ և հետեակաց համար:

Եւ և վասն խանգարման տէրութեան նոցա համակցին նաև սակաւ բանք վասն տեսլեան Սրբոյն Դանիէլի և Սրբոյն Եղեկիէլի:

Աշխատասիրեալ ի Գեղամեան Մարգարէաբիայ հօճենց Երևանցոյ:

Եւ ընծայեալ ի պատիւ Ա՛ ստուծոյ՝ զօրացեալ Մեծի և յաղթող տիեզերակալ կայսերութեան ամենայն Բուստաց:

Յամի Տեառն 1789 և հոկտեմբերի 1:

Ի Սանկ Պետրբուրգ:

Թ. 3բ.— Զեկուցմունք:

Թ. 4բ.— Հատոր Ա.

Թարգմանութիւն և մեկնութիւն գուշակողական տաղաչափ բանից Վէյսի էֆէնտի կոչեցեալ առն հոշակաւորի:

Թ. 45բ.— Հատոր Բ.

Յորում գրի յարմարական ասութիւն ինչ ի վերայ տեսլեան և Յայտնութեան Սրբոյն Յովհաննու աւետարանչի:

Սկսեալ յերկոտասաներորդ գլխոյ այնորիկ տեսլեան մինչև ցվերջ գլխոյն կարի յոյժ համառօտ ասութեամբ, վերաբերելով զբանսրբոյն վասն ծագման Մահմէտի և հետեակաց նորին, և և խանգարման տէրութեանց նոցին:

Եւ նաև սակաւ բանք վասն տեսլեան Սրբոյ մարգարէին Դանիէլի, և վասն մարգարէութեան Սրբոյն Եղեկիէլի:

Աշխատասիրեալ ի Գեղամեան Մարգարէաբիայ հօճենց Երևանցոյ:

Եւ ընծայեալ ի պատիւ Ա՛ ստուծոյ՝ զօրացեալ մեծ և յաղթող կայսերութեան Բուստաց:

Յամի Տեառն 1789 հոկ. Ա.

Ի Սանկ Պետրբուրգ:

Թ. 136ա.— Վերջ: 1809 և մար. 16, ի Սանկ Պետրբուրգ: Ամենախոնարհ ծառայ Մարգարէաբիայ հօճենց:

Թ. 137ա.— Ուտանաւոր.

Բան Առաքել վարդապետի՝ զոր ասացեալ է ի վերայ Կոստանդնուպօլսոյ, և գալստեան

առան փոսնկ ազգին առ ի ազատել զաշարհս Հայաստանեայց:

բոլոր Ֆռանկաց ազգն շարժին, կամօք անմահ բազաւորին.

որ յառաջն զայն սասցին, սուրբ հայրապետք աստուածային:

Պէ՛ք Սուրբ Հոգւովն խօսէին, և զգալոցն պատմէին. առան զայլոյ Ֆռանկ ազգին, ի ժամանակս յաւուս յետին:

Ամենեմեկն անհասարակ, արիական ազգն շարժին, արիարանալ ի միասին, վառին ի սէրն աստուածային:

Եւ այցնեն ծովով և ցամաքաւ, որպէս զաստեղս որք ոչ բռնին.

Եւ որդորելով զամենեւեմն, յաստուածառաք պատեհազմին:

Եւ յայն Ըստամպոյլ քաղաք անուն, ամենագոր կամօք Փրկչին:

Եւ յայն յառաջ համարձակին, և ի բոլոր յաշխարհս սփռին: Եւ յայն յարկին յարեւելից, և կատարեն զամենեւեմն.

Եւ որպէս զառիւծ մըռնելով, ի յանօրէնսն համարձակին: Եւ անուն զքաղաքն Երուսաղէմ, անօրէնութեան Տեառն տեղին.

Եւ յակապատ զարդարեսցնեն, զգոտն Յարութեան գերեզմանին:

Եւ անգի լրումն եմաս նոցին, ըստ հրամանացն Քրիստոսի.

Եւ որպէս ասաց յԱնտարանն, յառաջագոյն Աստուածորդին:

Ք. 137թ.—

Եւ իրաւունքից ազգն ցնծան, յերուսաղէմ սուրբ քաղաքին. Եւ հերանաւսն կարելին, որպէս փոշի անհեռ լինին:

Եւ ամ երանի ժամանակին, որք հանդիպիք համարաւ բարին.

Եւ որպէս յաւուս Սիմէոնին, որ ցանկացաւ տեղեան Փրկչին:

Եւ որք բարձրանայ եղբիւր խաչին, փառօք խաչեալ բազաւորին.

Եւ երեսնոսաց ազգն ամենայն, անհասարակ կործանեսցին: Եւ յերի լինին զօրք Ֆռանկին, որպէս զաւազ յեզր ծովին.

Եւ ի նրաւսն յաղթել նոցին, արիական Ֆռանկ ազգին: Եւ որպէս կայծակն ի յեղէգին, ի յայլազգիսն արձակեսցին.

Եւ հալածեն զազգն տանկին, զի հակառակ են սուրբ խաչին:

Եւ նոցն զՀռոմոց զաշխարհն ամէն, մինչ է Մարք հասանիցեն.

Եւ քակեն զղիաց բնակարան, զանօրինաց ուխտատեղին: Եւ զհաստաւս հասանիցեն, և ի Դաւիթ յառաջեսցեն.

Եւ խորասան մտանիցեն, և գերեսցեն զամենեւեմն: Եւ յաշխարհս ամէն պայծառանայ, ի հաւատացն Քրիստոսի.

Եւ երեսնոսաց ազգն ամենայն, ի յաշխարհէս հալածեսցին: Եւ յեղեղիցին՝ որ անհեռ, ի յամենայն տեղ շինեսցին.

Եւ Երեսնգործեամբն Քրիստոսի, յերկիրս ամէն փառաւորի: Եւ Ազգս հայոց պայծառանայ, զի յայլազգեացն ազաւանցին.

Եւ յերկրեալ ցնծան ամենեւեմն, որպէս յաւուս Լուսաւորին:

Մեծ Տրդատ և Սուրբ Գրիգոր, յորժամ ի Հռոմ քաղաք գնացին,

Միյնանց զաշինս հաստատեսցին, ընտ Կոստանդիանոսի և Սեղրեստոսի:

Ք. 138ա.—

Զորս հարիւր մարդ ի յայն բողին, յԱրշակունեաց Պալատունին.

Ձի մեհացեն և անեսցեն, Ֆռանկ և Հայք միաբանին: Արդ առաջնորդք ետաւ լինին, արիական Ֆռանկ ազգին.

Գայցեն յերկիրս հաստատեսցին, և օգնական մեզ լինիցին:

Անցնեն զգաւառն Արարատեան, որ է տեղիք Լուսաւորչին. Թագաւորին Էջմիածնի, Վաղարշապատ Սուրբ քաղաքին:

Փառք Աստուծոյ Հօրն վերին, և Միածին Որդւոյ Բանին. Հոգւոյն Սրբոյ կենաց տուողին, խաղաղութեանց պարգևողին:

Ինն հարիւր երկու բռնին, Հայաստանայց մեծ տուամարին.

Յոր Ստամպոյլ քաղաքն առին, և զԲրիտանեայս կտտարեսցին:

Եւ Առաքել մեղօք ի լի, լցեալ շարեօք ամենայնի, Յարմարեսցի շարս բանի, վասն Բիւզանդ մեծ քաղաքի:

Եւ ասացն Տէր ողորմի, ինն բազմամեղ Առաքելի, Որ զայս բանս ի շար եղի Կոստանդիանուն մեծ քաղաքի:

Այլ և ծնողաց իմաց բարի, Դուրքու Միլիք և Ներսեսի. Որ զառածնալս մեղաց գերի, ծնան զաւակ ողորմիլի:

Եւ բարունայն իմ Գրիգորի, որ մակաւնաւոր Մերեն կաշի,

Նահաւակին այն ցանկալի, և քաջաբան վարդապետի: Փառք Արարչին ամենայնի, Հօր և Որդւոյն իւր Միածնի, Հոգւոյն շնորհաց պարգևողի, անցեալն, այժմուս,

յապագայի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 138ա.— Գտի զայս ամասնացի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ծերունի Տէր Սարգիս քահանայի ի ձեռս օրինակեցի. 1841 և օգոստոս 10:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 139ա.— Նուէր աստուածակառոյց Միածնաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանին:

Այս գիրքը հայ ժողովուրդի բարեկամ ռուս մեծ յարգութեամբ ապագայի մասին շահեկան տեղեկութիւններ պարունակելուն համար, Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի մասնագէտներուն ուշադրութեան կը յանձնեն:

Սիւրաբ Ս. Կարապետ եկեղեցիի հոգեւոր հովիւ
Շաւարշ Բանեայ Պալատեան

14 յուլիս 1957, Պոլիս:

Ք. 139թ.—A monsieur Albert Achdjian, fondateur du Musée Arménien de France lors de son passage à Istanbul le Révérend Père Poladian, d'Uskudar, prie d'envoyer à Sa Sainteté Vasken I-er, Catholikos de tous les Arméniens du Monde ce manuscrit.

(Շարունակելի)



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

(Սկիզբը տե՛ս սույն Ց-ի 8-րդ էջում)

ՆՈՐԻՆ Ս ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԱԹՈՌՈՒ ՍՐԲՈ ԷԶՄԻԱԾՆԻ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Շնորհապարդ և սիրելի՛ Եղբայր ի Քրիստոս.
 Ստացած ենք Ձեր 5 հունիս 1964 թվակիր
 և 565 թվահամար նամակը:

Նախ և առաջ քաղցր պարտք կզգանք Ձերդ
 Վեհափառության հայտնելու, թե հաստատ հա-
 մույնով և անվերապահ նվիրումով ոգևի-
 լծված ենք մեր ժողովուրդին մեջ ամրացնելու
 և տարածելու եղբայրական սերը, խաղաղու-
 թյունը և համերաշխ ոգին, որ Մեր հոգևորա-
 կանի կոչումն իսկ է և Մեր խորագույն իղծը
 միևնույն ժամանակ: Կհավատանք, որ Սփյուռ-
 քի մերապն հայ ժողովուրդը իր ներկա կյան-
 քին բարգավաճման ու բարօրության, իր ա-
 պագային պայծառության ու երջանկության,
 ինչպես նաև իր ազգային կենսական շահերու
 հետապնդման համար անհրաժեշտորեն պետքն
 ունի ներդաշնակ միացյալ ճիգերու և ան-
 խտրական գործակցության՝ Հայաստանյայց
 Առաքելական Ս. Եկեղեցվո հովանիին ներքև:

Ս. Երուսաղեմի մեջ Մեր պատմական ողջա-
 գուրումը անցնող տարվան հոկտեմբեր 26-ին,
 առավել ևս քաջալերեց և գոտեպնդեց Մեզ
 Մեր ճիգերուն ու ջանքերուն մեջ և Մենք գե-
 րագույն բերկրանքն ու երջանկությունը ունե-
 ցանք՝ ամենուրեք տեսնելով այս նոր ոգիին և
 նոր մթնոլորտին բարիքները:

* «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի օգոստոս—
 սեպտեմբեր միացյալ համարը երբ տպագրվում էր
 արդեն, վերջին պահին ստացվեց Մեծի Տանն Կիլի-
 կիո Ս. Տ. Խորեն Ա Կաթողիկոսի նամակը, ի պատաս-
 խան Ամենայն Հայոց Հայրապետի հուլիս 5 թվակիր
 նամակի:

Հրատարակում ենք ստացված նամակը, ինչպես նաև
 Վեհափառ Հայրապետի օգոստոս 27 թվակիր պատաս-
 խանրը—հմբաբություն «Էջմիածին» ամսագրի:

Բարեբաստիկ այս պայմաններուն ներքև
 խոր եղավ Մեր զգացած ցավը, երբ տեղեկա-
 ցանք Ձեր վերոհիշյալ նամակն այն ոգիին,
 ըմբռնումներուն և տրամադրություններուն
 մասին, որոնք արտահայտություն գտած էին
 անոր մեջ, և որոնք, սակայն, թե՛ ըստ էության
 և թե՛ հայ կյանքի ներկա պայմաններու լույսին
 տակ, անբացատրելի մնացին Մեզի համար:

Սիրելի՛ Վեհափառ Եղբայր.

Նվիրապետական բարձրագույն երկու Ս.
 Աթոռներու միջև ամեն վեճ և ամեն տարա-
 կարծություն վերջ գտած էին 1963 հոկտեմբեր
 26-ին, Ս. Երուսաղեմի մեջ, երկու Հայրապետ-
 ներուս եղբայրական ու սրտագին ողջագու-
 րումովը, և բնականոն փոխհարաբերություն-
 ները վերսկսած ու վերահաստատված էին Ս.
 Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Գահակալ-
 ներուն միջև, սիրո ոգիի և փոխադարձ հար-
 գանքի սկզբունքին վրա: Համերաշխության ու
 եղբայրության բարի շունչ մը սկսած էր թա-
 փանցել ու ներգործել Սփյուռքի հայկական
 տարածքին վրա: Խաղաղության ու հաշտու-
 թյան քաղցր ծայրը սկսած էր ուժգին հնչել և
 գեղեցկորեն արձագանքել բոլոր բարի կամե-
 ցողության տեր և ազնիվ հայերու սրտերուն ու
 հոգիներուն մեջ:

Ուրախության և համատարած գոհունակու-
 թյան այս ջերմ մթնոլորտին հակառակ, գտնը-
 վեցան ոմանք, որոնք նեղ մտածումներե ու
 մտահոգություններե թելադրված, ուլեցին
 խռովել բոլորեն ցանկալի և երկար ատենե ի
 վեր անձկորեն սպասված այս նոր կացությու-
 նը, և անարդար ու անտեղի կերպով ստեղծե-
 ցին խնդիր մը Հարավային Ֆրանսայի հայոց
 թեմին մեջ, մեր միաբաններեն գերաշնորհ Տ.

դատավար սրբական եպիսկոպոսի առաջնորդական պաշտոնավարության առիթով:

Թեմական այս խնդրույն առնչությամբ զանք պարտն ու պատշաճը գրած էինք Ձերդ Օծության Մեր 12 փետրվար 1964 թվակիր 808/64 թվահամար, ինչպես նաև 14 ապրիլ 1964 թվակիր և 229/64 թվահամար կույզ թեմականերով, այն վստահությամբ և հաստատ համոզմամբ, որ Ս. Երուսաղեմի մեջ ստեղծված համագործակցության ոգին հաճախ պիտի հասկցվեր ու պիտի կարգավիճեր հարցը: Եվ ուրախ ենք հայտնելու, վերջերս, Հարավային Ֆրանսայի հայոց թեմին Ալգային կեդրոնական վարչության Արևմտյան Եվրոպայի կաթողիկոսական տարածվիրակ գերաշնորհ Ս. Մերովբե սրբապետ արքեպիսկոպոսի միջև կայացած բարեկամ հարաբերությամբ ու կատարյալ համապայմանությամբ, Մարսելի հարցը միանգամ լուծվելու փակվեցավ, ինչ որ վստահ ենք Ձեզ մեծ ուրախություն պատճառեց:

Արդ, երբ այս ձևով Մարսելի արվեստանորեն ստեղծված խնդիրն ալ կարգադրված է, նորանոր խնդիրներ հարուցանող Ձեր նախկին իսկապես Մեզ անակնկալ կացության մը ժողովուրդը և անկարելի եղավ Մեզի համար անակնալ, թե ի՞նչ օգտակար հետևանքներ ունենալ անոնց այս հանկարծակի հարուցումը մեր ժողովուրդի հոգևոր ու ազգային անհերու տեսանկյունեն դիտված:

Վեհափառ Եղբայր.

Հաջատեղյակ եք արդեն, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունը անկախ Աթոռն է այսօր, ինչպես եղած է անցյալին: Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունները իրարու նկատմամբ հավասարադիր Աթոռներ եղած են միշտ և են ներկայիս: Սինի միևնույն իրավունքներն ու առանձնաբերությունները՝ լուրաբանչուրը իրեն հատուկ լրավասության սահմաններեն ներս բնակաբար: Հսած ենք հաճախ և անգամ մը ևս կրկնենք, թե Ս. Էջմիածնի Գահակալը կնկառենք առաջինն ի հավասարս՝ պատվո նախաժեռարության իմաստով:

Սխալ հասկացողության հետևանք է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունը նկատել «մասնավոր» Աթոռ ի շարս Ս. Երուսաղեմի և Ս. Պոլսոյ Պատրիարքությանց, որոնք ի հոգեկրոս ենթակա են Ս. Էջմիածնին: Պատմականորեն, կանոնականորեն և դարերու ավանդույթով նվիրականացած այս սկզբունքը կենսական նշանակություն և բարերար արդյունք ունեցած է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և Հայ Ժողովուրդի կյանքին մեջ անցյալին, և պետք է որ ամուր ու անխախտ պահվի ու պահպանվի նաև ներկայիս: Անգամ մը ևս կուզենք շեշտել Մեր հաստատ համո-

զումը, որ Կաթողիկոսական անկախ կույզ Աթոռներու գոյությունը ոչ մեկ ձևով կհակասե Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո միության գերագույն ու անփոփոխելի սկզբունքին, որ շատ ավելի ամուր և հզոր հիմքեր ունի, քան վարչական միապետության այն ձևը, որ վերջերս ոմանց մտքին մեջ սկսած է տեղ գտնել:

Մենք կհավատանք, որ երկու Կաթողիկոսությունները կան ու կմնան իրարու գործակիցներ և իրարու լրացուցիչներ, ինչպես եղած են անցյալ դարերուն, մեր պատմության մեջ: Ս. Երուսաղեմի մեջ Մեր ողջագուրումը, և այդ առիթով Մեր կատարած պաշտոնական և հրապարակային հայտարարությունները ավելի ևս ամրացուցին այս սկզբունքը մեր ժողովուրդի գիտակցության մեջ, և Մեր ակնկալությունն է, որ ան տեղ գտնե հետզհետե մեր ժողովուրդի կյանքին մեջ ամենուրեք և գործնականորեն:

Ուստի, կուզենք հայտնել Ձերդ Սրբության, որ արդար և օգտակար չէ այն վերաբերումը, որ վերջերս անգամ մը ևս ցույց կտրվի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության դիրքին նկատմամբ: Կիլիկյան մեր կաթողիկոսական Աթոռը ազգային թե միջեկեղեցական կյանքի մեջ ունի և միշտ պիտի ունենա իր իրավական անկախ դիրքն ու գործունեությունը: Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետին պատվո նախաժեռարության դիրքը միշտ կհարգվի և պետք է որ հարգվի, առանց սակայն վայն ըմբռնելու իրավական գերիշխանության իմաստով: Որևէ փորձ որ կատարվի Կիլիկիոյ Ս. Աթոռին անկախության և իշխանության պատմական ու իրավական գոյավիճակը խախտելու նպատակով, Մենք, մեր Աթոռին դարավոր ավանդութենեն ժառանգված և Հայ Եկեղեցվո ու հայ ժողովուրդի ներկա կյանքի գերագույն շահերեն թելադրված, պարտականություն կնկատենք Մեզի ընդդիմանալ նման արարքներու և պաշտպան կանգնիլ մեր Ս. Աթոռի դիրքին ու դերին:

Սիրելի Եղբայր ի Քրիստոս.

Այսու ջերմորեն պիտի խնդրենք Ձերդ Սրբութենեն, որ մղված Հայաստանյայց Եկեղեցվո պայծառության ու բարգավաճման վսեմ իդեալեն, առաջնորդված հայ ժողովուրդի գերագույն շահերեն ու ազգապահպանման նվիրական առաքելութենեն, Ձեր հայրապետական հեղինակավոր և վճռական արի կեցվածքով արգելք հանդիսանաք Կիլիկյան Ս. Աթոռին հանդեպ խտրական ու ժխտական վերաբերումի մը որդեգրումին: Մեր խորագույն և սրտագին բաղձանքն է, որ հայ ժողովուրդը, ամուր կառչած Երուսաղեմի ողջագուրման սուրբ ոգին, համահայկական եղբայրությամբ և ներդաշնակ համերաշխ գործակցությամբ հառաջ տանի իր գոյատևման և ստեղծագործու-

թյան պատմական առաքելությունը Սփյուռքի տարածքին վրա, առանց անհարկի վեճերու և ջլատիչ ընդդիմադիր մրցակցություններու:

Պատմության մեջ մեծ պիտի ըլլա Ձեր դերը, եթե հետևելով այն լայնախոհ ոգիին, զոր այնքան զեղեցկորեն հայտնաբերեցիք Ս. Երուսաղեմի մեջ, Ձեզի պորափզ և օժանդակ նկատեք Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Ս. Աթոռը: Վստահ եղեք, Վեհափառ Եղբայր, որ Հայաստանյայց Եկեղեցվո և հայ ժողովուրդի ներկա կյանքին համար բացարձակ անհրաժեշտություն է Կիլիկիո Ս. Աթոռին անկախ գործունեությունը: Մեզի համար խղճի պարտք է, առաջի Աստուծո և առաջի ժողովրդյան մերում, ընդառաջել այն մեծ ու փրկարար առաքելության, զոր մեր ժողովուրդը Սփյուռքի մեջ վստահած է մեր Ս. Աթոռին՝ հուսալից ակընկալություններով և խանդավառ նվիրումով: Ոչ մեկ վարկյան իսկ Ձեր մտքեն թող անցնի այն գաղափարը, թե այս Աթոռը կուզե նվազեցնել արժեքն ու իմացը Ս. Էջմիածնի: Մենք մեր եպիսկոպոսական դասով, միաբանական ուխտով, ազգային-եկեղեցական ժողովականությամբ, Կաթողիկոսարանես ներս թե Մեր թեմերուն մեջ, խորունկ ու անջնջելի սեր ու հարգանք ունինք Ս. Էջմիածնի հանդեպ:

Կիսակենք Մեր այս նամակը, հայտնելով Մեր ջերմ հավատքն ու հույսը, որ փութովերջ կգտնեն այն տրամադրությունները, որոնք վերջերս արտահայտվեցան Մեր Ս. Աթոռին նկատմամբ:

Թող բացված խաղաղության շրջանը տևե ընդ երկար և ըլլա անվերջ, թող խորանա ծավալի ամենուրեք սիրո, եղբայրության և համերաշխության ոգին, ի շինություն մեր պանծալի Հայաստանյայց Եկեղեցվույն և ի բարգավաճումն մեր պաշտելի ու պատվական հայ ժողովրդյան:

Ջերմեռանդն կաղոթենք առ ամենաբարին Աստված, որ պահե ու պահպանե Հայաստանյայց Ս. Եկեղեցին և Իր փոքրիկ հոտը ի խնամամարդասիրության լուրո, և Ձեզի պարզևե երջանկալից կյանք և եկեղեցանվեր բեղուն գործունեություն:

Մնամ եղբայրական սիրով և ջերմ ողջագուրանք, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

5 օգոստոս 1964

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆ

Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Շնորհակալող Եղբայր.

Ամսույս 20-ին Մեր ձեռքը հասավ Ձեր 5 օգոստոս 1964 թվակիր նամակը, ի պատասխան Մեր 5 հունիս 1964 թվակիր գրության, ուղղյալ Ձերդ Սրբության, որով կցանկայինք հստակված տեսնել կենսական հարցերը մեր եկեղեցական կյանքի վերաբերյալ:

Կարդալով Ձեր նամակը սակայն, տրամաբանք նկատեցինք, թե Մեր առաջադրած հարցերը հստակված տեսնելու իղձը հեռու է իրագործվել: Կարծեք Ձերդ Վեհափառությունը ծանոթացած չըլլար Մեր 14 մարտ և 5 հունիս թվակիր նամակներու բովանդակության: Մեր նամակներով Ձերդ Սրբության ներկայացված հարցերը գրեթե անպատասխան մնացած են:

ա. Մեր 5 հունիս թվակիր գրությամբ Ձեզի դիմած էինք ութ հարցերով: Ուրեմն հինգ հարցերուն ոչ մեկ պատասխան չեք տված: Անպատասխան մնացած այդ հինգ հարցերն են՝ Սփյուռքի մեր եկեղեցիները և հավատացյալ ժողովուրդը Մայր Աթոռն քաժնելու և Անթիլիասի իշխանության ենթարկելու քաղաքականությունը, հունահայ թեմի հարցը, պարսկահայ թեմերու հարցը, Միացյալ Նահանգներու

անջատյալ թեմի հարցը և Ձերդ Սրբության ուղղած Մեր եղբայրական հրավերը՝ Մայր Աթոռ ուխտի գալու:

բ. Մեր 5 հունիս թվակիր նամակի առաջին հարցին կպատասխանեք կիսով չափ, հայտնելու համար միայն Ձեր տեսակետը, թե Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռը և Անթիլիասի ավերումն 34 տարի առաջ հաստատված Կիլիկյան Աթոռը «հավասարալոր» են, ինչ որ բնավ չի համաձայնիր պատմական իրողության մեր եկեղեցվո կանոնական ըմբռնումներուն և հայ հավատացյալ ժողովուրդի կրոնական գիտակցության հետ: Իսկ այն պարագային, որ վերջերս սկսած եք «Ամենայն Հայոց»-ի տիտղոսը ավելցնել Ձեր անունին և Ամենայն Հայոց Հայրապետը կոչել «Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոս», բնավ չեք անդադառնար:

գ. Կպատասխանեք Մարսիլիո վերաբերյալ հարցին, հայտարարելու համար պարզապես, թե «Մարսիլիո հարցը միանգամ ընդմիջտ փակված հարց մըն է», ինչ որ հեռու է իրականության համապատասխան ըլլալ: Այդ ցույց կուտան վերջին երկու ամիսներուն ընթացքին Մեր ստացած գրությունները կաթո-

կիկոսական պատվիրակ գերաշնորհ Ս. Սերով-
նե արքեպիսկոպոսն և Մարսիլիո Մայր Եկե-
ղեցվո վարչութենն: Գերաշնորհ Ս. Սերովնե
արքեպիսկոպոս ի սեր խաղաղության համա-
այնած է միայն, որ Մարսիլիո մեջ կազմված
25 հարգարժան ազգայիններն բաղկացած,
կորինավոր հանգամանք չունեցող մարմինը
միկատվի «առժամյա մարմին», որուն պարտա-
ստությունը ըլլա մեկ տարվան ընթացքին
կազմակերպել ընտրություններ, Հարավային
Եվրոպական օժտելու համար օրինավոր թեմա-
պան մարմիններով և թեմակալ առաջնորդով:
Սակայն այդ «առժամյա մարմինը» փաստորեն
մենթարկվիր հայրապետական պատվիրակի
այս կարգադրության և ինքզինքը կհռչակե
հեկեղորոնական վարչություն» ապօրեն կերպով:
Հնական պիտի ըլլար նաև, որ գերաշնորհ Ս.
Արտավազ եպիսկոպոս վերադառնար Անթի-
պիաս, և ընտրություններն հետո, սպասե-
րթինավոր թեմական իշխանությամբ որոշումին
և Մեր ճանաչման և օրհնության, կարողանալ
պաշտոնավարելու համար Էջմիածնի հոգևոր
իշխանության ենթակա թեմի մը մեջ:

դ. Կալատասխանք նաև Մեր 5 հունիս նա-
մակի է հարցին, մերժելու համար Մեր առա-
ջարկությունը, որ միջեկեղեցական համագու-
նարներուն ու հանդիպումներուն, Հայ Եկեղե-
ցին իր նվիրապետական Աթոռներով ներկա-
յանա իբրև մեկ Եկեղեցի, մեկ և անբաժան
պատվիրակությամբ, ինչ որ թե՛ կանոնական,
թե՛ պատմական տեսակետն բնական է, ուղիղ
է և օգտակար: Այս կացությամբ դուպն չափով
մը իսկ չի խախտվիր Ձեր Աթոռին վարչա-կազ-
մակերպչական անկախությունը և կարծիք-տե-
սակետ ունենալու իրավունքը, ճիշտ այնպես,
ինչպես Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո հայ
Պատրիարքական Աթոռները ոչինչ չեն կոր-
սնցներ իրենց վարչա-կազմակերպչական ան-
կախութենն և գործելու ապաստութենն, մնա-
լով Հայ Եկեղեցվո հոգևոր միության մեջ, Հա-
յոց Հնդհանրական Հայրապետության օրհնու-
թյան և բարոյական հեղինակության ներքև:
Մենք այս առթիվ կհաստատենք Մեր 18 օգոս-
տոս 1964 թվակիր նամակը Ձեզի ուղղյալ,
Ադոնիս-Աբեբայի միջեկեղեցական ժողովին
Հայ Եկեղեցվո մասնակցության առնչությամբ,
սպասելով Ձեր դրական պատասխանին:

Ահավասիկ Մեր հաստատումները Ձեր 5
օգոստոս 1964 թվակիր գրության ընթերցու-
մեն հետո: Հետպետե կպարզվի ահա, թե Ձեր
Աթոռն ներս տիրական են հին մտայնությունը
և գործելակերպը նաև հոկտեմբեր 26-են հե-
տո, այս անգամ սակայն ողջագուրումի տա-
րակին ներքև:

Այդ կապացուցեն նաև վերջին ամիսներուն
Ձեր հայտարարությունները, կոնդակները և
«Հասկ»-ի որոշ հոդվածները:

Մեր ձեռքի տակ ունինք Ձեր վերջին պաշ-
տոնական հայտարարությունները՝ ա- եզիպ-
տական «Իմած» շաբաթաթերթին, 16 մայիս
1964-ին, որ երեք անգամ Մեր անունը կհիշեք
և ամեն անգամ կշեշտեք «Նորհրդային Հա-
յաստան գտնվող Էջմիածնա Կաթողիկոս»
(«Հուսաբեր», 19 մայիս 1964, թիվ 39) և
բ. Անթիպիասի Մայր Տաճարին մեջ, 17 մայիս
1964-ին, Լիբանանի վսեմաշուք վարչապետի
ներկայության, ուր ի միջի այլոց կհայտարա-
րեք, թե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական
Աթոռը «ստանձնած է հոգևոր առաջնորդու-
թյունը մոտավորապես մեկ միլիոն հայ ժողո-
վուրդի կազմակերպուն ցոված աշխարհի չորս
ծագերուն վրա» («Ազդակ», 19 մայիս 1964):

Ուրեմն, վերև հիշված պարագաները կուզան
նույնպես վկայելու, թե Ձեր Աթոռն ներս.կտի-
րեն ոչ միայն մինչ-ողջագուրումի մտայնու-
թյունն ու գործելակերպը, այլ ողջագուրումն
հետո նոր ոտնձգություններ, նոր ոչ-օրինական
արտահայտություններ և Մայր Աթոռիս հան-
դես ոչ բարեկամական նոր երևույթներ կորսե-
վորվին հրապարակավ և պաշտոնապես:

Ձեր անդրանիկ կոնդակով, 12 հոկտեմբեր
1963 թվակիր, ի միջի այլոց կհայտարարեիք.
«Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Ս.
Աթոռը, հաստատված Լիբանանի գեղածիծաղ
այս ամբարներ, որպես ազգային և հոգևոր կեղ-
րոն, կենսական դեր և փրկարար գործ ունի
կատարելիք աշխարհի ներկա պայմաններուն
մեջ և կոչված է Սփյուռքի հայության հոգևոր
ու ազգային կյանքի բարգավաճման ու վերա-
ծաղկման գլխավոր գործոն ուժը հանդիսանա-
լու: Կիլիկյան Ս. Աթոռը լոկ տեղական հան-
գամանքով սահմանափակված Աթոռ մը չէ
այլևա: Անոր առջև բացված են գործունեու-
թյան և ծառայության լայն հորիզոններ»,—ինչ
որ բնորոշ էր Անթիպիասյան մտածելակերպին
և գործելակերպին մինչև հոկտեմբեր 26-ը:
Բայց այժմ բացահայտ կերպով կտեսնենք, թե
նույն ոգին կշարունակե բնորոշ ու տիրական
մնալ Ձեր գործունեության և Ձեր հայտարա-
րությանց մեջ նաև հոկտեմբեր 26-են հետո:
Հետևաբար, ո՞ր մնաց ողջագուրումի ոգին,
անցյալը մոռնալու և նոր ճանապարհ բանալու
Ձեր և Մեր իղձը:

Հոկտեմբեր 26-են առաջ, Սփյուռքի մեր թե-
մերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն բաժնելու և
Կիլիկյան Աթոռին միացնելու քաղաքականու-
թյան դեմ եղած բոլոր բողոքներուն և առար-
կություններուն, Անթիպիաս կպատասխանե-
ր«Թող Ս. Էջմիածինը ճանչնա Կիլիկիո Կաթո-
ղիկոսի հանգամանքը և ամեն բան կկարգա-
դրվի»: Մեր ձեռքի տակ ունինք որոշ ազգա-
յիններու ուղղյալ հանգուցյալ Զարեհ Կաթողի-
կոսի և Ձեր ձեռագիր մի քանի նամակներու

լուսապատճենները, նման արտահայտություններով:

Սակայն այժմ, հոկտեմբեր 26-ն հետո, Կիլիկյան Աթոռը նույն բաղադրականությունը կշարունակե գործնականին մեջ, և ավելի բացահայտ կերպով, և այդ բոլորը իբր թե հանուն ողջագուրումի ոգիի ամրապնդման և ի շահ և ի սեր Ս. Էջմիածնի: Ի վերջո, մեր խոսքին և գործին մեջ համաձայնություն մը պիտի ըլլա, թե ոչ: Խոսքերը հորինված են իրական կացությունները և իրական մեր մտածումները և գործերը ճշգրիտ բնորոշելու համար, այլապես խոսքերը կմնան մեռյալ և մենք կդառնանք «խոսքի վաճառականներ» (Բ Կորնթ. Բ 17):

Ուրեմն, Երուսաղեմի մեր ողջագուրումը և հաշտությունը, փոխանակ պայման և հիմունք հանդիսանալու, որպեսզի վերջ գտնեն անօրինականությունները և ոտնձգությունները, ինչ որ բնական կերպով իրավունք ունեն ակնկալելու Մայր Աթոռը և հայ ժողովուրդը, այժմ կտեսնենք, թե ընդհակառակը, այդ ողջագուրումը և հաշտությունը Անթիլիաս կձգտի պայման և հիմունք ծառայեցնել նոր անօրինականություններու և ոտնձգություններու, այսպիսով արդարացնելով այն թերահավատությունը և բոլոր վերապահումները, որոնք արտահայտվեցան ումանց կողմէ Երուսաղեմի ողջագուրումի առթիվ:

Դուք Ձեր 5 օգոստոս թվակիրով արդարորեն կանկալեք, որպեսզի հարգվին Ձեր Աթոռին առաքելությունը, իրավասությունները և իշխանության սահմանները, և կավելցնեք ալ, թե «որևէ փորձ որ կատարվի Կիլիկիո Ս. Աթոռին անկախության գոյավիճակը խախտելու նպատակով, Մենք մեր Աթոռին դարավոր ավանդութենեն ժառանգած և Հայ Եկեղեցվո ու հայ ժողովուրդի ներկա կյանքի գերագույն շահերեն թելադրված, պարտականություն կնկատենք Մեզի ընդդիմանալ նման արարքներու և պաշտպան կանգնիլ մեր Ս. Աթոռի դիրքին ու դերին»:

Եթե Դուք այդ կանկալեք և այդ կգտնեք արդար ի խնդիր Անթիլիասի Ձեր Աթոռի իրական պաշտպանության, ինչո՞ւ արդյոք չեք կամենար Մեզ հասկնալ, երբ նույն արդար ակնկալությունը ունիք Մենք, ի պաշտպանություն Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռին:

Նույն Ձեր նամակին մեջ, խոսելով մեր նվիրապետական Աթոռներու իրավունքներու և առանձնաշնորհումներու մասին, լրեսք. «յուրաքանչյուրը իրեն հատուկ իրավասության սահմաններեն ներս բնականաբար»: Բայց, ի սեր Աստուծո, ճիշտ այդ է որ Մենք Ձեզմեն և Ձեր Աթոռեն կպահանջենք, որ հարգվին յուրաքանչյուրին հատուկ իրավասության սահմանները:

Բայց այլևս ակներև է և հանրահայտ, թե խախտելով Հայ Եկեղեցվո կանոնները և Աթոռներու միջև իրավասության սահմանները, Անթիլիաս կձգտի արտասահմանի հայ հավատացյալ ժողովուրդը բաժնել իր բազմադարյան պատմական հոգևոր կեդրոն Ս. Էջմիածնեն և միացնել իր Աթոռին: Կձգտի բաժնել Հայ Եկեղեցին երկու անջատ հատվածներու, երկու առանձին գլուխներով: Կհետապնդե հետպնդե գրավել Մեր իշխանության ներքև գտնվող թեմերը և եկեղեցիները, ստանձնելու համար արտասահմանի Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի առաջնորդությունը:

Արդ, ի՞նչ կկարծեք, սիրելի՜ Եղբայր, դուք Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը և որևէ Ամենայն Հայոց Հայրապետ երեկիցե կրնա՞ն համաձայնիլ նման քայլաքայլ ծրագրի գործադրության: Եվ արդյոք հայ հավատացյալ ժողովուրդը ինքը, ի Հայաստան և սփյուռս աշխարհի, երեկիցե կրնա՞ն հոժարիլ նման հողոտման և արմատախլման: Մենք չենք հավատար: Մեր հոգին կվկայե, թե այդ անհնար բան է, այժմ և միշտ:

Իբրև Հայոց Ընդհանրական Հայրապետ, Աստուծո և մեր ժողովուրդի առաջ, Մեր խղճի պարտքն է պաշտպանել Ս. Էջմիածինը և անոր պատմական առաքելությունը հոգևոր-ազգային յմաստով: Ս. Էջմիածին մեր «ամեն բանե վեր»-ն է: Չկա ավելի մեծ պատիվ, քան ծառայել Ս. Էջմիածնին, զորացնել ու փառավորել պայն և բարձր ու հզոր հնչեցնել անոր նվիրական ծայրը համայն հայ հավատացյալ ժողովուրդի մեջ: «Պաշտպանել Ս. Էջմիածնի շահերը կնշանակե պաշտպանել հայ ժողովուրդի շահերը»,—ինչպես արդար հուշումով կգրեք գրագետ Համաստեղ 1957-ին, Մեզի ուղղյալ իր սրտացավ նամակին մեջ:

Մենք, հոգեկան անփոխարինելի մխթարության զգացումով գոտեպնդված, Մեր մտածումի և զգացումի բովանդակ ուժերով, սիրով ու ոգևորությամբ պիտի պաշտպանենք հավերժական Ս. Էջմիածինը: Եվ վստահ ենք, թե Հայ Եկեղեցվո բոլոր ուխտապահ սպասավորները և համայն հայության հոգին Մեզի նեցուկ կկանգնին և մարտակից:

Ինչպես նկատած պիտի ըլլաք անշուշտ, Մեր նախորդ նամակներուն մեջ ևս, հստակ ու ցայտուն կերպով կդրսևորվեն Մեր այս պարունները և ոգին, թե արտասահմանի պանդուխտ հայ ժողովուրդը պետք է հոգեպես անալալ կերպով կապված մնա Ս. Էջմիածնին: Նախ՝ որովհետև Ս. Էջմիածինը, իբրև Փրկչի Իջման տեղ, պատմական օրրանն է ու մոտ երկհազարամյա կեդրոնը մեր քրիստոնեական հավատքին ու Հայաստանյայց Եկեղեցիին, և երկրորդ՝ որովհետև Ս. Էջմիածինը խարսխված է Հայաստանի Մայր Հողի վրա, հայ ժողո-

վորդի մայր վանգվածի ծոցին մեջ: Ս. Էջմիածինը անփոխարինելի է և անփոխադրելի: Ընչու այնպես, ինչպես Արարատը, ինչպես ինքը Մայր Հողը հայկական: Դուք կարող եք Մեր այս ոգին ու այս ապրումներուն հաղորդակից չըլլալ, Ձեր մտածումներուն և Ձեր գործերուն տերն ու պատասխանատուն Դուք եք, սակայն կխորհինք, թե Մեզի հետ համաձայն պիտի ըլլաք, որ Մենք տարբեր կերպ չենք կրնար և երբեք պիտի չկրնանք ոչ մտածել և ոչ ալ գործել:

Անհնար բան է, որ Հայաստանի Մայր Հողի վրա հաստատված, Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետական Մայր Աթոռի վրա գտնվող որևէ հայրապետ տարբեր կերպ մտածե ու գործե: Այդ ճշմարիտ եղած է և է բոլոր ժամանակներու համար, անկախ քաղաքական իրադրություններէն և իրադարձություններէն:

Մենք հոգևորականներս հեռու պետք է մնանք քաղաքական հակամարտությանց ասպարեզէն: Մենք ուր և ինչ պայմաններու մեջ ալ գտնվինք, անհրաժեշտորեն պետք չէ վերաբերմունք ճշտենք այս կամ այն քաղաքական գաղափարախոսության, այս կամ այն պետական իրավակարգի նկատմամբ: Նման վերաբերմունք ընդգրկել, Եկեղեցիի և հոգևորականի համար կնշանակե ժխտել իր հոգևոր առաքելությունն իսկ: Ձե՞ք նկատեք, թե մանավանդ վերջին տարիներու ընթացքին, այս է հստակ ուղղությունը աշխարհի գրեթե բոլոր մեծ ու փոքր եկեղեցիներուն: Առավել ևս ուղիղ և կենսական է այս ոգին ի սփյուռս աշխարհի բազմաթիվ երկիրներու մեջ գործող հայ եկեղեցիներուն և հոգևորականներուն համար:

Մենք, երբեք, որևէ քաղաքական բնույթ կրող դատում չենք թույլ տված Մեզի այս կամ այն երկրի վարչաձևի կամ գաղափարախոսության նկատմամբ: Եվ այդ ոգին պահանջած ենք մեր բոլոր միաբաններէն, մեր բոլոր գործակիցներէն: Ահա այդպիսի կեցվածք և այդպիսի կողմնորոշում կսպասենք նաև Ձերդ Սրբութենէն և Ձեր միաբաններէն: Միայն այդպես է, որ Հայ Եկեղեցին և հայ հոգևորականը պիտի կարողանան իրենց սիրո և խաղաղության և ազգային համերաշխության առաքելությունը կատարել մեր ժողովուրդի կյանքին մեջ:

Ահա թե ինչո՞ւ ուղիղ և արդար չենք գտներ Ձեր լուրջությունը Մայր Աթոռ և Մայր Հայրենիք ուխտի գալու Մեր եղբայրական հրավերին

նկատմամբ: Ուղիղ և արդար չենք գտներ Ձեր միաբաններէն շատերուն նույն վերաբերմունքը, ինչպես, օրինակ, գերաշնորհ Ս. Արտավազ եպիսկոպոսին, որ ժխտական պատասխան տված է տիար Արծրունի Ջրբաշյանին, որ Մարտիկի Մայր Եկեղեցվո վարչության անունով Նորին Սրբապետության առաջարկած է ուխտի երթալ Ս. Էջմիածին և ներկայանալ Ամենայն Հայոց Հայրապետին, Անոր օրհնությունը առնելու համար: Ինչպե՞ս բացատրել այս երևույթը:

Այստեղ Մեր գրիչը կանգ կառնե: Սիրելի՛ եղբայր, կխորհինք, թե արդեն շատ իսկ են Մեր գրածները: Համենայն դեպս ավելի քան բավարար, դրսևորելու համար Մեր ապրումները, Մեր մտահոգությունները, Մեր իղձերը: Եվ վստահ եղեք, թե նույնիսկ եթե դառնության և վրդովումի արտահայտություններ կունենանք, այդ անոր համար է, որ Անթիլիասի որդեգրած ուղղության մեջ կտեսնենք ապագա մահացու վտանգ Սփյուռքի պանդուխտ հայության հոգևոր-ազգային պահպանման, միասնության և խաղաղության դեմ:

Մենք կուզենք տակավին վերջին հույս մը սնուցանել, թե պիտի վերադառնաք Երուսաղեմի մեր ողջագուրումի ոգին, ոչ միայն բանիվ, այլ նաև գործով, միասնական ճիգերով վերահաստատելու համար մեր եկեղեցական կյանքին մեջ օրինականությունը, անկեղծ եղբայրությունը և շինարար գործակցությունը, առաջնորդված մեր Ս. Եկեղեցվո բազմադարյան կանոններով, ավանդություններով և ըմբռնումներով, և մեր ժողովուրդի իրավ ու տե՛վական շահերով: Մտածենք ապագայի մասին: Մտածենք, թե ի՞նչպես պիտի դատե հայ ժողովուրդը մեր այսօրվան գործերը, հարյուր տարի հետո:

Եվ հետևինք Պողոս առաքյալի անսուտ պատգամին, որ կըսե մեզի ամենուս. «Յիշեցէք վառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ վրանն Աստուծոյ. հայեցեալք յես զնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7):

Կմաղթենք Ձերդ Սրբության լիակատար քաջամողջություն և կհղենք Ձեզի Մեր եղբայրական սիրո ողջույնը:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

27 օգոստոս 1964

